

ՎԱՅԿԱՆ ԲՎՅԲՈՒՐՆՅԱՆ

**ԱՏԵԾԱԾԳՈՒ ԱՐԵՏ ՏԵՐՏԵՐՅԱԾԻ
(ՀԱՉԱՐՁՈՐԻՔԵՏՈՒ)**

«ՊԱՏԱՐԱԳԻՐՔԸ»

(«ՀԱԾԳԻՏԱԳԻՐՔԸ»)

ՈՐՊԵՆԱ ԱԿՉՔԵԱՊՐՅՈՒՐ

**XVII-XVIII ԴԱՐԵՐԻ ԻՐԱԾԻ ԵՎ
ԻՐԱԾԱՀԱՅՈՒԹՅԱԾ ՊԱՏԱՐՈՒԹՅԱԾ**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

**ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵՐԵՅ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ
(ՀԱԶԱՐՁՐԻԲԵՅՈՒ)
«ՊԱՏՄԱԳԻՐՔԸ» («ՀԱՆԳԻՏԱԳԻՐՔԸ»)
ՈՐՊԵՍ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ
XVII-XVIII ԴԱՐԵՐԻ ԻՐԱՆԻ ԵՎ
ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ**

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2020**

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

Բ 260

*Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ միջազգային
հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհուրդը:*

Վահան Բայբուրդյան

Բ 260 Ստեփաննոս Երեց Տերտերյանի (Հազարչրիբեցու) «Պատմագիրքը» («Հանգիտագիրքը»)՝ որպես սկզբնաղբյուր XVII-XVIII դարերի Իրանի և իրանահայության պատմության/Վ. Բայբուրդյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2020, 124 էջ:

Ընթերցողին է ներկայացվում ուշ միջնադարի պատմիչ Ստեփաննոս Երեցի երկը, որը Իրանի պատմության ուսումնասիրության համար բացառիկ կարևոր սկզբնաղբյուր է:

Այն հասցեագրված է պատմաբաններին, արևելագետներին, հայ և իրանական ժողովուրդների պատմությամբ հետաքրքրվողներին և ընթերցող լայն շրջաններին:

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8084-2430-2

© ԵՊՀ հրատ., 2020

© Բայբուրդյան Վ., 2020

Ստեփաննոս Երեց Տերտերյանը (Հագարջրիբեցին) և նրա «Պատմագիրքը» («Հանգիտագիրքը»)

Ուշ միջնադարի և նոր դարաշրջանի Իրանի պատմության ուսումնասիրության համար բացառիկ կարևոր նշանակություն ունեն հայկական բազմաբովանդակ և հարուստ աղբյուրները: Դրանց արժեքը ոչ միայն այդ երկրի պատմության առանձին հարցերի լուսաբանման համար եզակիության մեջ է, այլև թերևս առաջին հերթին, փաստերի հավաստիության մեջ: Գիտահամեմատական եղանակով կատարված բազմաթիվ ուսումնասիրությունները գիտնականներին հանգեցրել են այն համոզման, որ հայկական աղբյուրների ճնշող մեծամասնությունը արժանահավատ է և միանգամայն վստահելի:

Իրանի պատմությանը վերաբերող հայկական աղբյուրների կարևորությունը այն է, որ դրանք գերծ են պարսկական ներքողագրական պատմագրությանը բնորոշ թերություններից ու արատներից, ինչպես նաև շեշտված կողմնակալությունից: Պատահական չէ, որ պարսիկ անվանի պատմաբան Սայիդ Նաֆիսին գտնում է, որ Իրանի ամբողջական պատմությունը չի կարող գրվել առանց հայկական աղբյուրների:

XVI դարը հայ իրականության մեջ, ի տարբերություն նախորդ և հետագա դարերի, խիստ ամուլ է պատմագիտական աշխատություններով: Այդ հարյուրամյակի հայկական աղբյուրները սահմանափակվում են լոկ մի շարք մանր ժամանակագրություններով և ձեռագրերի հիշատակարաններով, սակայն, այնուամենայնիվ, այդ սակավ աղբյուրները ևս ինչ-որ չափով լրացնում են այն բացը, որ նկատվում է իրանական աղբյուրներում: Մինչդեռ XVII դարը հայկական իրականության մեջ կարուկ կերպով տարբերվում է իր նախորդից աղբյուրների հարստությամբ ու առատությամբ: Այդ հարյուրամյակի քառասնական թվականներից Հայաստանում սկսված նոր ուսումնալուսավորչական շարժման պայմաններում ստեղծվեցին մի շարք պատմագիտական աշխատություններ, որոնցում, զրեթե առանց բացառության, հեղինակները անդրադառնում են նաև Իրանի պատմության տարբեր հարցերին:

XVII դարի հայ պատմագրության ամենակարկառուն դեմքը, անշուշտ, Առաքել Դավրիժեցին է, որն իր «Պատմության»¹ մեջ շարադրում է 1601-1662 թվականներն ընդգրկող դարաշրջանը: Թեև նրա աշխատությունը նվիրված է Հայաստանի պատմությանը, սակայն նա պատմական լայն ընդհանրացումներ է կատարում նաև հարևան երկրների՝ հատկապես Իրանի և Թուրքիայի վերաբերյալ: Նրա երկը համարվում է լավագույն աղբյուր Իրանի XVII դարի պատմության համար:

Իրանի քաղաքական կյանքի, աշխարհագրության, տնտեսության, ազգագրության, կենցաղի, իրանահայ գաղութի ու գաղթօջախների և մի շարք այլ հարցերի մասին ուշագրավ տեղեկություններ են պարունակվում նաև XVII դարի պատմիչներ Գրիգոր Դարանաղցու (Կամախեցու) «Ժամանակագրություն»²-ում, Չաքարիա Քանաքեռցու «Պատմագրություն»³-ում, Չաքարիա Ագուլեցու «Օրագրություն»⁴-ում, Ավգուստինոս Բաջեցու «Ճանապարհորդություն»⁵-ում, XVII դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում⁶ և այլն:

XVII դարում Իրանում տեղի ունեցած վերելքը դարավերջին և համարյա ողջ XVII դարի ընթացքում փոխարինվեց տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի անկումով: Երկրում ծայր առան չդադարող ավատական երկպառակություններ, շեշտակի անկում ապրեցին առևտուրը, արհեստները, մշակութային կյանքում սկսվեց երկարատև լճացում: Երկրի ընդհանուր անկումը բացասաբար անդրադարձավ նրա պատմագրության վրա: Թեև այդ հարյուրամյակում իրանական պատմագրությունը տվեց մեծ քանակու-

¹ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, Պատմություն Առաքել վարդապետի Դավրիժեցույ, Վաղարշապատ, 1896:

² Տե՛ս **Գրիգոր Դարանաղցի «Կամախեցի»**, Ժամանակագրություն Գրիգոր վարդապետի Կամախեցույ կամ Դարանաղցույ, Երուսաղեմ, 1915:

³ Տե՛ս **Չաքարիա Քանաքեռցի**, Չաքարեայ Սարկաազի Պատմագրություն, հ. Ա, Բ, Գ, Վաղարշապատ, 1870:

⁴ Տե՛ս **Չաքարիա Ագուլեցի**, Չաքարիա Ագուլեցու Օրագրությունը, Երևան, 1938:

⁵ Տե՛ս **Ավգուստինոս Բաջեցի**, Ճանապարհորդություն յԵվրոպայ, գրչագիր ի Փարիզ «Նշխարք մատենագրութեան հայոց», Ս. Պետերբուրգ, 1884, էջ 5-26:

⁶ Տե՛ս Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա (1601-1620 թթ.), հ. Բ (1621-1640 թթ.), կազմեցին՝ **Վ. Հակոբյան և Ա. Հովհաննիսյան**, Երևան, 1984:

թյամբ գործեր, սակայն նրանց զգալի մասը նվիրված էր իրադարձությունների պարզունակ ու մակերեսային նկարագրությանը: Միանգամայն հասկանալի է, որ նման պայմաններում Իրանի պատմության հարցերի գիտական լուսաբանման համար անհրաժեշտ էր դիմել այլ ժողովուրդների պատմական գրավոր աղբյուրների օգնությանը, որոնց մեջ, անկասկած, իրենց արժանավոր տեղն ունեն նաև հայկական աղբյուրները:

Հատկանշական է, որ XVIII դարում հայ իրականության մեջ երևան են գալիս այնպիսի պատմական ստեղծագործություններ, որոնք ուղղակի նվիրված են Իրանի պատմության հարցերին: Այդպիսի աղբյուրներից առաջին հերթին պետք է հիշատակել Խաչատուր Ջուղայեցու «Պատմութիւն պարսից»⁷ գործը, որտեղ հեղինակը տալիս է պարսից թագավորների ժամանակագրությունը սկսած Աքեմենյան Կյուրոսից և հասնում է մինչև իր ժամանակը՝ Քեհրմ խան Չենդի մահը (1779 թ.): Իր աշխատությունը շարադրելիս նա օգտվել է հայ մատենագիրներից, զանազան քրոնիկոններից, գավազանագրքերից, ինչպես նաև պարսկական աղբյուրներից: Ջուղայեցու «Պատմութիւնը» ըստ էության ընդարձակ ժամանակագրություն է: Դա խոստովանում է նաև ինքը՝ պատմիչը. «Այլ ոչ ապաքեն գործս եւ զչարութիւնս նոցա ուրոյն վիպելով, գորոց որք նախ քան զմեզ էին, գեղեցիկ եւ սեթեւեթեալ ոճով գրեցին, այլ եւ եթ միայն զանուանս նոցա յիշատակելով, եւ եթ արդեօք մարդ ինչ իցէ՝ եւ զթիւս ամաց թագաւորելոյն նոցա, այսինքն՝ եթ յորում ամի, եւ քանի ամ թագաւորեցին»⁸:

Խաչատուր Ջուղայեցին իր այս «Պատմութիւնը» համարում է Ա հատոր՝ նկատի ունենալով, որ պետք է գրի նաև Բ հատորը: Բայց դժբախտաբար չի հասցրել կյանքի կոչել իր այդ նպատակը: Ամենայն հավանականությամբ դրա պատճառը եղել է անժամանակ մահը, որը վրա է հասել Բասրայում (թվականը անհայտ է), ուր գնացել էր որպես նվիրակ:

⁷ Տե՛ս **Խաչատուր Ջուղայեցի**, Խաչատուր աբեղայի Ջուղայեցոյ Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905:

⁸ **Խաչատուր Ջուղայեցի**, էջ 14-15:

Չուղայեցին իր երկում, իբրև իրադարձություններին ժամանակակից անձ, հիմնականում ճշգրիտ տեղեկություններ է տալիս Իրանի այդ խառնակ շրջանի պատմության մասին:

Սեֆյան (Սեֆեֆյան) դինաստիայի կործանման և Իրանում աֆղանական զավթիչների հաստատվելու և առհասարակ Իրանի պատմության առանձին հարցերի նկարագրությունը մենք գտնում ենք XVIII դարի նորջուղայեցի հայ հեղինակ Պետրոս դի Սարգիս Գիլանենցի «Ժամանակագրություն»⁹-ում: Այս մեծարժեք գործը ընդհանուր ճանաչում է գտել որպես վերոհիշյալ իրադարձությունների վերաբերյալ փաստերի հարստությամբ և հավաստիությամբ փայլող աշխատություն:

XVIII դարի Իրանի պատմության համար առաջնակարգ արժեք է ներկայացնում նաև Աղվանքի կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանցի Աղվանից պատմությամբ նվիրված աշխատությունը¹⁰, որը հատկապես կարևոր նշանակություն ունի Սեֆյան պետության քայքայման պատճառների լուսաբանման համար:

Առավել հարուստ և մեծաթիվ են XVIII դարի հայկական այն աղբյուրները, որոնք նվիրված են Նադիր շահի կառավարման և նրա արշավանքների պատմությանը: Դրանցից առաջին հերթին հարկ է հիշատակել Աբրահամ Կրետացու «Պատմագրությունը»¹¹, Աբրահամ Երևանցու «Պատմություն պատերազմացն»¹², Հակոբ Շամախեցու «Թահմազ դուլի խանի արշավանքները և նրա շահ ընտրվելը»¹³ և այլ գործեր:

⁹ Ժամանակագրություն Պետրոս դի Սարգիս Գիլանենցի «Կոունկ հայոց աշխարհի», 1863, թիվ Ա. ուսերեն բարգմանությունը տե՛ս *Дневник осады Исфагана, веденный Петросом ди Саркис Гиланенц в 1722 и 1723 гг.*, Материалы для истории Персии, перевод и объяснения К. Патканова, СПб., 1870:

¹⁰ Տե՛ս **Եսայի Հասան-Ջալալյանց**, Պատմություն կամ յիշատակ ինչ ինչ անցից դիպելոց յաշխարհին Աղուանից, Ա տպագ., Շուշի, 1839, Բ տպագ., Երուսաղեմ, 1868:

¹¹ Տե՛ս **Աբրահամ Կրետացի**, Աբրահամ կաթողիկոսի Կրետացույ Պատմագրություն անցիցն իրոց և Նատր-Շահին Պարսից, Վաղարշապատ, 1870:

¹² Տե՛ս **Աբրահամ Երևանցի**, Պատմություն պատերազմացն 1721-1736 թթ., Եր., 1936:

¹³ Տե՛ս **Ս. Տեր-Ավետիսյան**, Նադիր շահի արշավանքները «ըստ Հակոբ Շամախեցու», Եր., 1940:

XVIII դարի Իրանի քաղաքական իրադարձությունների և սոցիալական ու տնտեսական կյանքի ուսումնասիրության համար կարևոր աղբյուրներ են մաս Սիմեոն Երևանցու «Ջամբու»¹⁴, Եղիա Կարնեցի Մուշեղյանի «Դիվանը»¹⁵, Վարդան Օձնեցու աշխատությունը պարսիկների՝ 1795-1797 թվականներին Անդրկովկաս կատարած արշավանքների մասին¹⁶ և այլն:

Վերևում հիշատակված աղբյուրների թվարկումը ոչ ամբողջական ցուցակն է այն հարուստ նյութերի, որ պարունակում է հայ մատենագրությունը XVIII դարում Իրանում տեղի ունեցած պատմաքաղաքական իրադարձությունների վերաբերյալ:

Ցավով, սակայն, պետք է նշենք, որ այս դարաշրջանի մի շարք աղբյուրներ, որոնք նույնպես առատ նյութ են պարունակում Իրանի պատմության, իրանահայ գաղթօջախի, այդ երկրում և նրա շուրջը տեղի ունեցած ռազմական ու քաղաքական իրադարձությունների, նրա հոգևոր կյանքի այլևայլ բնագավառների մասին, ոչ միայն դեռևս կարոտ են գիտական մշակման, այլև, գտնվելով անհայտության մեջ, ծանոթ չեն գրասեր հասարակությանն ու գիտական շրջաններին: Առհասարակ հայ իրականության մեջ քիչ չեն հայոց պատմությանն ու մշակույթին իրենց բոլորամպեր նվիրած գրչի այնպիսի մշակներ, որոնք իրենց անխոնջ ու տքնաջան աշխատանքով կերտել են մեծ ու փոքր արժեքներ ունեցող գործեր, սակայն դժբախտաբար, դրանք առ այսօր մնացել են անհայտության մեջ և տակավին չեն գնահատվել ըստ արժանվույն: Այդպիսի մոռացված երախտավորներից մեկն է տեր Ստեփաննոս Երեց Տերտերյանը, որն առավել շատ հայտնի է Ստեփաննոս Երեց Հագարջրիբեցի անունով:

¹⁴ Տե՛ս Սիմեոն Երևանցի, Ջամբու. Գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաից որպիսիութեանց Սրբոյ Աբոռոյս և իւրոյ շրջակայից վանօրէիցն, համաժողովեցեալ և շարադրեցեալ ի Սիմէօն ցաւահար և վշտակոծ կաթողիկոսէ Երևանցոյ, Վաղարշապատ, 1873:

¹⁵ Տե՛ս Եղիա Կարնեցու «Դիվանը»: Նյութեր Մերձավոր Արևելքի և Անդրկովկասի պատմության, առաջաբանը և ծանոթագրությունները՝ պրոֆ. Ա. Աբրահամյանի, Եր., 1968:

¹⁶ Տե՛ս **Ռ. Տ. Տիտանյան**, Վարդան Օձնեցին պարսիկների 1795-1797 թթ. Անդրկովկաս կատարած արշավանքների մասին, «Պատմաբանասիրական հանդես», 1965, թիվ 3, էջ 211-222:

Նրա կյանքի մասին մեզ հասած տեղեկությունները սուղ են և թերի: Ստույգ հայտնի չեն մույնիսկ նրա ծննդյան ու մահվան թվականները: Ենթադրվում է, որ նա ծնվել է 1746 թվականին Իրանի Սպահան նահանգի Փերիա գավառի Հազարջրիի գյուղում և մահացել 1813 թվականին՝ 67 տարեկանում: Հողին է հանձնվել իր ծննդավայր գյուղի գերեզմանատանը¹⁷: Նրա անձի ու կյանքի մասին որոշ տեղեկություններ կան իր իսկ «Պատմագրքում», որոնք սակայն բավարար չեն ամբողջական պատկերացում կազմելու համար նրա կենսագրության ու անցած ճանապարհի մասին:

«Պատմագրքի» հիշատակարանում Ստեփաննոս Երեցը գրում է, որ ինքը քահանայական տոհմից է: Նրա նախահայրը եղել է տեր Մատթեոս անունով քահանան, «որ էր ի բնիկ գաւառացն Արարադեան», այսինքն՝ եղել է Սեֆյան արքայատոհմի շահ Աբբաս Ա-ի (1587-1629) կողմից XVII դարի սկզբին կազմակերպած մեծ բռնագաղթի (մեծ սուրգում) ժամանակ Արևելյան Հայաստանից, մասամբ նաև Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներից Իրան տարագրված հայերից: Բայց նախքան Իրան հասնելը տեր Մատթեոսը վախճանվում է գաղթի ճանապարհին: Նրա որդուն՝ տեր Դավթին, հաջողվում է տարագիր գաղթականության հոծ զանգվածի հետ, անցնելով անասելի զրկանքների ու տառապանքների երկար ճանապարհ, հասնել հարավային Իրանի Սպահան քաղաքը, որը Սեֆյան պետության մայրաքաղաքն էր: Տարիներ անց, հետևելով իր հոր՝ հոգևոր սպասավորի զբաղմունքին, նա սկսում է քահանայագործել Նոր Ջուղայի Պրովենց Ս. Ստեփաննոս եկեղեցում, որտեղ և ավարտում է իր կյանքի ճանապարհը: Տեր Դավթի մահվանից հետո նրա զավակ տեր Թադեոսը, շարունակելով հոր գործը, հետագայում դառնում է մույն եկեղեցու ծխատեր և ավագ քահանան: Նրա մասին մեզ հասած տեղեկության մեջ դրվատանքով ու մեծարանքով ասվում է «Այր խոհեն եւ հանճարեղ՝ լցեալ Նոր և Հին կտակարանաց»: Լինելով հավատավոր ու կրոնին նվիրված մարդ՝ երկու անգամ ուխտագնացու-

¹⁷ Տե՛ս **Լևոն Մինասյան**, Պատմագիր Ստեփաննոս Երեց, սեղմ տողեր նրա կյանքի ու գրականության մասին, Թեհրան, 1965:

թյուն է կատարում Սուրբ քաղաք Երուսաղեմ՝ «ի համբոյր լուսակառուց գերեզմանին Տեառն մերոյ Հիսուսի Քրիստոսի»:

Հայտնի է, որ ի թիվս բազմաթիվ այլ վայրերի, տարագիր բնակչության մի խոշոր հատված բնակեցվում է Սպահան նահանգի Փերիա գավառում, որտեղ արդեն XVII դարի առաջին կեսին ստեղծվում են հայաբնակ գյուղեր և ձևավորվում է նորահաստատ մի համայնք: Եվ քանի որ հայրենի ավանդությունները սրբությամբ պահպանող և ուսումնածարավ Փերիայի հայությունը կարիք ուներ դպրոցի կամ ծայրահեղ դեպքում հասարակ մի դպրատան, ինչպես նաև հոգևոր սնունդ պարգևող և ուժացման դեմ հզոր պատվար հանդիսացող եկեղեցու, զանազան մշակութային հաստատությունների և այլն, գաղթեցվածները միակամ և միախորհուրդ դիմում են տարագիր հայության հոգևոր կենտրոն դարձած Նոր Ջուղայի Ս. Ամենավրկչյան վանքի առաջնորդ Խաչատուր վարդապետ Կեսարացուն (1623-1629) «աղերսանօք» խնդրելով, որ տեղ Թադեոսին ուղարկի Փերիա՝ հովվելու գավառի հավատացյալ հայ ժողովրդին: Նրանք իրենց թախանձագին խնդրանքը հիմնավորում են նրանով, որ «քանզի ի հեռուստ վայրի բնակեալ ենք, խառնի խուռն ազգաց մահմետականաց, ոչ ունիմք առաջնորդ և տեսուչ՝ առ ի ուղղել զմեզ ի վերայ օրինացն Աստուծոյ: Սակս այն խնդրենք զտեղ Թաթեոսն, զի է հանճարեղ այր, կատարեալ և մակացու, լցեալ Հին և Նոր Կտակարանացն Աստուծոյ, գայ կարէ հովել զմեզ ի տարր վայրի և ոչ այլ ոք»:

Նոր Ջուղայի առաջնորդն առանց երկմտանքի ընդառաջում է խնդրարկուների դիմումին և տեղ Թադեոսին հրահանգում անմիջապես մեկնել Փերիա և բնակություն հաստատել տեղի գյուղերից մեկում, «զոր ինքն հաճեսցի» դպրոց բաց անի, ուսուցանի մանուկներին և «հովվի Քրիստոսի հոտը»: Տեղ Թադեոսը նախընտրում է գավառի հայաշատ և համեմատաբար շեն Հազարջորի գյուղը, որտեղ բացում է մի դպրոց, և սիրով ու նվիրվածությամբ ձեռնամուխ է լինում հայ մանուկների ուսուցմանը: Այդ ձեռներեց, միշտ անհանգիստ ու գործունյա քահանան գյուղացիների ուժերով կառուցում է նաև մի եկեղեցի՝ Ս. Աստվածածին անունով: Նա վախճանվում է 1654 թվականին 63 տարեկանում և թաղվում նույն գյուղի գերեզմանատանը:

Տապանաքարի վրա գրված արձանագրությունը տեր Թադեոսին մեծարում է «այր պատվական» և «մեծ քահանա» պատվանուններով:

Հենց այդ տեր Թադեոսի շառավիղներից մեկն է «ծերունագարդ և սրբասնունդ քահանա» տեր Ադեքսանդրի որդի պատմագիր Ստեփաննոս Երեցը, որն իր գրվածքներում իրեն անվանում է «լոկ և լպիրշ քահանայս, որ եմ ապիկար ծառայ մանկանցդ սրբոյ Սիոնի»:

Նրա կյանքի մասին մեզ հասած կցկտուր տեղեկություններից կարելի է ենթադրել, որ ապագա պատմագիրը իր մանկությունն անց է կացրել իր ծննդավայր Հազարջրիբում՝ գրաճանաչություն սովորելով և նախնական գիտելիքներ ամբարելով իր հոր՝ տեր Ադեքսանդրի մոտ: Նախնական ուսումը ստանալուց հետո տեղափոխվում է Նոր Զուղա, որը տարագիր հայության կրթական-մշակութային կյանքի լուսավոր կենտրոնն էր: Այստեղ նա աշակերտում է Հայրապետ վարդապետին, որը հետագայում որպես հնդկահայոց նվիրակ մեկնում է Հնդկաստան: «Պատմագրքի» հիշատակարանում երախտապարտ Ստեփաննոս Երեցը մեծարման խոսքեր է ասում իր ուսուցչի մասին և իր հոգևոր հորը նվիրում է նաև մի ոտանավոր, որտեղ գրում է. «Զներածու վարպետն իմ՝ ծերունագարդ և հանճարեղ Հայրապետ վարդապետն, որ բազում աշխատանս ունի ի վերայ իմ»:

Ամենափրկչյան վանքում ուսանելուց հետո Ստեփաննոս Երեցը վերադառնում է գյուղ և կարճ ժամանակ հետո ձեռնադրվում քահանա (հավանաբար 1770-1775 թվականներին): Նրա ընտանիքի մասին հայտնի է միայն, որ հավանաբար 20-25 տարեկանում ամուսնացել է Վառվառնի հետ և ունեցել է երեք զավակ. Անդրանիկ որդին՝ տեր Աստվածատուրը գնում է հոր ճանապարհով՝ 1838 թ. Խաչատուր արքեպիսկոպոսի կողմից ստանալով ավագ քահանայության աստիճան: Մյուս զավակներն են Մարտիրոսը և «ղեռաբուս նորաբողբոջ» Գրիգորը:

Կենսագրական տվյալներից հայտնի չի, արդյոք Ստեփաննոս Երեցը իր ամբողջ կյանքը անցկացրել է իր հարազատ ծննդավայրում՝ Հազարջրիբում, թե եղել է նաև օտար եզերքներում: Միանգամայն ակնհայտ է, սակայն, որ նա եղել է ժամանակի ուսյալ, կարդացած և բանիմաց անձնավորություններից մեկը: Ըստ ամենայնի՝ նա

քաջատեղյակ և իրազեկ է ոչ միայն իր ապրած շրջանում Պարսկաստանում և նրանից դուրս տեղի ունեցող իրադարձություններին, այլև կարողություն է դրսևորում դրանք ընկալելու, վերլուծելու և գնահատելու հարցում: Այս ամենը, անկասկած, վկայում է նրա բնատուր օժտվածության, պատրաստվածության և լայն մտահորիզոնի մասին: Պատկերելով իր ժամանակի դառն ու աղետալի իրադարձությունները՝ Ստեփաննոս Երեցն արտահայտում է այնպիսի տրամադրություններ, որոնք վկայում են, որ նա եղել է զարգացած անհատականություն: Նա միաժամանակ խոհուն փիլիսոփա է: Վերին աստիճանի ուշագրավ են նրա փիլիսոփայական մտորումները կյանքի ու մահվան առեղծվածի, սիրո ու բարեկամության, երջանկության ու տառապանքների, մարդկային կյանքի իմաստի, դժբախտության անցողիկության և շատ այլ երևույթների մասին: Լինելով հավատավոր հոգևորական՝ Ստեփաննոս Երեցը հաճախ իր փիլիսոփայական մտորումները ներկայացնում է Հին ու Նոր Կտակարաններից բերված ասույթներով՝ դրանց միջոցով արտահայտելով սեփական խոհական մտորումները: Նա, օրինակ, Հովհաննես Ավետարանչի բերանով ասում է. «Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ սիրեք միմյանց», «սերը դեպի ընկերը հիմքն է, որով հաստատվում և հորդորվում է մեր մեջ վերին սերը դեպի մեր Ստեղծողն ու Փրկիչը», «Աստված ոչ այնքան տվածին է նայում, որքան հոժարությամբ նայում է տվողին» և այլն:

Մեկնաբանելով աշխարհում ամեն ինչի «սկիզբը, միջինը և ավարտը»՝ փիլիսոփա-քահանան կատարում է խորը փիլիսոփայական ընդհանրացում, այն է՝ պետք է գոհաբանել և փառաբանել անցյալը, օրինել ներկան և բարեբանել ապագան:

Ստեփաննոս Երեցի գոհաբանական ուղերձները Բարձրյալին աչքի են ընկնում բանաստեղծական բարձր ներշնչանքով և ոսկեդեմիկ գրաբարյան հայերենով:

Ստեփաննոս Երեցը իր ժամանակի հարազատ զավակն է: Նրա դատողությունների կերպը ներշնչված է հայկական ավանդույթների և Հայ առաքելական եկեղեցու հիմնարար սկզբունքների ոգով: Չնայած այն հանգամանքին, որ նրան վիճակված է եղել ապրել և գործել

արևելքի ու շմիջնադարի մութ, երերուն, անհաստատ, անապահով և արյունոտ մղձավանջների ժամանակներում, սակայն իր ողջ էությանը նա եղել է իր դավանած սկզբունքներին անզիջում և տոգորված պայծառ լավատեսությամբ: Թեև նա ողբում է Իրանի հայ բնակչության դժբախտ վիճակը, բողոքում նրան բաժին հասած թշվառությունների դեմ, բայց և հորդորում է չհուսահատվել: Դա, անշուշտ, վկայում է այն մասին, որ նա վստահ է իր ժողովրդի կենսունակության մեջ: Ամեն անգամ պատմելով հայրենի եզերքի ավերածության, քանդման ու կողոպուտի մասին՝ նա անմիջապես ցույց է տալիս, որ այդ բոլորի հետևանքով կյանքը այնտեղ բնավ չի ավարտվում ու մեռնում, այլ վերստին սկսում է խլրտալ ու ծաղկել հայ մարդու կամքի ու բազկի ուժով: Լինելով ստեղծագործ խառնվածքի տեր հոգևորական՝ Ստեփաննոս Երեցը զբաղվել է գրական գործունեությամբ՝ թողնելով բավականին ծավալուն ժառանգություն: Նրա գրչին են պատկանում ոտանավորներ, «Երգարան», որը ժողովրդական բովանդակության բազմաթիվ բանաստեղծությունների հավաքածու է, «Տաղարան», որտեղ ամփոփված են սրբերին նվիրված ներբողական տաղեր, սպաշխարության երգեր, «Շարադրանք», ներբողական գրվածքներ «առ ծնողաց», «հոգևորաց», «առ Աստուած», հանելուկներ, խրատներ, խրախճանքի երգեր, մամակներ, թուրքերեն գրվածքներ և այլ գրական մեծ ու փոքր գործեր: Նրա բանաստեղծությունները թե՛ բովանդակությամբ և թե՛ բանաստեղծական արվեստի տեսակետից հետաքրքրություն չեն ներկայացնում, սակայն գրված են պարզ ու անպաճույճ լեզվով, ժողովրդական դարձվածքներով և կարող են որոշակի արժեք ներկայացնել Փերիա գավառի բանահյուսության, տեղի հայ բնակչության առօրյա կյանքի խնդիրներին, նրա կենցաղին, մտածելակերպին և այլնին հաստի լինելու առումով: Չափածո գործերից բացի՝ Ստեփաննոս Երեցն ունի նաև արձակ գրվածքներ, որոնք պարունակում են զանազան խորհրդածություններ, նվիրված են բնության որոշ երևույթների և այլն: Նա Գրիգոր Տաթևացու «Հարցմանց գրքից» և Առաքել Դավրիժեցու «Պատմությունից» արտագրել է առանձին կտորներ (նպատակը հայտնի չէ):

Ստեփաննոս Երեցի գրական ժառանգության առավել գնահատելի և արժեքավոր գործը, անկասկած «Հանգիտագիրք» պատմական երկն է, որն ավելի շատ ընդունված է անվանել «Պատմագիրք»։ Տալով իր երկի գնահատականը՝ հեղինակն այն անվանում է «Մտածումներ անցյալ և ներկա ժամանակների մասին»։ Նրանում նկարագրվում են XVII դարի վերջին և XVIII դարում Իրանում ծավալվող իրադարձությունները, տեղեկություններ են հաղորդվում այդ երկրի հայկական համայնքի, հատկապես Փերիա գավառի հայության մասին, հարուստ տվյալներ են բերվում այլևայլ խաժամուժ տիրողների լծի տակ հեծող իրանահայության մասին և այլն։

Որպես պատմագիր՝ Ստեփաննոս Երեցը «Հանգիտագրքից», (Պատմագրքից), բացի պատմական բովանդակությամբ որևէ այլ աշխատություն չի գրել։

Պատմական այդ երկը գետեղված է 488 էջանոց հաստափոր ու կաշեկազմ մի մատյանում, որի մեծ մասը զբաղեցնում է բուն պատմագրությունը՝ բաղկացած երկու նախաբանից, բուն պատմությունից՝ ամփոփված քառասունմեկ պրակների մեջ և հիշատակարանից, մնացածը ներառում են նրա ոտանավորներն ու տաղերը։ Վերջում տրվում են հեղինակի կողմից կազմված՝ խորթին ու անհասկանալի բառերի և բառակապակցությունների մոտ 40 էջից բաղկացած մի բառացանկ, որը Ստեփաննոս Երեցն անվանել է «լուծմունք բառից»։ Բացատրելով այդ բառարանի նպատակը՝ պատմիչը գրում է, «Աստանոր կամին լուծանել զխորթին և դժվարիմաց բառ գրոյս այսմիկ, զի ամենայն ոք դուրեաւ ծանիցէ զխորթին բառ տորայ անտարակուսանաց գրեալ ի վերայ ալփաֆետից, որ է այբուբենից»։

«Հանգիտագիրքը» մեզ է հասել երկու ձեռագրով։ Բնագիր օրինակը գտնվում է Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանում՝ 654 թվահամարի տակ։ Բնագրից կատարվել է երկու ընդօրինակություն, որոնցից մեկը գտնվում է գրասեր Կարո Մինասյանի մասնավոր հավաքածուում, իսկ երկրորդը, որը 1946 թվականին արտագրել է իրանահայ ճանաչված բանասեր, հանգուցյալ Լևոն Մինասյանը, այժմ գտնվում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում և կրում է 10555 թվահամարը։ Թեհրանի Փերիո

կրթասիրաց միության նախաձեռնությամբ և իրանահայ մի շարք անհատների նյութական օժանդակությամբ «Հանգիտագրքի» ամբողջական տեքստը 2017 թ. հրատարակվեց Թեհրանում: Ընդ որում՝ գրաքարյան տեքստին զուգահեռ նաև աշխարհաբարը: Բնագիրը պատրաստել և աշխարհաբարի են փոխադրել Մատենադարանի աշխատակիցներ Թամարա Սիմայանը և Լուսինե Թումանյանը: Երկի առաջաբանը գրել է Վահան Բայբուրդյանը, իսկ ծանոթագրությունները՝ Վահան Բայբուրդյանը և Հասմիկ Կիրակոսյանը:

Իրանի և իրանահայության վերաբերյալ «Պատմագրքում» պարունակվող տեղեկությունները բացառիկ արժեք ունեն: Ըստ էության, այդ երկը ժամանակի խոսում վկայություններից մեկն է: Հարկավ, այդ տեղեկությունները այն աստիճանի հարուստ են և բազմազան, որ կարիք ունեն իրանագիտական տեսանկյունից հատուկ հետազոտության: Դա հնարավորություն կընձեռի նաև այլ աղբյուրների հետ բաղդատելու միջոցով ստույգ գնահատական տալ «Պատմագրքի» իրական արժեքի վերաբերյալ, մասնավորապես պարզաբանելու համար, թե ինչ նորություն են պարունակում այդ երկի տվյալներն Իրանի XVII դարի երկրորդ կեսի և XVIII դարի պատմության լուսաբանման համար:

«Պատմագրքի» առաջին էջը բացվում է Ստեփաննոս Երեցի կողմից իր գործը ներկայացնելու հետևյալ գրությամբ. «Գիրք, որ կոչի Հանգիտագիրք, որ է մտածմունք ժամանակաց՝ անցելոց և ներկայից՝ հանգանակեալ և ծրեալ ի հայրապետութեան Սրբոց սարսափելի (ահեղ - Վ. Բ.) Աթոռոյն Էջմիածնի տեառն Դուկասոյ վեհափառ կաթողիկոսի Ամենայն հայոց և ի առաջնորդութեանն նահանկիս մերոյ տեառն վեհանձնեայ Մկրտիչ վճռի ախորժ առաջնորդին, արժանաժառանգ Սուրբ Աթոռոյն Ամենափրկչի վսեմական վանացն ի ներքուջ մարդեղութեան տեառն ՌՉՁԶ (1786) և բուականութեան մերոյ ՌԲՃԼԶ ներամսեանն յուլիսի, որոյ յաւուրքն էին Ժ և Է (15) Ապաշնորի տէր Ստեփանոսէ»¹⁸:

¹⁸ Ստեփաննոս Երեց, Պատմագիրք «Հանգիտագիրք», Թեհրան, 2018, էջ 6:

«Պատմագրքի» երկրորդ էջին հավանաբար իր իսկ ձեռքով գծագրված է Ստեփաննոս Երեցի նկարը՝ քահանայական տարագով, որի տակ մակագրված է.

«Ստեփանոս վատք «ա» ք չընչին,

Քարշ մեղատր աղտեղի հին»:

Գրքի առաջին նախաբանում, որը վերնագրված է «Բան առ Յոյսն ամենեցոյն» (խոսք առ հույսն ամենքի – Վ. Բ.), պատմագիրը գովաբանում է Աստծուն: Երկրորդ նախաբանն ուղղված է «Առ երջանիկ առաջնորդն» (առանց հիշատակելու առաջնորդի անունը և նրա ով լինելը – Վ. Բ.) «Առ մակացութեանդ և սրբութեանդ, ապիկար և ապաշնորի ծառայ Ստեփանոս»:

Նախաբանում խոսքն ուղղելով առաջնորդ Հակոբ Եպիսկոպոսին՝ պատմագիրը «Հանգիտագիրքը» ներկայացնում է նրան, միաժամանակ բացատրելով, թե ինչն է ստիպել իրեն գրիչ վերցնել և շարադրել այն: «Մեծաւ խոնարհութեամբ, պատկառանքով հանդերձ զեկուցանենք առ գորովագոյք ծնողդ իմ, քանզի քահանայից և տանուտեւրաց գաւառաց հարկ էղին ի վերա թերագոյն ծառայիս, այնքան ճեպով և ըշտապով, որ ոչ կարացի քերցել և զերծանել վարմից նոցա»¹⁹, – գրում է Ստեփաննոս Երեցը: Այնուհետև, ներկայացնելով այդ «տարութեքովոյ», «ձախորդաբեր», դառն ու տխուր ժամանակներում Փերիայի հայ բնակչության ծայրահեղ վատ վիճակը և անվերջ կրկնվող բռնակալության ու կամայականության ներկայացուցիչ անողորք և վայրագ իշխողներից նրա կրած նեղություններն ու դժվարությունները, ազդու և սրտառուչ գրում է. «ոչ քարտեզ բաւ է՝ առ ի շարագութել և ոչ մելան բաւ է՝ առ ի ծրել, և ոչ կածին բաւ է՝ առ ի գրել, և ոչ ազդարան լեզվի՝ առ ի ճառել, որքանութեանց նեղութեանցն, զորս կրեցին ողորմելի ազինս մերոյ»²⁰:

Հիշատակարանում պատմագիրը իր այդ միտքը ներկայացնում է ավելի պատկերավոր. «որ թէ ծովն օվկիանոս մելան եղեալ էր, և ամենայն շամբս եղեգեան կածեն, և դաշտն արաբացոց՝ քարտես, ոչ

¹⁹ Ստեփաննոս Երեց, նշվ. աշխ., էջ 9-10:

²⁰ Նույն տեղը, էջ 10:

բաւ էին՝ առ ի շարագութել գորքանուիւն նեղութեանցն»։ Ապա, խոսքն ուղղելով իր ընթերցողներին, խնդրում է չմեղադրել ու պարսավել իրեն «քերությունների, խրթին ոճի և սխալների պատճառով», որովհետև այդ խառնակ, «տարութերվող ժամանակներում», մանավանդ իր ձեռքի տակ պատմական նյութերի պակասության և իր «անգիտութեան ու հեղգութեան» պատճառով իրեն չի հաջողվել սրանից ավել անել։ Նա ներողամտություն է հայցում, որ եթե իր գործի մեջ գտնվի որևէ անպատեհ կամ սխալ բան՝ մեծահոգաբար «հանուն Տիրոջ» ներեն իրեն, քանի որ այդ գործի իրականացման համար իր կարողությունն այդքան էր «զի կարն մեր այս էր»։ Միաժամանակ նա հատուկ շեշտում է, որ իր երկը գրել է «մեծ տքնությամբ», «արտասուաբոր աչօք», դառն ու կսկիծով լի ապրումներով, գիշեր ու ցերեկ տքնելով, «հարցուփորձ անելով, ստուգելով ու գրելով»²¹։ «Ազդումն ընթերցողաց» (Ազդարարություն ընթերցողներին) վերտառության ներքո բաժնում պատմագիրը համեստորեն ասում է. «ես, նվաստս, կուռ կերպով ջանում էի այս սակավ շարադրանքի վրա՝ գործյամբ գրելու՝ բայց չկարողացա, քանի որ ստրուկս ի ծնե ծույլ և անգետ էի»։ «Գերագույնիցդ խնդրում եմ, որ քամահրանք չբարդեք նվաստիս վրա, այլ ներեք ինձ՝ հանուն Տիրոջ»։ Այնուհետև նա տեղեկացնում է իր ապագա ընթերցողներին, որ երկը շարադրել է «սկսած շահ Աբբաս երկրորդի ժամանակաշրջանից «մինչև վանքի պատմությունը»²²։

Նախաբանից հետո Ստեփաննոս Երեցը հանգամանալից պատմում է իր հարազատ գյուղի՝ Հազարջրիբի Ս. Աստվածածին վանքի կառուցման մասին։ Հայրենի եզերքից կտրված և օտար երկիր բռնագաղթված հայության համար եկեղեցին տակ աղոթատեղի չէր, այլ հույսի ապավեն, «զի նովաւ մխիթարիմք այս օտար աշխարհիս»²³։ Որպես իրենց բնակավայրում աղոթատուն ունենալու անհրաժեշտության հիմնավորում Հազարջրիբի բնակիչները ասում են. «Այս յօտարոտի աշխարհի և այլասեռից ազգաց միջի բնակեալ

²¹ **Ստեփաննոս Երեց**, նշվ. աշխ., էջ 10։

²² Նույն տեղը, էջ 10-11։

²³ Նույն տեղը, էջ 13։

եմք և ոչ ունիմք զնշան ինչ և առիթ հաստատութեան քրիստոնէականի՝ ո՛չ վանորայք, և ո՛չ տեղիք ուխտից, և ո՛չ սրբոց նշանակաց կառուցմունք, ո՛չ գերեզման և դամբարան սրբոցն Աստուծոյն կամ մերոց հարց և հաւուց նախնեաց, այլ միայն զաչ սրբոյ առաքելոյն Թօմայի, որ ի ժամ սուրգունին բերաք զհետ մեր»²⁴:

Հազարջրիբի Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումը իր ավարտին է հասնում 1666 թ. օգոստոսին: Պատմագիրը հայտնում է, որ եկեղեցուն (վանքին) կից բացվել է նաև դպրոց, որտեղ «ուսուցին բազում աշակերտս»: Ստեփաննոս Երեցը անուղղակի կերպով ցանկանում է շեշտել, որ եկեղեցին և դպրոցը հայապահպանման երկու խաբիսներն են:

Պատմագիրքը (Հանգիտագիրքը) գրվել է 1785-1789 թվականներին Փերիայի Հազարջրիբ գյուղում: «Ըսկիսպն և աւարտն սորագրում է պատմիչ-քահանան,- եղև ի գաւառն Փերիայ՝ ի գետոն Հազարջրիպ, ընդ հովանեաւ Սրբոյ Աստուածածնի, ձեռամբ վատշուէր Ստեփանոս անարդուն քահանայի՝ ի վայելումն և ի զբօսանս մակացու և բարեմիտ քրիստոսասէր յանձինդ»:

Ստեփաննոս Երեցի երկի ժամանակագրական սահմաններն ընդգրկում են Իրանում Սեֆյան հարստության շահ Աբբաս Բ-ի (1642-1666) կառավարման վերջից և ավարտվում 1789 թվականին, այսինքն՝ Մոհամմադ խան Ղաջարի և Լոթֆալի խանի ժամանակներում: Հայտնի է, որ Առաքել Դավրիժեցին իր «Պատմության» մեջ շարադրում է 1601-1662 թվականներն ընդգրկող ժամանակաշրջանը: Խաչատուր Ջուղայեցին իր «Պատմութիւն Պարսիցը» հասցնում է մինչև 1779 թվական: Հետևաբար, Ստեփաննոս Երեցի «Հանգիտագիրքը» կարելի է համարել Առաքել Դավրիժեցու և Խաչատուր Ջուղայեցու երկերի շարունակությունը: Ըստ էության՝ Ստեփաննոսը հայ վերջին պատմիչն է կամ «պատմիչների կնիքը», որից հետո սկիզբ է առնում գիտական պատմագիտությունը:

Ո՞րն է եղել Ստեփաննոս Երեցի «Հանգիտագիրքը» գրելու, ինչպես հեղինակն է ասում, այդ «հոգնատանջ» աշխատանքի պատճա-

²⁴ Ստեփաննոս Երեց, նշվ. աշխ., էջ 13:

որ. արդյո՞ք պատմագրի ձգտումը գալիք սերունդներին պատմելու իր ապրած ժամանակներում հարազատ ժողովրդի կրած անլուր տառապանքները, իրանահայության առօրյան, նրա կյանքի ալեկոծումներն ու վայրիվերումները, թե՞ մի ուրիշ բան: Այդ մասին Ստեփաննոս Երեցը լուծում է: Նա միայն հարևանցիորեն տեղեկացնում է իր ապագա ընթերցողներին, որ Փերիա գավառի ավագանին և երևելիները, քահանայական դասը և գավառի տանուտերերը «հարկ եղին ի վերայ թերագոյն ծառայիս», որ նա գրի առնի իրենց ժամանակաշրջանի անհանգիստ ու խառնակ օրերի պատմությունը «որպես հիշատակ և գիտություն ապագայի համար»: Ավելի պարզաբանելով իր գրիչ վերցնելու պատճառն ու նպատակը, Ստեփաննոս Երեցը գրում է. «Նաև ես՝ նողկալիս և փասքուսս, ցավով նկատում և տեսնում էի ավիրումը երկրի, տապալումը բերրի և հուռքի գավառների և կործանումը բազում գյուղերի ու մեծամիստ ավանների, լուրջությունը երկնաման և դրախտակերպ բարձրաբերձ եկեղեցիների, որ խավարված էին լույսից, թափուր էին մնացել ժամակարգություններից, խնկի բուրմունքի փառաբանությունից և զարդարանքից, դարձել էին հանգրվան և օթևան վայրի աղավնիների, չղջիկների ու տարատեսակ թռչունների համար և, փոխանակ օր օրի նորոգվելու, օրեցօր խարխլվելով ու քայքայվելով փլվում էին: Նաև ասացի մեր տրտմալի և անպատասպար ազգի համար, որ այդքան նեղություն ու թշվառություն կրեց, քանի որ չգտավ հանգիստ թե տարութերվող անցյալում, թե ներկայում, այնքան, որ եթե օվկիանոսի ջրերը մեկան լինեին և բոլոր եղեգները՝ գրիչ, իսկ արաբական անապատը՝ մատյան, բավական չէին լինի՝ շարադրելու նեղությունների քանակը»²⁵:

Այդ բոլորը տեսնելով ու վերապրելով՝ ինքը «մեծ տքնությամբ, վարանած սրտով ու հեծեծանքով» շարադրել է իր պատմագիրքը:

Այսպիսով, Ստեփաննոսը իր նկարագրած դեպքերի մեծ մասի ոչ միայն ժամանակակիցն է եղել, այլև ակամատեսն ու վկան: Նա անկեղծ արձանագրող է և ամենայն բարեխղճությամբ իր տեսածն ու լսածը մանրամասնորեն գրի է առել: Նրա բերած փաստերը ներկա-

²⁵ Ստեփաննոս Երեց, նշվ. աշխ., էջ 269:

յացնում են այս կամ այն պատմական ժամանակամիջոցի ամբողջ պատկերը: Կասկածից վեր է նաև, որ Ստեփաննոս Երեցը օժտված է սուր դիտողականության ու նկարագրելու ձիրքով: Հենց այդ պատճառով նրա երկի մեծագույն արժեքը փաստերի հավաստիության մեջ է: Գիտակցելով դրա կարևորությունը՝ հենց ինքը՝ հեղինակը, բազմիցս շեշտում է «Պատմագրքի» հավաստիությունը: Նա պատմության ճշմարիտ պատկերը տալու համոզված ջատագով է: Լինելով ժամանակաշրջանի դեպքերին լավատեղյակ հեղինակ՝ Ստեփաննոս Երեցը միևնույն ժամանակ իր նկարագրածի նկատմամբ ունի անաչառ վերաբերմունք: Հավաստելով պատմության առջև իր խորը պատասխանատվության գգացումը՝ նա անընդհատ տարբեր առիթներով շեշտում է, որ ձգտել է հաղորդել առավել չափով ստույգ և մանրակրկիտ տվյալներ, ինչպես ինքն է ասում, «հարցուփորձի ըստությամբ» պատմական տվյալները: Հնարավորության սահմաններում նա միշտ խուսափել է արժանահավատ կամ հակասական տեղեկություններից ու վկայություններից: Հետևաբար, Ստեփաննոս Երեցը մեզ ներկայանում է որպես բարեխիղճ, խոհուն ստուգապատում պատմագիր:

Բնականաբար, չունենալով հիմնավոր կրթություն՝ նա երբեմն չի կարողանում խորամուխ լինել պատմության խրթին, իրարամերժ ու հակասական իրադարձությունների մեջ, կատարել լայն ընդհանրացումներ, սակայն դրա փոխարեն նրա հաղորդած հարուստ և ուշագրավ տեղեկությունները մեծապես արժևորում են նրա կատարած գործը: Ըստ երևույթին, նրա համար չափազանց դժվար է եղել տարբեր տարիներին գուցե նաև զանազան վայրերում ժողոված փաստերն ի մի բերել ու խմբավորել, այդ պատճառով նա չի կարողանում խուսափել նյութի ցրվածությունից ու կրկնություններից: Ուստի առանձին հարցեր նրա մոտ արծարծվում են միայն հարևանցիորեն, քաղաքական անցուդարձերի նկարագրությանն առնքել: «Պատմագրքում» ժամանակագրական կարգը ևս ոչ միշտ է պահպանված: Բացի այդ՝ քանի որ նա ձգտում է հնարավորինս օգտակար տեղեկություններ հաղորդել, այդ պատճառով իր երկի մեջ մտցնում է բավականին շատ կողմնակի նյութեր:

Թեև ինքը չի հիշատակում, բայց «Պատմագրքի» քննական վերլուծությունը հանգեցնում է նրան, որ Ստեփաննոս Երեցը, ըստ երևույթին, օգտագործել է նաև գրավոր աղբյուրներ, ժամանակագրություններ, ձեռագիր հիշատակարաններ, վավերագրեր և այլն:

Որպես խորագիտակ հետազոտող՝ նա հիանալի է ըմբռնել ժամանակի ոգին: Առհասարակ, շնորհալի և ուշիմ քահանան հանդես է գալիս իբրև 18-րդ դարի մարդ: Հենց դա էլ նրան հնարավորություն է տվել անսխալ մեկնաբանելու իրադարձությունները: Պարզորոշ երևում է, որ Ստեփաննոս Երեցը մոտ է կանգնած իր հարազատ ժողովրդին, լավ գիտի նրա առօրյան ու հոգսերը և դրանց մասին ամենայն բարեխղճությամբ հաղորդում է ընթերցողին: Նրա «Պատմագրքում» կարմիր թելի պես անցնում է այն իրողությունը, որ այդ հայրենասեր մարդու մոտ մշտապես տրոփել է ազգային ոգու զարկերակը:

Որպես պատմագիր՝ Ստեփաննոս Երեցը անշուշտ ինչ-որ չափով տուրք է տվել կրոնական մտածողությանը, որը պետք է համարել միանգամայն բնական երևույթ: Չպետք է մոռանալ, որ նա հոգևորական էր և մի ժամանակի ծնունդ, երբ կրոնը ոչ միայն հավատք էր, այլև տիրապետող գաղափարախոսություն: Անշուշտ, դա չէր կարող իր կնիքը չթողնել Հայ առաքելական եկեղեցու ոգով սնված ու դաստիարակված քահանա-պատմագրի գրչի և նրա աշխարհայացքի վրա: Նրա մոտ անսասան է նաև հավատը «աստվածային նախասահմանվածության» նկատմամբ: «Պատմագրքի» հեղինակը միամիտ անկեղծությամբ ամբողջ էջեր է նվիրում զանազան տեսիլքների ու հրաշապատումների, հրաշագործ սրբերի կատարած գործերի նկարագրությանը՝ այդ ամենի նկատմամբ տածելով միամիտ հավատ:

Լինելով խորապես հավատացյալ՝ Ստեփաննոս Երեցը միաժամանակ կյանքի մարդ է՝ աշխարհի չարի ու բարու առողջ ընկալումով, միշտ հավատավոր, կենսասեր, լավատես: Նա նաև լցված է վառ սիրով դեպի իր ծննդավայրը, հեռու հեռվում գտնվող հայրենի աշխարհը և Հայ առաքելական եկեղեցին: Անկասկած, պատմագիրը չէր կարող գերծ մնալ կրոնական նորմերի այնպիսի դրսևորումից, որպիսին

էին թշվառությունները, պատահարները, ճախորդությունները, անհաջողությունները, մարդկանց գործած մեղքերով (վասն մեղաց մեքոց) բացատրելը: Ուստի հասկանալի է այն սահմանափակությունը և միակողմանիությունը, որ երբեմն-երբեմն զգացվում է նրա երկում: Ստեփաննոս Երեցի «Պատմագիրքը» աչքի է ընկնում շոշափվող հարցերի բավականին մեծ բազմազանությամբ: Բացի Իրանում ծավալվող քաղաքական իրադարձությունների, պատերազմական գործողությունների, մեծ ու փոքր բռնակալների կողմից կատարված չարագործությունների, ներքին խռովությունների ու ապստամբությունների նկարագրությունից՝ նա շահեկան տեղեկություններ է հաղորդում նաև Իրանի հայ համայնքի, իրանական քաղաքների, նրանցում ապրող բնակիչների սովորույթների, վարքուբարքի, կենցաղի, տրամադրությունների, զբաղմունքների և այլևայլ հարցերի վերաբերյալ: Թեև նրա հաղորդած տեղեկությունները առավելապես վերաբերում են Իրանի քաղաքական կյանքի իրադարձություններին, սակայն ուշադրությունից դուրս չեն մնում նաև սոցիալական և տնտեսական կյանքին վերաբերող իրողությունները: Թռուցիկ ակնարկներով հարևանցիորեն, սակայն, այնուամենայնիվ նա անդրադարձներ է կատարում նաև Իրանի հարակից երկրների՝ Աֆղանստանի, Հնդկաստանի, Օսմանյան կայսրության, Վրաստանի և այլ պետությունների առանձին դրվագներին, որոնք, անկասկած, ունեն որոշակի գիտական արժեք: Այս առումով Ստեփաննոս Երեցը շահեկանորեն տարբերվում է իր ժամանակի պարսիկ պատմագիրներից, որոնց գործերում գլխավորապես նկարագրվում են թագավորների վարած պատերազմները, նրանց տարած իրական և մտացածին հաղթանակները, շահական արքունիքի կողմից կազմակերպվող շոնդալից խրախճանքները և այլն: Անկասկած որոշակի արժեք են ներկայացնում նաև Ստեփաննոս Երեցի հաղորդած տեղեկությունները Սեֆյան Իրանի, Նադիր շահի պետության, զենդերի ու դաջարների պետական համակարգի, վարչական կառուցվածքի, հարկային քաղաքականության և մմանատիպ այլ հարցերի վերաբերյալ սեղմ, սակայն հավաստի ու արժեքավոր տվյալները: Այդ բոլոր հարցերին անդրա-

դառնալիս նրա ուշադրությունը, սակայն, մշտապես բևեռված է իրանահայ համայնքի կյանքի վրա:

Ստեփաննոս Երեցի գրական լեզուն, որով շարադրված է նրա պատմագիրքը, գրաբարն է, սակայն այն չափազանց մոտ է աշխարհաբարին: Թեև արդեն XVII-XVIII դարերում Իրանի հայ գաղթաշխարհում տիրապետող գրական լեզուն գրաբարախառն աշխարհաբարն էր, սակայն լինելով հոգևորական՝ պատմագիրը նախապատվությունը տվել է գրաբարին: Նրա լեզվին բնորոշ են XVII-XVIII դարերի մեր մատենագրության հատկանշական կողմերը, այսինքն՝ և՛ գրաբարի, և՛ աշխարհաբարի տարրերը, ինչպես նաև պարսկերեն և թուրքերեն բառերի, դարձվածքների ու արտահայտությունների գործածությունը: Հեղինակն իր օգտագործած գրաբարը լրացնում է ոչ միայն օտարալեզու բառերով, այլև բարբառային բառապաշարով: Ավելորդ չէ նշել, որ Ստեփաննոս Երեցն ունի նաև որոշ գրվածքներ, օրինակ՝ «Նամակներ», որոնք գրված են XVIII դարի վերջում հայ իրականության մեջ տարածում գտած կես աշխարհաբարով: Նա հեղինակել է նաև թուրքերեն և պարսկերեն գրվածքներ, առանձին ասույթներ, ոտանավորներ և այլն:

«Տե՛ր Ստեփաննոսը,– գրում է Լևոն Մինասյանը,– լինելով մի համեստ քահանա, բնական է, չէր կարող ունենալ բարձր կրթություն՝ մի անթերի գրականություն ստեղծելու համար: Եվ հենց այդ պատճառով էլ, չնայած նրա գրասեր ու ստեղծագործ ոգուն, գրվածքները զերծ չեն քերականական, կետադրական, ուղղագրական և այլ թերություններից: Նա գործ է ածում բազմաթիվ խրթին ժողովրդական և տեղական բառեր, որոնք, թեև անհասկանալի, բայց այնքան պարզ ոճով են շարահյուսված, որ ընթերցումը դառնում է շատ դյուրին ու հաճելի»²⁶:

Այդ բոլորով հանդերձ նրա երկի շարադրանքն աչքի է ընկնում կենդանի, հյութեղ, անպաճույճ ոճով՝ համեմված ժողովրդական դարձվածքներով և Փերիայի հայերի բարբառային բառերով, որոնք առանձին կենդանություն են տալիս շարադրանքին: Խնամքով

²⁶ Լևոն Մինասյան, նշվ. աշխ., էջ 16:

ընտրված համեմատություններն ու մակդիրները հարստացնում են երկի պատմելաձևը: Տպավորիչ են նաև նրա առանձին նկարագրությունները:

Մինչև 1880-ական թթ. Ստեփաննոս Երեցի «Պատմագիրքը», ինչպես և իր անձը մնացել էին անհայտության մեջ: Առաջինը նրա գործը հանրությանն է ներկայացրել Նոր Զուղայի պատմության հեղինակ Հարություն Տեր-Հովհանյանցը²⁷: Իր աշխատությունը շարադրելիս Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի ձեռագրատանը նա պատահամաբ գտնում է «Պատմագիրքը» և նրա մատուցած նյութերը ընդգրկում իր աշխատության մեջ: Ըստ էության՝ XVIII դարի դեպքերով ու իրադարձություններով հարուստ ժամանակաշրջանի եղելությունները նա կառուցել է նշված աղբյուրի մատուցած տեղեկությունների վրա: Հ. Տեր-Հովհանյանցը անկեղծորեն խոստովանում է, որ «Պատմագրքի» հայտնաբերումը մեծապես օգնել ու ոգևորել է իրեն իր ձեռնարկած գործը ավարտին հասցնելու համար:

Հ. Տեր-Հովհանյանցը նաև խոստովանում է, որ «Պատմագիրքը» ընթերցողին է ներկայացնում ոչ ամբողջությամբ, այլ «ընտրանօք քաղեալ», ասել է թե նրա նյութերի սեփական ընտրությամբ կամ հայեցողությամբ՝ սրբագրելով, կրճատելով և դուրս թողնելով իր տեսակետից «ավելորդ կրկնաբանությունները», սակայն ամբողջությամբ պահելով «բուն իմաստը»: «Ոճ պատմութեանն էր բազմաբառ և սակալիմաստ, – գրում է նա, – յորմէ ընտրանօք քաղեալ զետեղեցի յիմում պատմութեան զնիւթս յիրաքանչիւր գլխոյ պատշաճաւոր. և ուրանօք ի մէջ բերի զնորա բանս ի վկայութիւն, ոչ առանց սրբագրութեան թողի, զաւելորդ կրկնաբանութիւնս յապաւելով՝ և զբուն իմաստն պահելով ամբողջ»²⁸:

Միաժամանակ կատարելով քննախույզ աղբյուրագետ-պատմաբանի գործ՝ Հ. Տեր-Հովհանյանցը աշխատել է Ստեփաննոս Երեցի հաղորդած նյութերը համեմատել այնպիսի աղբյուրների հետ, որոնց պատմական հավաստիության վերաբերյալ ինքը որևէ կաս-

²⁷ Տե՛ս Հ. Տեր-Յովհաննէանց, Պատմութիւն Նոր Զուղայոյ, որ յԱպահան, հատ. 1, Նոր Զուղա, 1880, էջ 3:

²⁸ Տե՛ս Հ. Տեր-Յովհաննէանց, նշվ. աշխ., էջ 3:

կած ու երկբայություն չի ունեցել: «Չամենայն շարադասութիւնս նիւտոց այսր պատմութեան՝ ոչ գրեցի առանց քաջ խելամուտ լինելոյ հաւաստի ապացուցութեանց նոցին, քաղելով յաղբերաց՝ և բաղդատելով ընդ այնպիսի հմութեանց՝ զորոց ստուգութենէ ոչ էր մարթ երկբայութիւն ինչ ունել», – գրում է նա²⁹:

«Պատմագրքից» բարեխղճորեն հղումներ կատարելիս Հ. Տեր-Հովհանյանցը միշտ երախտագիտությամբ է հիշատակում պատմագրի անունը:

Հետագայում՝ ավելի ուշ շրջանում, Ստեփաննոս Երեցի ժառանգությամբ, թեև ոչ համակողմանի ու խորը վերլուծությամբ, անդրադարձել են մի շարք հեղինակներ: Այսպես, Իրազեկը (Հակոբ Տեր-Հակոբյան) 1938 թ. «Մի անհայտ բանաստեղծ ու պատմագիր՝ Ստեփաննոս Երեց Փերիացի» վերնագրով հոդված է տպագրել Թեհրանում լույս տեսնող «Նավասարդ» ամսագրում³⁰, որտեղ անդրադառնում է Ստեփաննոս Երեցի գրական վաստակին՝ բերելով նրա բանաստեղծություններից մի քանի նմուշներ և վերլուծելով դրանք:

1940 թ. նոյեմբերին Ստեփաննոս Երեցի «Հանգիտագիրքը» առաջին անգամ տպագրվել է (ոչ ամբողջությամբ) Թեհրանում հրատարակվող «Վերածնունդ» թերթում³¹: Չեռագրի տպագրության առթիվ թերթի խմբագրությունը ստորագրել է մի շատ համառոտ խմբագրական:

Ստեփաննոս Երեցի անձին և նրա գրական ժառանգությանն է անդրադարձել նաև Արամ Երեմյանը՝ միաժամանակ բերելով մի քանի նմուշներ նրա գրականությունից: Սակայն նրա աշխատանքը ևս կրում է խիստ մակերեսային և թուցիկ բնույթ: Հետագայում՝ 1953 թվականին, նույն հեղինակը «Էջմիածին» ամսագրում³² տպագրում է մի հոդված «Ստեփաննոս Երեցի մեծարժեք ձեռագիր մատյանը» վերնագրով, որտեղ նա ընդհանուր գծերով, խիստ համառոտակի անդրադառնում է Ստեփաննոս Երեցի անձի, ծննդյան ու մահվան

²⁹ Տե՛ս Հ. Տեր-Յովհաննանց, նշվ. աշխ., էջ 3:

³⁰ Տե՛ս «Նավասարդ», Թեհրան, 1938, Ե գիրք, էջ 27-37:

³¹ Տե՛ս «Վերածնունդ», Թեհրան, 1940, թիվ 420:

³² Տե՛ս «Էջմիածին», 1953, Ժ տարի, հուլիս-օգոստոս, թիվ 7-8, էջ 26-32:

թվականներին, նրա գրչի արգասիք հանդիսացող գործերին, բերում է նաև մի շարք նմուշներ նրա գրական ժառանգությունից:

Վերջապես հարցին անդրադարձել է նաև իրանահայ վաստակաշատ բանասեր Լևոն Սինասյանը, որը Թեհրանում հրատարակվող «Ալիք» օրաթերթում 1949 թ. պատմագրի 200-ամյակի առիթով տպագրել է մի հոդված՝ «Պատմագիր Ստեփաննոս Երեց» վերտառությամբ³³: Հոդվածում բերվում են որոշակի տեղեկություններ Ստեփաննոս Երեցի կյանքի ու գրական ժառանգության մասին, ինչպես նաև մի քանի օրինակներ նրա հանելուկներից ու խրատներից: Ի դեպ, առաջին անգամը լինելով՝ այնտեղ ճշտվել են նաև պատմագրի ծննդյան և մահվան թվականները:

Շահաբբասյան մեծ գաղթի 350-ամյակի առթիվ Լևոն Սինասյանը կրկին անդրադառնում է այդ հարցին՝ հրատարակելով 47 էջից բաղկացած «Պատմագիր Ստեփաննոս Երեց. սեղմ տողեր նրա կյանքի ու գրականության մասին» գրքույկը, որը հրատարակվել է Թեհրանում 1956 թ.³⁴: Մուտքի «Երկու խոսքում» հեղինակը գրում է, որ «սույն մի քանի սեղմ տողերը՝ որպես մի համեստ ուսումնասիրություն արժանավոր, բայց մոռացված պատմագրի կյանքի ու գործի մասին, ներկայացնում ենք հայ գրասեր հասարակությանը՝ հույս ունենալով, որ մեկ օր էլ հնարավոր կլինի լույս ընծայել գեթ նրա «Պատմագիրքը»»:

Լևոն Սինասյանն իր գրքույկում առավելապես անդրադառնում է Ստեփաննոս Երեցի չափածո ստեղծագործություններին՝ բերելով նաև մի քանի նմուշներ: Նա ներկայացնում է նաև պատմագրի կենսագրությանը վերաբերող հարցերը և միայն հարևանցիորեն է անդրադառնում նրա «Պատմագրքին»:

Այսպիսով, թեև Ստեփաննոս Երեցի կյանքն ու նրա թողած գրական ժառանգությունը արժանացել է մի շարք ուսումնասիրողների ու շաղիքությանը, սակայն այդ ժառանգության ամենաարժեքավոր գործը՝ «Պատմագիրքը», այնուամենայնիվ, կարոտ էր ամբողջական

³³ Տե՛ս «Ալիք», թիվ 106 և 107, 16 և 17 մայիսի, 1949:

³⁴ Տե՛ս Լ. Սինասյան, Պատմագիր Ստեփաննոս Երեց. սեղմ տողեր նրա կյանքի ու գրականության մասին, Թեհրան, 1956:

հրատարակության, ընդ որում՝ նաև աշխարհաբարով հանրության լայն շրջանակներին մատչելի դարձնելու միտումով:

Ստեփաննոս Երեցի «Պատմագիրքը» սկզբից մինչև վերջ շաղախված է արցունքով, երբ նա նկարագրում է իր հարազատ ժողովրդի կրած տառապանքները: Հայության ցավերով տառապող հայրենասեր պատմագիրը, գիտնականի բժախնդրությամբ արձանագրելով իր ապրած ժամանակաշրջանի անցքերը, դառնությամբ ու սրտի անհուն կսկիծով նշում է, որ բոլոր տիպի իշխանավորների, բռնացողների, խռովարարների, անսանձ տարրերի չարագործությունների զոհը այդ մութ ու անապահով ժամանակներում առաջին հերթին դառնում էր անգեն, անպաշտպան, անտերունչ և իրավագույր կախությունը: Այդ բոլոր արնախում բռնավորներին պատմագիրն անվանում է «մարդադեմ գազան»:

XVII-XVIII դարերում հայ ժողովրդի անբաժանելի մասը հանդիսացող իրանահայությանը բաժին հասած աղետների ու դժբախտությունների հետևանքը, ըստ Ստեփաննոս Երեցի, անչափելի է: Նա այդ միտքը ձևակերպում է մի կարճ, բայց դիպուկ արտահայտությամբ «խարխուլ արար յերկիր մեր»:

«ՊԱՏՄԱԳՐՔՈՒՄ» («ՀԱՆԳԻՏԱԳՐՔՈՒՄ») ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱՆԻ ԵՎ ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

XVI դարի արշալույսին պատմության ասպարեզ էր իջնում իրանական մի հզոր պետություն, որը հայտնի է Սեֆյան կամ Սեֆեվյան պետություն անունով: Նրա հիմնադիրն էր շահ Իսմայիլ Ա-ն (1502-1524): Նորաստեղծ այդ պետական կազմավորման հիմնական հենարան էին մի շարք վաչկատուն թյուրքական ցեղեր, որոնք կրում էին «ղզլբաշներ» (թյուրքերեն «կարմրագլուխներ») ընդհանուր անվանումը, քանի որ այդ ռազմիկ քոչվորները որպես տարբերանշան գլխներին կրում էին տասներկու ալ երիզներով չալմա՝ ի պատիվ տասներկու շիական իմամների: Հենց այդ պատճառով Սեֆյանների պետությունը հաճախ անվանվում էր «ղոուլեթ-ի ղզլբաշ», այսինքն՝ «ղզլբաշական պետություն»:

Սեֆյանները որպես իրենց պետական-պաշտոնական կրոն ընդունեցին իսլամի շիական ուղղությունը, որը փոխարինելու էր գալիս սուննիական ալաիթի կոչված «ուղղադավան» իսլամին, որը դարեր շարունակ իրանական ժողովրդի դավանանքն էր: Շիականությունը վերածվեց գաղափարական հզոր գեների ընդդեմ օրըստօրե հզորացող Իրանի տարածաշրջանային ախոյանի՝ Օսմանյան կայսրության, որը տողորված էր ռազմաշունչ ծավալապաշտական ձգտումներով իր հարևան երկրների նկատմամբ:

Սեֆյան պետության ստեղծումով փաստորեն Պարսկաստանը փրկվեց նրան սպառնացող երկակի վտանգից՝ արևմուտքից Օսմանյան կայսրության վտանգից, իսկ արևելքից ուզբեկների շեյխանիական պետության հարձակումներից:

Սեֆյանների արքայատոհմը երկրի Պարսկաստան անվանումը փոխեց Իրանի, ինչպես եղել էր հնում: Ըստ այնմ՝ շահ Իսմայիլն ընդունեց «շահնշահ-ե Իրան» («Իրանի թագավորաց թագավոր») տիտղոսը:

Նորաստեղծ պետությունը, հատկապես իր գոյության սկզբնական շրջանում ուներ շեշտված աստվածապետական բնույթ: Շահ

Իսմայիլը ոչ միայն պետության գլուխ էր, այլև շիաների գերագույն հոգևոր առաջնորդ: Անկասկած նրա ստեղծած պետությունը ազգային իրանական պետություն էր, թեև ազգայնականության մոլուցքով տարված մերօրյա աղյրբեջանցի պատմության կեղծարարներն անհիմն կերպով այն համարում են «մաքուր աղյրբեջանական»:

Սեֆյան պետությունը իր ռազմական ու տնտեսական հզորության գագաթնակետին էր հասել շահ Աբբաս Ա-ի (1587-1629) կառավարման տարիներին: Նրա օրոք խոշոր հաջողություններ ձեռք բերվեցին նաև արտաքին քաղաքականության բնագավառում: Շահ Աբբաս Ա-ն իրեն դրսևորեց որպես վճռական և ընդունակ քաղաքագետ և շրջահայաց ու խիզախ ռազմական գործիչ: 1598 թ. Սեֆյան պետության մայրաքաղաքը առավելապես թյուրքալեզու բնակչություն ունեցող Ղազվին քաղաքից տեղափոխեց հարավ՝ պարսկական էթնոտով շրջապատված Սպահան քաղաքը: Նրա այդ քայլը հետապնդում էր պետության մեջ թյուրքական ազդեցությունը թուլացնելու և ընդհակառակը՝ իրանական տարրը ուժեղացնելու կամ երկրի «իրանականացման» նպատակը: Նրա օրոք Սեֆյան պետությունը մի շարք հաղթանակներ տարավ արևմուտքից Իրանին սպառնացող Օսմանյան կայսրության և արևելքից ուզբեկական խաների դեմ: Այս տիրակալը կարողացավ Օսմանյան կայսրության նկատմամբ ձեռք բերել մի շարք ռազմական հաղթանակներ և դրանով իսկ կասեցնել յանիչարիական գնդերի անգուսպ առաջխաղացումը դեպի Ատրպատական և Կասպից ծովի ավազանը: Իզուր չէ, որ Աբբաս Ա-ը իր երկրի պատմության մեջ է մտել «քեբիր» («մեծ») պատվանունով:

Թեև Ստեփաննոս Երեցը իր երկում անդրադառնում է Իրանի պատմության, ինչպես նաև այդ երկրում հայ համայնքի հետ կապված հարցերին՝ սկսած շահ Աբբաս Բ-ի (1642-1666) կառավարման վերջին շրջանից (1666 թվականից), սակայն դրանով հանդերձ, ճիշտ է բռնցիկ կերպով, քանի որ նա իշխել է իր ապրած ժամանակաշրջանից բավականաչափ առաջ, ներկայացնում է նաև իրանահայ գաղթօջախի ընդհանուր պատկերը սկսած XVII դարի սկզբներից, երբ շահ Աբբաս Ա-ն իրագործեց ուշ միջնադարի պատմության մեջ աննախադեպ՝ Արևելյան Հայաստանի, մասամբ նաև Արևմտյան Հա-

յաստանի հայության զանգվածային բռնագաղթը Իրան, որն անջնջելի հետք է թողել հայ ժողովրդի՝ հետագա ողջ պատմական ճակատագրի վրա: Այդ տարագրության հետևանքով հայրենագրկվեց և դատապարտվեց առհավետ կտրվելու իր հայրենի բնօրրանից հայ ժողովրդի մի հսկայական զանգված: Անդրադառնալով այդ եղերական իրադարձությանը և ամենայն հավանականությամբ օգտվելով Առաքել Դավրիժեցու «Պատմություն»-ից՝ Ստեփաննոս Երեցը գրում է, որ պարսից բռնակալ շահը «հայ, տաճիկ³⁵ և հրեա բնակիչներին քշեց տարավ և բնակեցրեց Սպահանում և նրա շրջակա գավառներում»³⁶: Հայտնի է, որ իր պետության համար ռազմավարական կարևորություն ունեցող իր այդ քայլով շահը մտադիր էր Իրանի և նրա ախոյան Օսմանյան կայսրության միջև ստեղծել «այրված հողի» մի տարածք, թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի իր տիրույթները կասեցնելու համար: Շահի ծրագրերի մեջ էր մտնում նաև գաղթեցված հայ բնակչության միջոցով զարկ տալ Իրանի առևտրին, արհեստներին և առհասարակ տնտեսական կյանքին: Հենց այդ նպատակով նա Իրան գաղթեցված հայ բնակչությանը շնորհեց մի շարք իրավունքներ ու արտոնություններ: Դավրիժեցին վկայում է, որ շահը «շնորհեաց նոցա (հայերին – Վ. Բ.) ազատութիւն կրոնից՝ և արտոնութիւն ազատ քաղաքացիութեան: Նա յօժար կամօք հրամայեաց զեկեղեցիս շինել յամենայն տեղիս ի Ջուղայ և ի գիւղօրայս, նաև ի մէջ բերդի քաղաքին՝ մեծանիստ և բարձրաշէն, և այնքան յօժարութեամբ մինչ զի և ինքն յորդորէր զքրիստոնեայս շինել զեկեղեցի: Եւ յաւուրս մեծամեծ տօնից՝ Յարուէ և Համբարձման և յայլսն գայր յեկեղեցիսն՝ և ուրախանայր ընդ Քրիստոնէից: Չամենայն կարգ զաւանդութիւնս քրիստոնեական համարձակութեամբ կատարէին քրիստոնեայք, զկոչնակ հարկանել, զժամ կոչել, և զջրօրհներն մեծախումբ հանդիսիւ առնել, այլև ինքն Շահն ևս գայր ի Ջրօրհներն և ուրախանայր ի տեսութիւնն: Եւ զմեռեալսն խաչվառով

³⁵ Հայ իրականության, այդ թվում նաև պատմագիտական գրականության մեջ «տաճիկ», «տաճիկներ» բառն գործածվել են «մահմեդական որևէ անձ, որևէ ժողովուրդ կամ երկիր» իմաստով: Օրինակ՝ Օսմանյան կայսրությունը կոչվել է Տաճկաստան:

³⁶ Ստեփաննոս Երեց, էջ 148:

և ձայնի շարականաւ հանեալ ի քաղաքէն անցուցանէին ընդ մէջ շուկային և տանէին ի թաղել, և ոչ որ ի Պարսից ազգէն եպերանաց և հայոյանաց բանս ասէր. և այսու օրինակաւ բազում և պէսպէս կերպիւ հաճոյացուցանէր Շահն զմիտս Քրիստոնէից, որոր մնացին յաշխարհն Պարսից: Եւ այնքան համարձակութիւն ետ Շահն քրիստոնէից մինչ ի հրապարակս և ի շուկայս, թէ հանդիպէր կազ և կռիւ քրիստոնէից ընդ մահմեդականաց, համահաւասար զմիմիեանս հարկանէին և հայոյէին առանց երկիւղի»³⁷:

Իհարկե գաղթեցված հայութիւնը օգտվում էր շարիաքական օրենքներով այլադավան «զիմմիներին» հատկացվող բոլոր հասարակական և անձնական իրավունքներից, եթե անշուշտ հայերի ու այլ դավանանքի հետևորդների կողմից այդ իրավունքները հարգվէին և լոյալ վերաբերմունք դրսևորէին դեպի մահմեդական պետութիւնն ու նրա օրոնքները:

Առաքել Դավրիժեցին, հավանաբար, հիմնալի գիտակցել է շահ Աբբասի «քրիստոնէասիրության» հետին դրոյապատճառները, ուստի նրա կրոնական հանդուրժողականությունը դրվատելով հանդերձ, նրան անվանում է «վիշապ անդնդային»:

Ստեփաննոս Երեցը համամիտ է Առաքել Դավրիժեցու բերած տվյալներին, որ շահ Աբբաս Ա-ի կառավարման շրջանում հայերն օգտվում էին որոշակի իրավական ու կրոնական բնույթի արտոնություններից ու իրավունքներից: Ի հաստատումն դրա՝ նա բերում է Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքի, Ջուղայի եկեղեցիների կառուցման վերաբերյալ շահական կառավարության շնորհած արտոնության փաստարկը:

Ստեփաննոս Երեցը իր երկում բազմիցս հիշատակում է իր համար հարազատ վայրերի՝ Փերիայի, Բուրվարի, մասամբ նաև Իրանի այլ հայաբնակ գավառների կյանքի, նրանցում բնակվող հայ բնակչության դժվարին վիճակի մասին: Հայտնի է, որ XVII դարում մեծ բռնազաղթի ժամանակ շահ Աբբաս Ա-ն գյուղական հայ բնակչության մի հոծ զանգված (12 հազար ընտանիք, մինչև 70000 մարդ)

³⁷ Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 63:

բնակեցրել էր կենտրոնական Իրանում՝ երկրի այն ժամանակվա մայրաքաղաք Սպահանից արևմուտք, հյուսիս-արևմուտք և հարավ-արևմուտք ընկած գավառներում (Փերիա, Բուրվար, Չհարմահալ, Քյամարա, Լնջան, Ալնջան, Քյարվանդ, Քյազազ, Ջափլադ, ավելի ուշ՝ Ղարադան): Ստեփաննոս Երեցի բնակության վայրը՝ Փերիան (Սպահանից հյուսիս-արևմուտք) եղել է Սեֆյան Իրանի առավել հայաշատ գավառը: Փերիայի հայությունը շահ Աբբաս Ա-ի կողմից գաղթեցվել է հիմնականում Մեծ Հայքի Վասպուրական նահանգից (Վան, Արճեշ, Արծկե):

Բուրվարը (Սպահանի հյուսիս-արևմուտք) դարձյալ եղել է Իրանի հայաշատ գավառներից մեկը: Բուրվարի հայ բնակչությունը հիմնականում գաղթեցվել է Մեծ Հայքի Մանազկերտի, Ալաշկերտի և Կարս-Կաղզվանի շրջաններից: Ստեփաննոս Երեցի կողմից պատմվող իրադարձությունների կիզակետում հենց վերոհիշյալ հայախոծ գավառներն են, որոնց բնակչության ծանր ու անապահով կյանքին պատմագիրը բազմիցս անդրադարձներ է կատարում:

Շահ Աբբաս Ա-ն առանձնահատուկ իրավունքներ ու արտոնություններ էր շնորհել Նոր Ջուղայի հայ բնակչությանը այն ակնկալիքով, որ միջազգային առևտրով զբաղվող նրա վաճառականները զարկ կտան Իրանի առևտրին և գործարար կյանքին՝ հարստացնելով պետական գանձարանը: Ինչ վերաբերում է գաղթեցված հայ բնակչության մնացած զանգվածներին, որոնց զբաղմունքը հիմնականում հողագործությունն ու անասնապահությունն էր, ապա այն մատնված էր ծայրահեղ թշվառության, ինչպես նաև կյանքի ու գույքի անապահովության պատճառով նաև հուսահատության: Ստեփաննոս Երեցը սրտի մորմոքով է նկարագրում նրանց այդ վիճակը: Այդ դառնալիքի իրողությանը անդրադարձել է նաև Առաքել Դավրիժեցին: «Եւ ազգն հայոց որ եկին յԱսպահան,– գրում է նա,– զատ ի Ջուղայեցոց և յԵրևանցոց ամենեքեան չքաւորեցան ... զի զոր ինչ ունեին վաճառեցին և կերան»³⁸:

³⁸ Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 54:

Գուցե թե ոչ այնքան կարիքն ու թշվառությունը, որքան հայրենի եզերքի կարոտը չէր թողնում, որ տարագրյալները ամբողջովին հարմարվեն օտար երկրում իրենց կյանքի նոր պայմաններին և ապրեն լիարժեք կյանքով: Նրանց երազանքն էր վերադառնալ հայրենիք: Հարկավ, դա անհասկանալի էր հայերին հայրենագրկողին: Առաքել Դավրիժեցու վկայությամբ շահ Աբբասը ցանկանում էր իր համար պարզել հետևյալ հարցը. թեև իր ասելով ինքը «խնամակալ է ազգին հայոց» և «զամենայն զգործ և զբանս նոցա ըստ կամաց նոցա կատարե», սակայն ինչո՞ւ հայերը ջերմությամբ չեն վերաբերվում «յաշ-խարիս Սպահանայ, զի շէն աշխարի է», իսկ հայոց աշխարհը աղքատ է և գտնվում է թշնամու՝ օսմանցիների «բերանում» և միշտ ենթակա է ասպատակության, ավարի ու գերության: Առաքել Դավրիժեցու վկայությամբ հանդիմանելով գաղթեցված հայերին և փաստորեն ցանկանալով իր համար պարզել նրանց դժգոհության ու տրտունջների պատճառները, շահն ասում է. «զինչ այլ ևս բարիս արասցէ ձեզ շահն, զի յայսպիսում լաւ և վայելուչ երկրի բնակեցուցեալ և յապահով պահէ զձեզ յամենից նեղութեանց, և քաղցրութեամբ և գթով վարի ընդ ազգիս ձերում»³⁹: Որպես պատասխան, շահը լսում է, որ հայոց աշխարհում են գտնվում «գերեզմանատունք հարց և նախնեաց նոցա և վանորայք, և ուխտատեղիք, որ դամբարանք են սրբոց, և մանաւանդ Մեծահանդէս Աթոռն սուրբ Էջմիածին»⁴⁰: Նաև համարձակվում են շահի երեսին ասել. «Երանի թէ ոչ էր բերեալ զմեզ՝ զի վտարանդի արարեալ էիան զմեզ ի նախնի աշխարհէն մերմէ, ի բնիկ տեղեաց, և ի հայրենի ժառանգութեանց, և բերեալ աստեն յօտար աշխարհի բնակեցոյց պանդխտութեամբ»⁴¹:

Ստեփաննոս Երեցը կատարելապես համամիտ է բախտակից հայրենակիցների հիշյալ մտայնությանը: Այդ ամենը կարմիր թելի պես անցնում է նրա «Պատմագրքի» բոլոր էջերում:

1629 թ. շահ Աբբաս Ա-ի մահվանից հետո Սեֆյան արքայատան գահը ժառանգեց նրա թոռը՝ շահ Սեֆի Ա-ն (1629-1642): Վերջինիս

³⁹ Առաքել Դավրիժեցի, էջ 164:

⁴⁰ Առաքել Դավրիժեցի, էջ 161:

⁴¹ Անդ, էջ 164:

օրոք թեև իրանահայությունը ընդհանուր առմամբ ապրում էր հարաբերական խաղաղության պայմաններում, սակայն հայ ժողովուրդը ենթարկվեց նոր աղետի՝ Օսմանյան սուլթան Մուրադ Դ-ն (կառավարել է 1623-1640 թթ.) հարձակվեց Հայաստանի վրա, զորաշարժ կատարելով նաև դեպի Իրանի տարածքը: Թուրքական զորքերը գրավեցին Երևանը, կրակի մատնեցին Նախիջևանն ու Թավրիզը, սրի քաշեցին Համադանի և մի շարք այլ քաղաքների բնակչությանը, որտեղ տեղաբաշխվել էին շահ Աբբաս Ա-ի կողմից տարագրության ենթարկված հայության խոշոր զանգվածներ: 1639 թ. Ղասրե-Շիրինում (Չոհաբում) կնքված թուրք-իրանական խաղաղության պայմանագրով Հայաստանը բաժանվում էր Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև, հայ ժողովրդին զրկելով միասնական քաղաքական ու տնտեսական կյանք ունենալու հնարավորությունից:

1642 թ. Սեֆյան գահ բարձրացավ Աբբաս Բ-ն (1642-1666), որը Սեֆի Ա-ի որդին էր: Նա հայտնի է նաև շահ Աբբաս Փոքր անունով: Վերջինիս օրոք Սեֆյան պետությունը գեթ արտաքուստ դեռևս ապրում էր վերելքի շրջան: Իրանական զորքերը հետ նվաճեցին Ղանդահարը (1649 թ.), որը գտնվում էր Հնդկաստանի տիրակալ Մեծ Մողոլ Ջհանշահի տիրապետության ներքո: Հաջողություն գրանցվեց նաև երկրի անվտանգությանը արևելքից սպառնացող ուզբեկական հարցում: Նրա օրոք Օսմանյան կայսրության և Իրանի միջև ստեղծված կայուն խաղաղությունը նպաստում էր երկու երկրների տնտեսական վերելքին և առևտրական հարաբերությունների զարգացմանը: Չաքարիա Սարկավագ պատմիչը վկայում է, որ Կ. Պոլսից մինչև Սպահան վաճառականների երթևեկությունը տեղի էր ունենում «առանց երկյուղի և ահու»: Ցամաքային քարավանային ճանապարհներին, ինչպես և շահ Աբբաս Ա-ի ժամանակներում, գերակշիռ դիրքեր ունեին միջազգային առևտրով զբաղվող հայ վաճառական-խոջաները, մասնավորապես՝ չուղայեցիները:

Ինչպես նշվել է վերևում, Ստեփաննոս Երեցի՝ «Պատմագրքում» նկարագրվող իրադարձությունները հիմնականում սկիզբ են առնում Իրանի այդ նոր տիրակալի կառավարման վերջին տարիներից սկսած, ավելի հստակ՝ 1666 թվականից:

Մեր պատմագիրը շահ Աբբաս Բ-ին բնորոշում է որպես «յոթ քրիստոնեասեր և շինարար թագաւոր»: Որպես հոգևորական՝ նրան հատկապես մեծ գոհունակություն է պատճառել այն, որ ընդառաջելով Փերիա գավառի հայության խնդրանքին, շահը հատուկ հրամանագրով թույլ էր տվել, որ Հազարջրիբ գյուղում կառուցվի Սուրբ Աստվածածին եկեղեցին: Գուցե հենց դա էր պատճառը, որ պատմագիրը այդչափ մեծարում է Աբբաս Բ-ին: Սակայն պարզվում է, որ մեր պատմիչներից շատերն են դավատում նրան և նրա կառավարման ժամանակաշրջանը: Սակայն շահ Աբբաս Բ-ի կերպարը և նրա գործունեությունը հակասական գնահատանքի է արժանացել ժամանակակիցների կողմից: Ոմանք նրան ներկայացնում են որպես քրիստոնյաների նկատմամբ հանդուրժող և բարեհաճ տիրակալի: Այսպես, օրինակ, Գանձասարի Եսայի կաթողիկոսը շահ Աբբաս Բ-ի մասին գրում էր. «Յաւուրս սորա շինեցան ամենայն աւերակ գետօք և քաղաքք, և երկիր աշխարհիս հայոց և պարսից, զի կարի քրիստոնեաւեր և աշխարհաշէն էր, որոյ աղագաւ հաստատեցան յամենայն տեղիս եկեղեցիք, վանօրայք, և անապատք, մանաւանդ սուրբ աթոռն Էջմիածին և սուրբ Գանձասարայ յԱղուանս, առ սրբազան հայրապետին Փիլիպոսաւ և Պետրոս կաթողիկոսին Աղուանից»⁴²:

1660 թվականին գրված մի հիշատակարանում շահ Աբբաս Բ-ի մասին կարդում ենք. «սիրէ զազգս քրիստոնէից մինչ զի ընդ իւր նստուցանէ զջուղացիքն նման հաւոյն իւրոյ»⁴³: Այդ նույն տեսակետին մենք հանդիպում ենք նաև Ջաքարիա Սարկավագի երկում. «Եւ էր սիրող քրիստոնէից... Այլ և գնայր ի տունս քրիստոնէից՝ և ի հարսանիս՝ և ի պատիւս, և ոչ խտրէր: Այլ էր ուղղադատ և իրաւարար: Եւ այսպէս եկաց նա ի կենդանութեան իւրում»⁴⁴:

Շահ Աբբաս Բ-ի մասին դրականորեն է արտահայտվել նաև Մեսրոպ Թաղիադյանը: «Սա էր խիստ առ բռունս, և հեզ առ աղ-

⁴² Եսայի կաթողիկոս, Պատմութիւն կամ Յիշատակ ինչ ինչ անցից ղիպելոց յաշխարհին Աղուանից, Շուշի, 1839, էջ 15:

⁴³ Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. թիվ 754, ք. 406բ:

⁴⁴ Ջաքարեայ Սարկավագի Պատմագրութիւն, հատ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 34:

քատս, քաղցրութեամբ ականէր առ Քրիստոնեայս, գորոյ ընդ աթոռոյ և ջանսն ժառանգէր»⁴⁵:

Լեհ Ճիզվիթ միսիոներ Յուլէ Կրուշինսկին նույնպէս Իրանի այդ տիրակալին ներկայացնում է որպէս քրիստոնեության և քրիստոնյաների նկատմամբ հանդուրժող և բարեկամ: «Նա մեծ ու ազնիվ հոգի ուներ, շատ բարի էր օտարների նկատմամբ և բացելիքաց հովանավորում էր քրիստոնյաներին»⁴⁶:

Շահ Աբբաս Բ-ի և նրա ժամանակաշրջանի վերաբերյալ այդ նույն կարծիքի հետ համամիտ էր նաև ավելի ուշ շրջանի հեղինակ Հարություն Տեր-Հովհանյանը, որը գրում է. «Ի ժամանակս թագաւորութեանն երկրորդ Շահ Աբբասայ առաւել ծաղկեցան վաճառականք կամ նահապետութիւն Ջուլայոյ»⁴⁷:

Սակայն Աբբաս Բ-ի մասին կան նաև բացասական կարծիքներ, որ նա թույլ կամքի տէր, հարբեցող ու վավաշոտ մեկն էր: Այդպիսի կարծիք են հայտնել, օրինակ, նրա ժամանակակից Կարմէյան կաթողիկոսական միաբանության միսիոներները, որոնց գործունեության կենտրոնը մայրաքաղաք Սպահանն էր: Հռոմ ուղարկված մամակներում նրանք գրում էին, որ սուտ են այն բոլոր խոսքերը, որ ասվում է շահի մասին, թե իբր նա մեծ ու ազնիվ հոգի ունի, շատ բարի է, աջակցում է օտարականներին և մասնավորապէս քրիստոնյաներին: Նույն միաբանության միսիոներ հայր Դիոնիսիոսը գրում էր, որ շահի «սրտի մաղձը անտանելի է», որ նա հրամայել է բոլոր հրեաներին, հայերին և մանղեականներին (sic) պարտադրել իսլամը»⁴⁸:

Աբբաս Բ-ի կրոնական անհանդուրժողականության վերաբերյալ վկայում է նաև Առաքել Դավրիժեցին: «Էհտիմալ-Դովլաթն (իթիմաղ-աղ-դոուլէ՝ Սեֆյան արքունիքում, երկրորդ դեմքը շահից հետո – Վ. Բ.) հրովարտակ հանեալ ի թագաւորէն առաքեաց ընդ ամենայն աշխարհս տէրութեանն Պարսից... զի ուր և իցեն ազգք և ժողո-

⁴⁵ Թադիսդեան Մ., Պատմութիւն Պարսից, հ. Ա, Կալկաթա, 1846, էջ 176:

⁴⁶ Krusinski J. T., The History of the Late Revolutions of Persia, v. I-II, N. Y., 1973, p. 52.

⁴⁷ Յ. Տեր-Յովհաննէանց, նշվ. աշխ., հ. 1, էջ 82:

⁴⁸ A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII-XVIII centuries, Vol. I-II, London, 1939, p. 364.

վորոք հրեից թէ ի զիւսս և թէ ի քաղաքս ամենեքեան թողցեն զօրէնս հրեութեան և ստասցին զօրէնս Մահմետի, որք կամաւ հնազանդեսցին բարութք է, և որք ընդդիմասցին՝ բռնութեամբ և տանջանօք ածցեն իշխանքն զայնպիսիսն ի հաւատն պիծոյն անապատի»⁴⁹:

Նկարագրելով բռնի ուժով հրեաներին իսլամը պարտադրելու իշխանությունների գործելակերպը, պատմիչը գրում է. «Այլք և զօրականս ի տունս նոցա առաքէր առ ի զինչս նոցա յաւարել և զկանայս նոցա խայտառակել»⁵⁰: Ներկայացնելով այլադավանների նկատմամբ իրագործվող քաղաքականության զագրելի նրբությունները, Դավրիժեցին հաղորդում է. «Այլ և օրինադրեցին հրեից զի զդատեսս իրեանց տացեն մահմեդականաց, և դստերաց նոցա ինքեանք առցեն»⁵¹: Նման պայմաններում հրեաների և առհասարակ բոլոր այլադավանների համար պաշտպանվելու միակ միջոցը կաշառքն էր կամ պարգապես փախուստը: «Եւ ամենայն ազգն հրեից,– վկայում է Դավրիժեցին,– ուր և կային, ոչ կամէին մտանել յօրէնս Մահմետի, այլ ոմանք կաշառօք, և ոմանք փախստեամբ, և ոմանք՝ այլ ինչ հնարիւք գերծանէին»⁵²: Առավել համառների համար, որոնք նույնիսկ հրաժարվում էին ընդունել իսլամը իրենց կյանքի գնով, սահմանված էր նվաստացուցիչ պատժամիջոց: «Որովհետև ոչ կամիք մեկնիլ ի հրեութենէն, առէք ի վերայ ձեր գնշան ինչ յայտնի, որով ամենայն տեսողք ծանիցեն ձեզ, թէ հրեայ էք»⁵³:

Ինչ վերաբերում է շահ Աբբաս Բ-ի իրականացրած քաղաքականությանը իրանահայության նկատմամբ, ապա այն անսքող կերպով կրում էր հակասական բնույթ: Մի կողմից հետևելով իր նախորդների, մասնավորապես շահ Աբբաս Ա-ի քաղաքականությանը Նոր Ջուղայի առևտրական կապիտալի ներկայացուցիչներին հովանավորելու ուղղությամբ, որը պահանջում էր պետական շահը, ինքը ևս վարվում էր նույն կերպ, պաշտպանելով մեծահարուստ խոջաների շահե-

⁴⁹ Դավրիժեցի, էջ 477:

⁵⁰ Անդ, էջ 479:

⁵¹ Անդ, էջ 467:

⁵² Անդ, էջ 480:

⁵³ Անդ:

րը, որոնց առևտուրը մեծ եկամուտներ էր բերում գանձարանին, սակայն մյուս կողմից նա իր հպատակ հայերի նկատմամբ ևս, ինչպես մյուս այլադավանների, վարում էր կրոնական անհանդուրժողականության քաղաքականություն, առանձին դեպքերում նաև սքոլված ձևերով:

Սպահանից Հռոմ ուղարկած նամակում Կարմելյան միաբանության կրոնավոր հայր Կորնելիուսը՝ ցավով նշում էր, որ Պարսկաստանում «իրենց սուրբ հավատի համար հեռանկարները այնքան էլ գոհացուցիչ ու մխիթարական չեն»⁵⁴: Նույն միաբանության միսիոներ հայր Ֆրենսիսը Շիրազից նամակով տեղեկացնում էր միաբանության ղեկավարությանը, որ «Էթեմադ-ուդ-դովեն անչափ թշնամաբար է տրամադրված քրիստոնյաների նկատմամբ և կատարելով շահի հրամանը, կարգադրել է նրանց վտարել Սպահանից, իսկ Ջուդայում հայերին և հրեաներին ստիպել է ընդունել իսլամը: Շատ հայեր մահմեդականություն են ընդունել»⁵⁵:

Առհասարակ իրենց նամակ-գեկուցագրերում միսիոներները խորը տագնապով տեղեկացնում էին իրենց կենտրոնին, որ շատ հայեր, վրացիներ, ասորիներ, հրեաներ, գրադաշտականներ և այլն ընդունում են մահմեդականությունը ոչ միայն պարտադրանքի ուժով, այլև ամուսնությունների միջոցով⁵⁶:

1650 թ. Աբբաս Բ-ն հրապարակեց հրովարտակ այն մասին, որ մահմեդականները չմիջամտեն Նոր Ջուդայի հայերի դատական գործերին և շարիաթական օրենքը պատրվակ չդարձնեն նրանց նեղելու համար: Հիշյալ հրովարտակով հայերին թույլատրվում էր իրենց միջև ծագած վեճերը հարթել հայ հոգևորականների միջոցով և միայն կողմերից մեկը մահմեդական լինելու դեպքում անպայման դիմեն իսլամական դատական ատյանին՝ շարիին: Անկասկած սա հայերին հատկացված արտոնություն էր: Սակայն հենց այդ նույն 1650 թ. շահը հրամայեց իր մայրաքաղաք Սպահանում պարսիկ բնակչության հետ խառը բնակվող հայերին տեղափոխվել Նոր Ջու-

⁵⁴ A Chronicle of the Carmelites, Vol. I, p. 366.

⁵⁵ Նույն տեղում:

⁵⁶ Նույն տեղում, էջ 367:

դա: Այդ միջոցառման պաշտոնական բացատրությունն այն էր, որ բանի դեռ հայերը խառը բնակվում են մահմեդականների հետ, հնարավոր չէ իրագործել շահի հրամանագիրը Սպահանում գինու վաճառքը խստիվ արգելելու մասին: Մուսուլմանները շահի մոտ ամբաստանել էին հայերին, թե «նոքա գինարբու ազգ են և համապազ գինեաւ պղծեն գջուրն»: Ի կատարումն շահական հրամանի, Սպահանի Երևան, Շխսապան հայաբնակ թաղերի հայ բնակչությանը բռնի տեղահան արեցին և գաղթեցրին Ջենդերուդ գետի մյուս ափը՝ Նոր Ջուղա: Այսպիսով, մայրաքաղաքը բաժանվեց երկու մասի. գետի հյուսիսային կողմում գտնվող Սպահանը ունեցավ զուտ մահմեդական բնակչություն, իսկ հարավային կողմում գտնվող Նոր Ջուղան՝ զուտ հայկական բնակչություն:

«Սպահանի հայոց քշվիլը,- նկատում է Հ. Աճառյանը,- օգտակար եղավ հայերի համար, որովհետև ասով գերծ մնացին պարսիկներու հետ խառնվելէ, հավատուրացությունէ և Նոր Ջուղային տվին այն առավելությունները, որ կունենա խիտ և համատարր ազգաբնակչություն մը⁵⁷: Բացի այդ, Նոր Ջուղան ընդարձակվեց դեպի արևմուտք, հիմք դնելով «Երևան» և «Թավրիզ» անուններով նոր թաղամասերի:

Իրականում այդ քաղաքականությունը իր մեջ պարունակում էր այլաձևերության և կրոնական անհանդուրժամտության ակնառու տարրեր: Նրա նպատակն էր այլադավաններին մահմեդականներից մեկուսացնելը, որը լայնորեն կիրառվում էր նաև Իրանի հետագա ժամանակաշրջանների իշխողների կողմից ևս: Այդ բանը կռահել է նաև Առաքել Դավրիժեցին, որի կարծիքով գինու այդ պատմությունը լոկ պատրվակ էր: Մահմեդականները,- գրում է նա,- «սկսան հարստահարել գղաշտեցի քրիստոնեայսն, զի արտաքսեցեն գնոսա ի տեղուջէն, որպէսզի ինքեանք ընդարձակութիւն լիցի»⁵⁸:

Այն հանգամանքը, որ շահ Աբբաս Բ-ի հիշյալ քաղաքականությունը պայմանավորված չէր «գինու գործոնով» վկայում է այն, որ

⁵⁷ Աճառյան Հ., Պատմություն հայ գաղթականության, Երևան, 2002, էջ 229:

⁵⁸ Դավրիժեցի, էջ 448, 457-461:

1657 և 1659 թվականներին նույնպիսի քայլեր ձեռնարկեցին նաև գյարբերի (գրադաշտականների – Վ. Բ.) և հրեաների նկատմամբ⁵⁹ ճիշտ է, օգտագործելով այլ պատրվակներ:

Աբբաս Բ-ի կառավարման շրջանում ժամանակ առ ժամանակ ծայր էին առնում հայերի նկատմամբ հալածանքներ, նրանց ունեցվածքի բռնագավթումներ, իրականացվում էր բռնի կրոնափոխություն: Թավրիզի և Արդեբիլի հայկական գաղթօջախներում տեղի ունեցան հայ բնակչության կոտորածներ, որոնց իրականացնող թուրքերը կործանեցին Թավրիզի Ս. Աստվածածին եկեղեցին՝ այն վերածելով մզկիթի, մոլեռանդ ամբոխի կողմից կործանվեց նաև Արդեբիլի հայկական եկեղեցին: Առաքել Դավրիժեցին գրում է, որ այդ եղերական իրադարձությունները տեղի են ունեցել Փիլիպպոս կաթողիկոսի ժամանակ (1633-1655 թթ.):

Շահ Սուլեյման Ա-ի (նրան կոչել են նաև Սեֆի Բ, (1666-1694) կառավարման շրջանի վերաբերյալ Ստեփաննոս Երեցի երկում պարզորոշ ուրվագծվում է այն իրողությունը, որ Սեֆյան պետության մեջ արդեն սկսվել էր տնտեսական, քաղաքական և ռազմական ճգնաժամ, որը միտում ուներ խորանալու և ծավալվելու: Ներքին և արտաքին առևտուրը սկսել էր նկատելի անկում ապրել: Երկիրը դարձել էր տնտեսապես քայքայված, միջավատական ներհակություններով պառակտված, ներքին ապստամբություններով բռնված, արտաքին նվաճողների հարձակումներին ենթակա մի երկիր: Եռանդի ու կարողության փոխարեն երևան էր եկել տիրողների անհոգությունը: Իրանի նախկին հզորությունն ամենից շատ ջլատել էր նրա՝ ասիական կառավարման հռոշի համակարգը: Ռազմական առումով պետությունն այն աստիճանի էր թուլացել, որ արևելքում ուզբեկական խաների ու աֆղանների ակտիվությունը և նրանց հաճախակի հարձակումները Սեֆյան պետության սահմանների վրա այլևս լուրջ դիմադրության չէին հանդիպում: Արևմուտքից անընդհատ հարձակումներ էին գործում անհանգիստ քրդական ցեղերը, հյուսիսից՝ Դաղստանի կողմից, Շիրվանի համար սպառնալիք էին ստեղծել իս-

⁵⁹ Անդ:

լամի սուննիականությունը դավանող ռազմաշունչ լեզգիական ցեղերը, որոնց ապստամբական շարժումները և Իրանի տարածքում ասպատակ սփռելը խրախուսվում էին դավանակից Օսմանյան կայսրության կողմից: Միայն ասիական ժողովուրդներին հատուկ չէին գիշատիչ բնազդները: Օգտվելով իրանական պետության թուլությունից՝ հողանդացիները Պարսից ծոցում գրավեցին Իրանին պատկանող Ղեշմ կղզին: Շահ Սուլեյմանի քսանութ տարվա տիրապետությունը ո՛չ տնտեսական վերելքի և ո՛չ էլ մշակութային կյանքի բնագավառում արժանահիշատակ ոչինչ չարձանագրեց Սեֆյան պետության տարեգրության մեջ: Նրա հոռի վարչակարգը իր հետ բերում էր բարքերի անկում, բարոյական սկզբունքների խաթարում և այլանդակում: Մեսրոպ Թաղիադյանը Իրանի այդ շահնշահին բնութագրում է որպես «իմքնին անարի և թույլ տիրակալ»⁶⁰: Նրա օրոք սաստկացավ մահ իրանահայության նկատմամբ ծանրացած հարկային մամլիչը:

Շահ Սուլեյմանը Սեֆյան արքայատան շահերից առաջինն էր, որը խախտեց շահ Աբբաս Ա-ից սկսած և նրա հաջորդ շահերի օրոք շահական ֆիրմաններով (հրամանագրերով) հաստատված կարգը, ըստ որի՝ հայկական եկեղեցիներն ու եկեղեցական կալվածքները օգտվում էին հարկային «իմունիտետից», այսինքն՝ ազատվում էին ամեն տեսակի հարկեր ու տուրքեր վճարելու պարտավորությունից: Ավելին, մահ հայկական վանքերի ու եկեղեցիների վրա դրեց պարտադիր տարեկան հարկ («մուղադա»), որը զանձվելու էր ի հավելումն «արքունական հարկի»:

Հայկական սրբավայրերի համատարած կողոպուտի պատճառով սարսափի մատնված հայ հոգևորականությունը, իր գլուխն ազատելու համար, տուն-տեղ թողած, դիմում էր փախուստի՝ ով ուր կարողանում էր:

Ավելի սեղմելով հայ բնակչության վրա ճնշող մամլիչը «աղարտելով զսահմանս պարկեշտութեան»՝ շահ Սուլեյմանը Նոր Ջուղայի վրա դնում է մահ ոչ պակաս ծանր, միևնույն ժամանակ նվաստացուցիչ «աղջկահարկ»՝ պահանջելով, որ հայերը իր հարեմի համար աղ-

⁶⁰ Թաղիադյան Մ., նշվ. աշխ., էջ 178:

ջիկներ տրամադրեն: Այդ բռնավորի օրոք լայն տարածում էր գտել «աղջիկ քաշելու» պրակտիկան, որի պատճառով այլադավան բնակչությունը, այդ թվում՝ նաև հայերը, իրենց դուստրերին ամուսնացնում էին յոթ, ութ և ինը տարեկանում, որպեսզի խուսափեն իրենց զավակների կորստից:

Այդ ամենին գումարվում էին ներքին խառնակությունները և հայությունը հայտնվում է ուղղակի անտանելի վիճակում:

Շահ Սուլեյմանի օրոք իրանահայության գլխին մշտապես կախված էր կոտորածի վտանգը: Այդ առթիվ ձեռագրերից մեկում ասվում է. «Թվին Ռ-ՃԺԵ (1666) Ալիդուլի խանն (առաջին վեզիրը – Վ. Բ.) հայոց ազգես վատ ասաց շահ Սուլեյմանին և թագաւորն կամէր կոտորել զհայոց ազգս և որ էին ի Ջուղայ: Բայց Ալիդուլի խանն կրկին ինքն բարեխոս անկաւ: Շահն բաշխեց նմա զղաթլամ առնելն և էառ ճառիմա (տուգանք – Վ. Բ.) 4000 թուման, որ կանէ 80 քիսա»⁶¹:

Կոտորածի սպառնալիքով դրամ կորզելը չէր պետության հպատակներին հարստահարելու և նրանցից փող կորզելու միակ ձևը: Առավել տարածված էին հարկային չարաշահումները: 1684 թ. գրված մի հիշատակարանում կարդում ենք. «ի թագաւորութեան պարսից շահ Սուլեյմանա, յորոյ ատուքս նեղի ազգս քրիստոնականաց, խիստ ծառայութեամբ և հարկաց ծանրութեամբ, որպէս երբեմն ի հնումն Իսրայէլ»⁶²:

Նոր Ջուղայի պատմության հեղինակ Հարություն Տեր-Հովհանյանը, վկայակոչելով ձեռագիր հիշատակարանները շահ Սուլեյմանի կառավարման շրջանի վերաբերյալ, գրում է. «շահ Սուլեյման աղարտելով զսահմանս պարկեշտութեան ամի ամի պահանջէր և ստանայր ի Ջուղայ զմի կամ զերկու աղջկունս: ... Ունէր ի սրտի զխեթս և զմախանս անբուժելի ընդդէմ ջողայեցոց»⁶³:

Շահ Սուլեյմանի տիրապետության շրջանի վերաբերյալ կտրուկ բացասաբար են արտահայտվել նաև Կարմելյան միաբանության միսիոներները, որոնց կարծիքով նրա կառավարման տարիներին եր-

⁶¹ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. քիվ 8233, ք. 121:

⁶² Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. քիվ 435, ք. 319թ-320ա:

⁶³ **Յ. Տեր-Հովհաննեսը**, նշվ. աշխ., հ. 1, էջ 200:

կիրն այլասերված էր և վեր էր ածվել բռնակալության: Նրանք շահին բնութագրում էին որպես «չափազանց ծույլ», իսկ նրա էթնադավանաբանական դրոշմը՝ «քրիստոնյաների երդվյալ բշտամի»⁶⁴: Սուր դիտողականությամբ օժտված միսիոներների գնահատականը շահ Սուլեյմանի տիրապետության տակ գտնվող Իրանի վերաբերյալ հետևյալն էր. «Դա մի երկիր է, որտեղ բռնակալությունը, խայտառակությունն ու հալածանքը քրիստոնյաների նկատմամբ ակնհայտ էր: Վերջիններիս նրանք համարում են անմաքուր արարածներ»⁶⁵: Շեշտելով այդ իրողությունը՝ 1681 թ. Կարմեյան միսիոներներից մեկը՝ հայր Ֆորթունաթոսը, իր գեկուցագրում նշում է, որ թեև շահ Սուլեյմանը կրոնավորներին (միսիոներներին – Վ. Բ.) թույլ է տալիս ապրել խաղաղության մեջ, սակայն ո՛չ նրանց նկատմամբ հարգանք ունի և ո՛չ էլ նույնիսկ Եվրոպայից եկած դեսպանների»⁶⁶:

Առաջին հայացքից տարօրինակ է թվում Ստեփաննոս Երեցի տված գնահատականը շահ Սուլեյմանի մասին: Նա այդ բռնավորին անվանում է «սաստիկ քրիստոնեասեր և խաղաղ թագավոր»⁶⁷: Ուշագրավ է նշել, որ Գանձասարի Եսայի կաթողիկոսը ևս այդ շահի և նրա ժամանակների մասին գրում է. «Որ էր յաուրս սորա առաւել խաղաղութիւն եղել աշխարհի և շինութիւն աւերակաց, և բազմամարդութիւն երկրի, ուղղութիւն և իրաւունք դատաւորաց, չափաւորութիւն հարկապահանջութեանց, և բարեկարգութիւն ամէնայն գործոց և արարողութեանց»⁶⁸:

Սիանգամայն ակնհայտ է, որ Իրանի այս մենատերի դրվատանքը ուներ միայն հարաբերական իմաստ: «Եսայի կաթողիկոսի վկայությունը, – իրավացիորեն նկատում է Աշոտ Հովհաննիսյանը, – նկատի ունի տնտեսական և կուլտուրական այն վերելքը, որ վերահաստատված խաղաղության շրջանում ապրում էին Երևանի, Դա-

⁶⁴ A Chronicle of the Carmelites, Vol. I, p. 406.

⁶⁵ Անդ, էջ 406:

⁶⁶ Անդ, էջ 409:

⁶⁷ **Ստեփաննոս Երեց**, էջ 15:

⁶⁸ **Եսայի կաթողիկոս**, Պատմություն կամ Յիշատակ, էջ 16:

րաբաղի և Նախիջևանի խանությունների մեջ մտնող հայաբնակ քաղաքներն ու գյուղերը»⁶⁹:

Արդ, ո՞րն էր Ստեփաննոս Երեցի կողմից շահ Սուլեյմանին «սաստիկ քրիստոնեասեր» անվանելու մոտիվը: 1680-ական թվականներին ծայր էր առել սուր առճակատում Հայ առաքելական եկեղեցու հետևորդների և կաթոլիկ միսիոներների միջև: 1650 թ. Հիսուսյան (Ճիզվիթական) միաբանության միսիոներներին հաջողվել էր թափանցել Նոր Զուղա և Շիրազ, որտեղ թույլտվություն էին ստացել կառուցելու եկեղեցիներ, դպրոցներ՝ հեռահար նպատակ ունենալով նրանց միջոցով «դարձի բերել» Հայ առաքելական եկեղեցու հետևորդներին: Եվ ահա 1688 թ. Հիսուսյան կրոնավորները լուսավորչական հայոց դեմ հարուցում են հզոր շարժում՝ «փոթորիկ մեծ՝ կամելով զազգն ի պապականութիւն շրջել»⁷⁰: Ճարահատյալ Նոր Զուղայի առաջնորդ Ստեփաննոս եպիսկոպոսը և գաղթօջախի ազդեցիկ մարդիկ՝ «իշխանքն հայոց», դիմում են շահ Սուլեյմանին, թախսանձելով պետական աջակցություն ընդդեմ օտարամուտ քարոզիչների: Իր պետության շահերին հետամուտ Սուլեյմանը անմիջապես արձագանքում է հայերի խնդրանքին և հալածանքներ ծավալում իր երկրի գործերին միջամտող եվրոպացիների դեմ: Նա վճռական ձևով «ընկճեաց զգզուիթականացն զօրութիւնն, զոմանս արտաքսելով ի Զուղայոյ՝ զմնացորդսն ընդ իշխանութեամբ առաջնորդին Զուղայոյ խոնարհեցուցանելով. հանդիսացոյց զլուսաւորչականացն զիրաւունս, որով զլխահարել Յիսուսյան կրոնատրաց ոչ մարքացան ծնանել և սնուցանել զղղութիւնն զոր ունէին ի մտի»⁷¹:

Հարկավ, շահի այդ քայլը մեծ գոհունակություն էր պատճառելու Հայ առաքելական եկեղեցուն բոլորանվեր նվիրված հայրենասեր քահանային՝ Ստեփաննոս Երեցին, որը և շահի այդ արարքի համար նրան կոչում է «սաստիկ քրիստոնեասեր»: Ուշագրավ է նշել, որ Հարություն Տեր-Հովհանյանը նույնպես շեշտված բացասական գծերով չի օժտում շահ Սուլեյմանին՝ անկասկած առաջնորդվելով լոկ իրա-

⁶⁹ **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ, գիրք II, էջ 122:

⁷⁰ **Յ. Տեր-Յովհաննեանց**, նշվ. աշխ., հ. 1, էջ 200:

⁷¹ Անդ, էջ 199-200:

նահայության զուտ օգտապաշտական մոտիվներով: «Ի նորա թագաւորութեան ժամանակի,– գրում է նա,– ջուղայեցիք կենցաղաւարեցան ըստ միջասահման իմն գրութեան, ոչ շատ երջանիկ որպէս յաւուրս հօրն նորա, և ոչ այնչափ ապերջանիկ որպէս ի թագաւորութեան յաջորդին: Վաճառականութիւնն ըստ յառաջնածաղկեալ դաւարութեանն իւրոյ պահէր զիւր առաջադիմութիւն առանց զնշանաւոր հարուած ինչ ընդունելոյ ի սոյն թագաւորէ»⁷²:

Շահ Սուլէյմանին անվանելով «քրիստոնէասեր ու խաղաղ թագաւոր»՝ Ստեփաննոս Երեցը հենց ինքն էլ հերքում է իր այդ թռուցիկ արտահայտությունը, արձանագրում նրա տիրապետության շրջանի դառնադետ իրադարձությունները՝ հատկապէս բազմաթիվ սրտաճմլիկ փաստեր բերելով նրա կողմից «աղջիկ քաշելու» զագրելի կարգի վերաբերյալ, զայրույթով դատապարտելով այդ արգահատելի պրակտիկան: Նա դատապարտում է նաև իշխանությունների կողմից այլադավաններին, այդ թվում՝ նաև հայերին իսլամը բռնի պարտադրելու քաղաքականությունը՝ արձանագրելով, որ «ի բանէս յասմանէ բազում ուրացան զհաւատս իւրեանց՝ գնալով ի շահն՝ մոռանալով զփրկիչն իւրեաց»:

Ստեփաննոս Երեցը շահ Սուլէյմանին ներկայացնում է որպէս կողոպտիչ, բռնավոր, քրիստոնէահալած և այլն: Այդ տիրակալի իրական էությունը ներկայացնելու համար նա պատմում է հետևյալ դէպքի մասին: Ջուղայեցի ոմն Հովհան վարդապետ, 1671 թ. «գաղտագողի և չարահմար միջոցով», այսինքն՝ խաբէությամբ, Կ. Պոլսում Հակոբ կաթողիկոսի կողմից ստանալով եպիսկոպոսության աստիճան, վերադառնում է Նոր Ջուղա: Սակայն Ս. Ամենափրկիչ վանքի առաջնորդ Դավիթ Ջուղայեցու կողմից մերժվում է նրա եպիսկոպոսական աստիճանի ճանաչումը իբրև «չիք կարգաւոր»: Մոլեգնած կեղծ եպիսկոպոսը տեղումտեղը ուրանում է իր հավատն ու ընդունում իսլամը և մոլլաբաշու ու շահի առջև չարախոսում («մատնտու եղ»), որ Ջուղայի եկեղեցիներում և վանքերում կան «անթիվ զանձեր՝ ոսկե և արծաթե պատվական անոթներ, քանկագին մետաքս» և այլն:

⁷² Ամդ, էջ 199:

«Շահը լսեց այդ պիղծ մարդուն,– գրում է Ստեփաննոս Երեցը,– և հիստուն տղամարդու հրամայեց գնալ և կողոպտել վանքի ունեցվածքը, բռնել առաջնորդին և միաբաններին և բերել իր մոտ, որպեսզի չարչարելով սպանի նրանց»⁷³:

Մահվանից խուսափելու համար առաջնորդը և միաբանները փախուստի են դիմում դեպի լեռները: «Եկեալ զինորքն շրջայպատեցին զտուն Տեառն և կողոպտեցին զամենայն ինչս և ամենայն զըստացուածս նորայ և ասար հարին զամենայն անասունս նոցայ և սկսան մանձերել և խարխուլ առնել զղլուսնս նոցայ և կողոպտել զամենայն անօթս նոցայ՝ զոսկի, զխաչ, զբուրվառ, զբշոց, աշտանակ, զտապանակ, զԱւետարան, զջահաբբոս մոմեղինաց, և զաշխեալ խորտակեցին ամենայն կահս և զկարասիս նոցայ»⁷⁴,– պատմում է Ստեփաննոս Երեցը: Այդ անօրինությունների կապակցությամբ վկայակոչելով Սողոմոն իմաստունի ասույթը, պատմագիրը պատկերավոր կերպով գրում է, որ այդ բոլորը տեղի էր ունենում «ինչպես ալիքվող ջրերի վրա սահող նավ, կամ ինչպես օդում ճախրող թռչուն, որի ընթացքից չի մնում հետք, կամ ինչպես հողմից բարձրացած փոշի և մրրիկից հալածված եղյամ»⁷⁵:

Հայոց վանքերում և եկեղեցիներում ամեն ինչ կողոպտելուց հետո շահը հայտարարում է, որ «դրանք բազում ունեցվածք ունեն, կամենում են վանքի վրա հարկեր դնել, որ տարեցտարի տան արքունական հարկը»: Նա հրամայում է «երեսուն թուման մուղադա դնել վանքի վրա, որպեսզի տարեցտարի եռակի ու քառակի ավելի առնեն»⁷⁶:

Լսելով վանքի վրա դրված այդ ծանր հարկի մասին լուրը,– գրում է Ստեփաննոս Երեցը,– առաջնորդն ու միաբանները «երկնչեցին դրանից, չվերադարձան վանք, երես դարձնելով հեռացան. ոմանք գնացին Սուրբ Երուսաղեմ, ոմանք՝ Սուրբ Էջմիածին, ոմանք էլ՝ Սուրբ Ամենափրկիչ վանք, և մնաց այս վանքն ամայի ու ան-

⁷³ Ստեփաննոս Երեց, էջ 154:

⁷⁴ Ստեփաննոս Երեց, էջ 18:

⁷⁵ Անդ, էջ 154:

⁷⁶ Ստեփաննոս Երեց, էջ 155:

բնակ»⁷⁷: «Եվ որևէ տեղի չկար օգնություն մեր խեղճ ու անպաշտ-պան ազգին»⁷⁸, – դառնությամբ բացականչում է պատմագիրը: Ըստ նրա՝ արքունի հարկը տարեցտարի մնաց ժողովրդի պարանոցին և դիզվեց ու բարդվեց՝ հասնելով մինչև վեց հարյուր թումանի: «Այսպես եղեկի և կենսամաշ կյանքով էին ապրում հայերը մեր մեղքերի պատճառով», – եզրակացնում է ջերմ հավատացյալ քահանան:

Իշխանությունների գիշատիչ ուժակը չի բավարարվում այդ բո-լորով: Շահ Սուլեյմանի հեծելազորի պետը՝ դուրչիբաշին դիմում է բռնակալին, որ իրեն տրամադրի Հազարջրիքի բնակչությունից մնա-ցած հարկերը և նրանց ունեցած պարտքերը հավաքելու իրավունքը որպես տոնգուլ⁷⁹ իր գորքի համար: Ստեփաննոս Երեցը պատմում է, որ դուրուլչիբաշու գորքը մտնում է Հազարջրիք և սանձարձակ ձևով սկսում անօրինություններ գործել: «Ջորքը, – գրում է նա, – օրեր շա-րունակ որոնում ու զննում էր վանքի ներսը, փորում էր պատը, գետի-նը և անկյունները, չմնաց քար քարի վրա, որ չհանեցին իրենց տե-ղից... Այնպես ավերեցին և քանդեցին, ինչպես որ ասում է Երեմիան. վա՛յ ինձ քո հարվածների համար, որովհետև ցավազին են հարված-ները քո»⁸⁰:

Պատմագիրը որոշ զարմանքով և ինչ որ տեղ նաև հպարտու-թյան զգացումով նշում է, որ սովորաբար անտերունչ, հեզ ու վախի ճնշման տակ գտնվող հայ գյուղացու համբերության բաժակը լցվում է և «հավաքվելով ու մեծ բանակ կազմելով նրանք սկսեցին կռվել և նեղել գորքին», որը դիմում է փախուստի⁸¹: «Այնքան ճեպով և ըշտա-պով եղև փախուստն նոցայ, որ ոչ կարացին զինչս և զստուացուածս տանել կամ բեռնակիր անասունս, որ էին երամբ ուղտոց և ջորոց և գրաստից տանել, այլ հեծան երիարս իրեանց և փախեան»⁸²:

⁷⁷ Ստեփաննոս Երեց, էջ 155:

⁷⁸ Անդ, էջ 156:

⁷⁹ Տոնգուլը տարրընթերցում է՝ տոնլուղ, որը թյուրքերեն donluk «գորքի հանդերձանքի համար նախատեսված գումար» բառն է: Հետագայում բառը ստացել է «ռճիկ» իմաստը:

⁸⁰ Ստեփաննոս Երեց, էջ 157:

⁸¹ Անդ, էջ 157:

⁸² Անդ, էջ 22:

Միանգամայն ակներև է, որ շահ Սուլեյմանի ոտնձգությունները Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ վերստին գալիս էր հաստատելու այն իրողությունը, որ իրանական պետությունը շեղվել էր հայկական եկեղեցու նկատմամբ նախորդ շահերի իրականացրած քաղաքականությունից:

Բացի այդ, շահ Սուլեյմանի տիրապետության շրջանից սկսած, ամեն քայլափոխում ոտնահարվում էր հայկական Առաքելական եկեղեցու իրավական կարգավիճակը:

Ստեփաննոս Երեցի վկայությամբ հիշյալ շահի օրոք ուժեղացավ նաև «աղջիկ քաշելու» պրակտիկան: «Աղարտելով զսահմանս պարկեշտութեան, – գրում է պատմագիրը, – քրիստոնյաների արյան ծարավ շահ Սուլեյմանը սաստկացրեց Ջուղայի վրա դրված աղջկա հարկը, պահանջելով, որ հայերն իր հարեմի համար տրամադրեն «աղջկունս գեղեցիկս»: Դա հաստատվում է նաև բազմաթիվ կողմնակի աղբյուրներով: Այսպես, օրինակ XVII դարի հիշատակարաններից մեկում կարդում ենք. «Թուին Ռ-ՃԼԲ (1683) շահ Սուլեյման ջրափինեաց օրն Ջուղայու հայոց Ի՛Է (27) հարսն և աղջիկ քաշեց և ուրացոյց զնոսա»⁸³:

Ստեփաննոս Երեցի հաղորդած այս տեղեկությունները շահ Սուլեյմանի բռնատիրական վարչակարգի վերաբերյալ հաստատվում է հայ և օտար աղբյուրների ու գրականության մատուցած բազմաթիվ նյութերով: Այսպես, օրինակ, անդրադառնալով այդ «սաստկասառոյց» և «մրրկաբեր ժամանակի» իրադարձություններին, Խաչատուր Ջուղայեցին գրում է. «Արքայն պարսից շահ Սլեման՝ տինա որդին նորա Շահ սուլտան Հօսէն, որք բարձեալ էին զքուն յաչաց և զմինջ յարտևանաց իրեանց. և անդուլ մտօք և անհանգիստ խոկմամբ խորիէին՝ երկնէին՝ և մտախոհ լինէին ի տուէ և ի զիշերի, գուն գործելով, և զանազան հայթայթանս մարթելով թե ի՞նչ և կամ թե ի՞նչ արդեօք իսկ կարասցեն անդրափոխել զողորմելի և զտառապեալ

⁸³ «Մանր ժամանակագրություններ, կազմ. Վ. Հակոբյան, հ. 1, Երևան, 1951, էջ 303:

ազգս քրիստոնէից՝ մանաւանդ զազգս Հայոց ի հաւատոց իրեանց, և դարձունէսն զնոսա ի մոլար և յանաստում կրօնս Պարսից»⁸⁴:

Շահ Սուլէյմանի և առհասարակ Սեֆյան շրջանի պարսից շահերի հայախալած և կրոնական մոլեռանդության ու անհանդուրժողականության քաղաքականությանը անդրադարձել է նաև XVIII դարի ֆրանսիացի հումանիստ մտածող Շառլ Մոնթէսքյուն: «Շահ Սուլէյմանի նախարարներից ոմանք, – գրում է նա, – մտադրվել էին ստիպել բոլոր պարսկահայերին թողնել երկիրը կամ ընդունել մահմեդականություն. նրանք մտածում էին, որ կայսրությունը մնալու է ապականված այնքան ժամանակ, քանի դեռ նրա ծոցում ապրում են անհավատները: Եթե տվյալ դեպքում անսային կույր բարեպաշտությամբ, կհասներ պարսից պետության վերջը»⁸⁵: «Վտարելով հայերին, – շարունակում է մեծ մտածողը, – մտածում էին մի օր վերացնել պետության մեջ եղած բոլոր վաճառականներին և գրեթե բոլոր արհեստավորներին: Ես համոզված եմ, որ մեծն շահ Աբբասը կգերադասեր կտրել իր երկու ձեռքը, քան ստորագրել այդպիսի հրաման, և որ իր ամենաաշխատասեր հպատակներին ուղարկելով Մեծ Մողոլի և հնդկական մյուս թագավորների մոտ՝ նա կհամարեր, որ նրանց է տալիս իր տիրույթների կեսը: Իրողությունն այն է, որ մինչ այդ մոլեռանդ մահմեդականները կրոնական հողի վրա երկրից վտարել էին ամենաաշխատասեր երկրագործներին՝ կրակապաշտներին, ինչի հետևանքով ծանր հարված էր ստացել երկրի գյուղատնտեսությունը: Այժմ հալածելով հայերին՝ «եռանդուն բարեպաշտությամբ մնում էր Պարսկաստանին հասցնել ևս մեկ հարված՝ կործանել արտադրությունը: Այնժամ կայսրությունը կընկներ ինքնին, իսկ նրա հետ միասին, հետևաբար, և այն կրոնը, որի ծաղկմանը հուսով էին հասնել դրանով»⁸⁶:

Սեֆյան պետության մեջ քայքայման ջղաճգություններն էլ ավելի խորացան շահ Սուլթան Հուսեյինի օրոք (1694-1722): Պետությունը

⁸⁴ **Խաչատուր աբեղայ Զուղայեցի**, Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 154:

⁸⁵ **Монтескье**, Персидские письма, Москва, 1956, стр. 204-205.

⁸⁶ **Монтескье**, նշվ. աշխ., стр. 205:

մխրճվել էր խորը ճգնաժամի մեջ և գահավեժ գնում էր դեպի անկում: Հարկային լուծը, որն առանց այն էլ չափազանց ծանր էր, էլ ավելի ուժեղացավ: Աղվանքի կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանը վկայում է, որ Հայաստանում և Արևելյան Անդրկովկասում «համընդհանուր աշխարհագիր» իրականացվելուց հետո, որի նպատակն էր հարկային լծի ուժեղացումը, հարկերը հասան «առասպելական» չափերի, որոնց գանձումը ուղեկցվում էր աննկարագրելի կամայականություններով⁸⁷: Ուժից վեր հարկերից խուսափելու համար ռայաթ գյուղացիները զանգվածորեն դիմում էին փախուստի իրենց բնակավայրերից ու հողերից, սակայն օրենքը թույլ էր տալիս 12 տարվա ընթացքում փնտրել փախստականներին և հետ վերադարձնել իրենց տների մոտ:

Կենտրոնական իշխանության տկարացումը, տեղերում սաստկացող կամայականությունները և բռնությունները հպատակ ժողովուրդների մոտ առաջ էին բերում խորը անբավականություն: Որպես դրա հետևանք՝ ընդարձակ Սեֆյան տերության տարբեր ժողովուրդների մոտ բուռն թափով արթնանում էին անկախության ձգտումներ: Միջցեղային ու միջավատական ներհակություններով պառակտված երկրի տարբեր մասերում խմորվում ու բռնկվում էին տեղական ցեղապետ-ավատատերերի զինված խռովություններ: 1707 թ. Իսրայել Օրին Իրանից Պյոտր Ա-ին տեղեկացնում էր, որ երկիրը գտնվում է քայքայման վիճակում: Այդ նույնը հաստատում էր նաև 1715-1717 թթ. Իրանում գտնված ռուսական դեսպան Արտեմի Վոլինսկին, որը կայսրին տեղեկացնում էր. «Պարսիկներն ի վիճակի չեն պաշտպանվելու ոչ միայն թշնամիներից, այլև իրենց ապագա խռովարար ապստամբներից, և սակավ են այն վայրերը, ուր չեն ծագել ապստամբություններ»: Բանակը և հասարակությունը անվստահությամբ էին համակված կառավարության նկատմամբ: Կենտրոնական իշխանությունը և պետական ապարատը գտնվում էին քայքայման վիճակում: Վոլինսկին շահ Սուլթան Հուսեյինի մասին գրում էր. «Այստեղի գլուխը հիմա այնպիսի մեկն է, որը ոչ միայն չի իշխում իր հպատակնե-

⁸⁷ Տե՛ս Եսայի կաթողիկոս, Պատմություն կամ Յիշատակ, էջ 17-20:

րին, այլև ինքն իսկ հպատակ է իր հպատակներին: Կարծում եմ, որ այսպիսի մի ավանակ հազիվ կարելի է գտնել ոչ միայն թագակիր անձանց, այլև հասարակ մահկանացուների մեջ անգամ, ուստի ինքն իսկ չի կամենում խառնվել որևէ գործի, ամեն ինչ ձգելով իր փոխանորդի, էիթմադովլեի վրա, որ անասունից էլ անասուն է»⁸⁸: Իրանի ժողովուրդը, – շարունակում է նա, – «ծանրաբեռնված է ծանր հարկերով և մեծ տուրքեր է վճարում, որից ավելի շատ հագեցնում է կառավարիչների ընչաքաղցությունը, քան պետությունը, որին վերջիններս տալիս են միայն տերևները, իսկ պտուղը՝ իրենց պահում»⁸⁹: Նա զարմանքով նշում է, որ Իրանում ոչ միայն չեն վախենում իրենց թագավորից, «այլև հայիոյում են տիրակալին և ոչ մի հարգանք չունեն նրա նկատմամբ»⁹⁰:

Իրանի ռազմաքաղաքական առանց այն էլ ծանր դրությունը գնալով ավելի էր վատթարանում ու խորանում ընդհանուր տնտեսական ճգնաժամի հետևանքով, որն իր հերթին հանգեցնում էր գանձարանի մուտքերի կտրուկ կրճատմանը: Սակայն չնայած դրան՝ պալատականները բնավ մտադրություն չունեին հրաժարվելու ճոխ կյանքից ու հարստանալու մոլուցքից: Արքունիքի ծախսերը, ընդհանրապես, գնալով ավելանում էին: Շահի համար կառուցվում էին պալատներ, Եվրոպայից բերվում էին պերճանքի առարկաներ և այլն: Իսկ շահն ավելի շատ մտահոգված էր իր հարեմի գործերով: Նահանգների կառավարիչներն էլ, ձգտելով դուր գալ կնամուլ միապետին, հպատակների շրջանում կազմակերպում էին բռնի աղջկահավաքներ և գեղեցիկ աղջիկներին ուղարկում շահի և նրա ազգականների հարեմները: Գիզվիթ միսիոներ Յուդե Կրուշինսկին վկայում է. «Թագավորը ամբողջովին կլանված էր հարեմական հաճույքներով և բոլորովին չէր մտահոգվում պետական գործերով... Պաշտոնները բաժանելիս հաշվի չէր առնվում ոչ տվյալ անձնավորության արժա-

⁸⁸ Соловьев С. М., История России с древнейших времен, т. XVIII, Москва, 1869, стр. 665.

⁸⁹ Центральный государственный архив древних актов (ЦГАДА), фонд сношения России с Персией, 1715-1718, л. 578а.

⁹⁰ ЦГАДА, фонд сношения России с Персией, 1715-1718, ед. хр. 3, л. 77-77об.

նիքը և ոչ էլ նախկինում նրա մատուցած ծառայությունները: Այս մարդիկ ոսկով հրապարակորեն վաճառում էին պետական պաշտոնները, որոնք տրվում էին ոչ թե ամենաարժանավորին, այլ ամենից շատ վճարողին»⁹¹: Նույն հեղինակը շարունակում է. «Այն ժամանակ, երբ ամեն ինչ և՛ նահանգներում, և՛ մայրաքաղաքում դեպի անկում էր գնում, շահ Հուսեյինը, պետության բոլոր գործերը հանձնելով ներքինիներին, իր ողջ ժամանակն անց էր կացնում հարեմում, որի ծախսերը կլանում էին գանձարանի միջոցների մեծ մասը: Նա հարեմը համարում էր իր անձնական թագավորությունը և միակ վայրը, որն արժանի է ուշադրության»: Այնուհետև միախոսելով հաղորդում է, որ երբ շահի բազմաթիվ կանանցից ավագը հանդիմանում է նրան, որ նա չափից ավելի շատ ժամանակ է վատնում զվարճանքների վրա՝ մոռացության մատնելով իր երկրի կարիքները, շահ Հուսեյինը հրամայում է խեղդամահ անել նրան: Հատկանշական է նաև հետևյալ փաստը. Նաջաֆաբադ գյուղում տեղի էր ունեցել կոդոպուտ, և տուժածները բոլորքով դիմել էին շահին: Վերջինս, իմանալով, որ այդ գյուղը գտնվում է Սպահանից 5 փարսախ (մոտ 7 կմ) հեռավորության վրա, հանգիստ շունչ քաշելով, նրանց պատասխանում է. «Ինձ համար մեկ է, ինձ բավական է Սպահան քաղաքը»:

Մեծ չափերի հասած առևտրական քարավանների կողոպուտները ոչ միայն հանդուրժվում էին կառավարության կողմից, այլև իշխանություններն իրենք էին բացահայտ կերպով խրախուսում ավագակախների գործունեությունը, որոնց կողմից կողոպտված ավարի մեծ մասը բաժին էր հասնում իրենց: «Անպաշտպան լինելով գողերի մեքենայություններից և արդարություն չգտնելով իշխանավորների մոտ՝ վաճառականները ստիպված գործարքի մեջ էին մտնում գողերի հետ՝ նախապես նրանց տալով որոշակի գումար, իրենց զերծ պահելու համար կողոպտվելուց»⁹², – հաղորդում է Յուզե Կրուշինսկին:

⁹¹ Histoire de la dernière révolution de Perse par le père Y. Krusinski, t. I-II, Paris, 1728, pp. 44-45.

⁹² Histoire de la dernière, p. 103.

Գնալով սանձարձակ չափերի էին հասնում տեղական տարբեր մակարդակների կառավարիչների կամայականությունները: Կրուշինսկին նշում էր, որ նրանք, իրենց պաշտոնները համարելով ժամանակավոր, ավելի շատ մտածում էին քաղաքների և նահանգների կոդափուտի, քան նրանցում կարգ ու կանոն պահպանելու մասին: Եվ ամենակարևորը, վստահ լինելով իրենց անպատժելիության մեջ, նրանք բնավ մտահոգված չէին դրսևորելու զգուշություն իրենց սանձարձակ գործողությունների մեջ:

Ա. Վոլինսկին ծաղրանքով նկատում էր, որ «ինչպես շահը, այնպես էլ նրա պալատականները ծուլ են և անբան, երբեք չեն ցանկանում խոսել գործերի մասին, և ինչ, որ պատահականորեն գա նրանց մտքին, անում են առանց մտածելու և քննարկելու: Այդ բոլորի հետևանքով նրանք իրենց պետությունը այնպես են քայքայել, որ, իմ կարծիքով, Ալեքսանդր Մեծը (Մակեդոնացին – Վ. Բ.) ևս չէր կարող պատերազմի միջոցով այդպես քայքայել: Ես զգում եմ, որ այս թագը ընթանում է դեպի վերջին քայքայում, եթե այն չունենա մեկ այլ շահ, որը նորոգի պետությունը»:

Շահ Սուլթան Հուսեյնի կառավարման շրջանում պետության դեկն անցել էր շիա հոգևորականության և պալատական ներքինիների ձեռքը: Ծայրահեղ մոլեռանդ շահը դարձել էր նրանց կամքի կամակատարը: Նա արյունոտ հալածանքներ սկսեց նաև սուննի մահմեդականների դեմ: Սուննիական մզկիթները պղծվում էին կամ վերածվում ախոռների: Հալածանքները տարածվեցին նաև դերվիշ սուֆիների և ծայրահեղ շիական աղանդների հետևորդների վրա: Այդ հալածանքները լոկ կրոնական մոլեռանդության արդյունք չէին. շահական կառավարությունը վախենում էր, որ սուննիականությունը և շիական աղանդները կարող են դառնալ անջատողական շարժումների դրոշ, որը իսկապես շուտով տեղի ունեցավ:

Սեֆյան պետության տնտեսական, քաղաքական և ռազմական թուլացման անխուսափելի արդյունքը հանդիսացավ տարածքների կորուստը: 1717 թ. Մասկաթի սուլթանի ջոկատները ներխուժեցին Պարսից ծոցի Բահրեյնյան կղզիներ, պաշարեցին ծոցի ամենախոշոր նավահանգիստ Բենդեր-Աբբասը և գրավեցին Հորմուզը՝ հսկողու-

թյան տակ վերցնելով ռազմավարական առաջնակարգ նշանակություն ունեցող Հորմուզի նեղուցը: Փաստորեն՝ Իրանը ենթարկվեց ծովային շրջափակման: Իսկ մինչ այդ տեղի ունեցած իրանական քրդերի ապստամբությունը Իրանի տարածքային ամբողջականության համար ստեղծեց լուրջ սպառնալիք, մանավանդ որ ապստամբներն օգնություն էին ստանում Օսմանյան կայսրությունից:

Սեֆյան պետության համար նույնպիսի վտանգ էր ներկայացնում նաև լեզգիների 1711 և 1719 թթ. բռնկված հուժկու ապստամբությունը Սուրխայ խանի և Հաջի Դավուդի գլխավորությամբ, որոնք նույնպես սերտորեն կապված էին Օսմանյան կայսրության հետ և նրանից ստանում էին ոչ միայն զենք ու հրահանգներ, այլև պայքարի ներշնչանք: Այնուհետև 1717 թ. Ատրպատականում տեղի ունեցավ շահսենյան ցեղերի հուժկու ապստամբություն, իսկ 1719 թ. ուզբեկները հարձակվեցին Խորասանի վրա: 1717 թ. հունվարին խոշոր ապստամբություն բռնկվեց Թավրիզում: Նույն թվականի ապրիլին քաղցած ամբոխի խոշոր բունտ տեղի ունեցավ Սպահանում: Երեք հազարից ավելի ապստամբներ փորձեցին գրոհով վերցնել շահի պալատը: Սուլթան Հուսեյինը սկզբում թաքնվեց հարեմում, իսկ ապա փախավ նոր կառուցվող Ֆարահաբադ քաղաք-ամրոցը: Նույն ամսին ապստամբություն սկսվեց Կասպից ծովի առափնյա Գիլան նահանգում, որին մասնակցում էր 20 հազարից ավելի մարդ:

Այդ, ինչպե՞ս է արձագանքել Ստեփաննոս Երեցը այդ իրադարձություններին, և ի՞նչ տեղեկություններ է նա հաղորդում իրանահայության վերաբերյալ: Պատմագիրը Սեֆյան արքայատան շահին՝ շահ Սուլթան Հուսեյինին, բնութագրում է որպես «հոխորտացող ու չար, վատ, նենգ ու Քրիստոսի օրենքներին հակառակ թագավոր», իսկ նրա պետությունը՝ «ապականված թագավորություն»⁹³: Նա Իրանի այդ տիրակալի կողմից սահմանած վարչակարգի պայմաններում գտնվող քրիստոնյաների վիճակը գնահատում է որպես «եղերական և տառապեալ», իսկ նրա ամբողջ կառավարման համակարգը՝ «ճախորդաբեր և դառն ժամանակներ», երբ չկար «ոչ մի գլուխ ա-

⁹³ Ստեփաննոս Երեց, էջ 152:

ռանց ցավի»: Նրա օրոք իրանահայության դրությունը կտրուկ սկսում է վատթարանալ: Այս շահը, որն իր հորից՝ շահ Սուլեյմանից, ավելի կրոնական մոլեռանդ էր, ձգտում էր, որ Պարսկաստանում տիրապետի միայն մեկ կրոն՝ իսլամը: «Յետ նըստելոյ Շահսուլթան Հոսեյնի ի գահ թագաւորութեան Պարսից՝ ատելի եղեն նմա ազգ հայոց իբրև այլակրօն ժողովուրդք, և յաւուրց անտի թագաւորութեան նորա անիւ բարեբաստութեան Ջուղայու ի գուր տարաբաղդութեան ընկրկեալ շրջեցաւ»⁹⁴, – ասում է Հարություն Տեր-Հովհանյանը:

«Պատմագրքի» հեղինակը բազմիցս անդրադառնում է շահ Սուլթան Հոսեյնի կառավարման շրջանում Իրանում տեղի ունեցող իրադարձություններին՝ տալով իր վառ ու պատկերավոր և միաժամանակ խոր և իմաստալից գնահատականներն ու լուսաբանումները: Նա սրտի անհուն կսկիծով է նկարագրում նաև հայության կրած տառապանքները՝ այդ առթիվ հաղորդելով բազմաթիվ սրտաճնլիկ փաստեր: Այդ բռնակալը, – գրում է նա, – «այնքան ատելի ու զարշելի էր համարում քրիստոնյաներին, որ անձրև օրերին հայերին թույլ չէր տալիս գնալ քաղաք, շուկա կամ փողոց: Հեռացնում էին նրանց պատճառ բերելով, թե անսուրբ ազգ են, և թագավորի կողմից հրամայված է անձրև օրերին չթողնել գնալ քաղաք»⁹⁵, որպեսզի հանկարծ իրենց վրայի ջրով «չպղծեն» մահմեդականներին»: «Սրանից ավելի չար բաներ էլ էր գործում, – շարունակում է պատմագիրը, – յուրաքանչյուր ամսվա սկզբին հրամայում էր, որ մուսուլմանները հրապարակով մեկ գոչեր. «Նա, ով կընդունի մեր՝ Մահմեդի կրոնը, ինչ խնդրանք որ ունի, կկատարվի անթերի»⁹⁶: «Այդ խոսքերից հետո, – հաղորդում է պատմագիրը, – շատերն ուրացան իրենց հավատը և գնացին դեպի շահը՝ մոռանալով իրենց Փրկչին»⁹⁷: Մոլեռանդ կրոնամոլ բռնակալը իջեցրել էր բարձրագույն հրաման, որ «զհայս և զայլ օտարազգի ժողովուրդս, որք ի ներքո իշխանութեան իւր էին՝ դարձուցանել ի դեն պարսից»:

⁹⁴ **Յ. Տեր-Յովհաննանց**, նշվ. աշխ., հ. 1, էջ 49:

⁹⁵ **Ստեփաննոս Երեց**, էջ 152:

⁹⁶ Անդ, էջ 152:

⁹⁷ Անդ:

Պատմիչ-քահանան պատմում է, որ քրիստոնյաներին (իմա՝ հայերին – Վ. Բ.) չարչարում էին բազմապիսի ձևերով, այդ թվում՝ նաև օգտագործելով սուտ վկայությունները: Օրինակ՝ դավանափոխ եղած անձինք հայտարարում էին, որ իբր «այս այրը պարտք է ինձ այսքան դահեկան. ես չկարողացա առնել, դրա համար էլ եկա դեպի ձեր կրոնը, որ դուք վերցնեք և տաք ինձ»⁹⁸: Ոմանք էլ պատճառաբանում էին. «Ունևոր և հարուստ ազգականներ ունեմ, բայց վատ ապրուստ, նրանք չեն տալիս ինձ իմ բաժինը, որ մնացել էր մեր հայրերից և նախնիներից. դրա համար էլ եկա ձեզ մոտ, որ դուք, վերցնելով իմ բաժինը, տաք ինձ»: Մյուսներն էլ սուտ վկայում էին և ասում. «Չքավորության պատճառով իմ որդին բազմաթիվ տարիներ ծառայեց այս մեծատունի մոտ, բայց նա չտվեց իմ որդու վարձը. դրա համար եկա դեպի ձեր կրոնը, որ դուք վերցնելով տաք ինձ»⁹⁹: «Եւ այլ բազումք, արձանագրում է պատմագիրը», բանս եղերականս և սուտս բարդէին ի վերայ եղական և տառապեալ քրիստոնէից այնքան, որ օր հանապազ էին ի կալանս, ի բանդս, և ի կախաղանս, և ի անուրս, և ի թակարդս, և այլք հարկանէին, կռփայիարէին և ընդ քարշ տանէին, կողոպտէին զինչս և զըստացուածս նորայ և աւար հարկանէին գտունս նոցայ՝ ըստ քնարերգոյն Դավթի որ ասէ. «Ընդ առնելն մարդկան ի վերայ մեր, կենդանոյն կամեցան կլանել զմեզ»¹⁰⁰:

«Ահա այսպիսի դառն կյանքով էին ապրում ապականված թագավորության ներսում», – արձանագրում է պատմագիրը: «Այնքան ձախողաբեր և դառն էր ժամանակն այն, – գրում է նա –, որում ոչ էր գլուխ առանց ցաւոց՝ ըստ ասելոյն Որայ (Հոր երանելի – Վ. Բ.) «կործանեցին զիս հարուածովք ի վերայ հարուածոց, արձակեցան ի վերայ իմ գորտորք»¹⁰¹: Եվ մինչ այսպիսի նեղության մեջ էր ժողովուրդը, «Տերն ավելացրեց ցավերը մեր մեղքերի պատճառով» անկեղծ միամտությամբ ասում է ջերմեռանդ հավատացյալ քահանա-պատմագիրը:

⁹⁸ Ստեփաննոս Երեց, էջ 152:

⁹⁹ Անդ:

¹⁰⁰ Անդ, էջ 16-17:

¹⁰¹ Անդ, էջ 17:

Շահ Սուլթան Հուսեյինի օրոք ամբողջ թափով գործում էր իմամ Ջաֆարի օրենքը, որը հաճախ օգտագործվում էր որպես գործիք քրիստոնյա բնակչության նյութական հարստահարման համար: Այդ օրենքով եթե որևէ ալլադավան (այդ թվում՝ նաև, բնականաբար, հայ քրիստոնյա – Վ. Բ.) ընդուներ իսլամը, նա իրավունք էր ձեռք բերում տիրանալու իր ողջ գերդաստանի քրիստոնյա անդամների, մինչև իսկ ամենահեռավոր ազգականների ունեցվածքին՝ հողերին, առհասարակ շարժական և անշարժ գույքին: Անկասկած, դա նաև իսլամը տարածելու մի ապօրինի միջոց էր: Իմամ Ջաֆարի օրենքը մի գայթակղություն էր, որ շատ իրանահայերի մոտ հավատափոխության: Սուտ վկաների օգնությամբ իսլամացած հայերը իրենց հարազատներից կորզում էին դրամ, որոնք իբր թե պարտք էին վերցրել իրենցից և չէին վերադարձրել: Այսպիսով, հայերից դրամ կորզելու և անուղղակիորեն նրանց իսլամը պարտադրելու ձևերից մեկն է դառնում նաև զրպարտությունը: Բավական է, որ որևէ մուսուլման հայտարարեր, որ այսինչ հայը իբր հայիոյել է իսլամի մարգարե Մուհամմադի կրոնը, նրա գոհը լավագույն դեպքում իր գլուխը պրծացնելու համար հարկադրված էր զրպարտչին վճարել մեծ գումար, իսկ վատագույն դեպքում, անկարող լինելով դա անել, հարկադրված էր ընդունել իսլամը:

Այն հանգամանքը, որ Իրանում կեղեքման աղբյուր էին հանդիսանում քրիստոնյաների վրա բարդվող զրպարտությունը, վկայում են նաև բազմաթիվ հայկական աղբյուրներ:

Շահ Սուլթան Հուսեյինի կրոնական ալլամերժության և համաձուլման քաղաքականության առաջին թիրախներից մեկը հայերն էին: Սկզբում նա հրաման արձակեց այն մասին, որ բոլոր հայերը պետք է ընդունեն իսլամը: Իր այդ հրամանը գործնական հիմքի վրա դնելու նպատակով նա մի քանի անգամ մուլլաների և գորքի ուղեկցությամբ անձամբ մտնում է Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքը և վանականներին հայտնում «զմտացն իւրոյ խորհուրդ»: Նրա կողմից արված հավատափոխության առաջարկը ստանում է կտրուկ մերժում Հովհաննես Մլըրուզ «տիեզերալոյս» վարդապետի և վանքի միաբանության կողմից: «Աստուածային շնօրհօքն զարդարեալ Յով-

հանճես տիեզերալոյս կոչեցեալ վարդապետն Զուղայեցի և միաբան սրբոյ վանին, իւրոյ խորհրդոց և ճշմարտութեանն քրիստոնէական կրոնի լուսավոր վարդապետութեամբ լինելով ջատագով, դարձոյց գարքայ ի ժաման յայնմիկ ի մտադրութենն, գոր երկնէր ի սրտի»¹⁰²:

Իր առաջարկի ձախողումից ու տապալումից հետո, ոխը սրտում, շահը ստիպված է լինում ձեռնունայն վերադառնալ և իմամներին ու մոլլաներին հրամայում է հրապարակային վեճի մեջ մտնել Հովհաննես Միքուզ վարդապետի հետ կրոնական հարցերի շուրջը և նրան պարտության մատնելով՝ իրագործել հայերին մահմեդական դարձնելու իր մտադրությունը: Այսպիսով, հավանաբար շահը ենթադրում էր, որ մոլլաները և իմամները իրենց իմաստությամբ և գիտելիքներով կջախջախեն վարդապետին և դրանով իսկ ուղի կհարթեն իսլամը հայությանը պարտադրելու համար: Սակայն ամենայն հավանականությամբ վստահ չլինելով, որ իրենց գրագիտության մակարդակով և կրոնի հարցերի իմացությամբ իրենք գերազանցում են հայ հոգևորականներին և կարող են նրանց պարտության մատնել՝ մոլլաները շահին խորհուրդ են տալիս հրաժարվել հրապարակային վեճի կամ, ինչպես ընդունված էր այն անվանել, «հակաճառության» գաղափարից և գործը գլուխ բերել բռնությամբ: «Մոլլաները,– պատմում է Ստեփաննոս Երեցը,– խորհուրդ ետուն արքայի բռնութեամբ և խրախուսանք գխորհուրդն հավատափոխութեան հանել ի գլուխ»:

Կրոնական վեճը, այնուամենայնիվ, տեղի է ունենում: Այդ բանավեճի միջոցով Հովհաննես Միքուզ Զուղայեցին կարողանում է համոզել մոլլաներին, որ «թե՛ քրիստոնյաները և թե՛ մահմեդականները պաշտում են աստվածային միևնույն էությունը, միայն թե՛ տարբեր պատկերներով ու եղանակներով, ուստի կարիք չկա արտաքին ու ձևական տարբերությունների համար հալածել ու բռնադատել հայերին»¹⁰³:

Այսպիսով, առժամանակ հայերն ազատվում են ուրացության վտանգից: Սակայն չհամակերպվելով իր անհաջողության հետ՝ շահը

¹⁰² Զ. Տեր-Յովհաննես, նշվ. աշխ., հ. 1, էջ 202:

¹⁰³ Միրզոյան Հ., Հովհաննես Միքուզ Զուղայեցի, Երևան, 2001, էջ 5:

համառորեն շարունակում է հայերին մահմեդականացնելու իր մտադրությունը՝ ավելի լայնորեն օգտագործելով մի կողմից բռնի հարկադրանքի միջոցները, մյուս կողմից՝ կաշառքի, փողի ու պաշտոնների միջոցով նրանց դեպի իսլամը հրապուրելու եղանակը: Դա տվեց իր արդյունքները: Ջզալի թվով մարդիկ, ուրանալով իրենց կրոնը, ընդունեցին իսլամը: Այդ ուրացողները կատարյալ չարիք դարձան նույնիսկ իրենց ընտանիքների համար, քանի որ «Իմամ Ջաֆարի» օրենքի ուժով սկսեցին հափշտակել իրենց հարազատների ունեցվածքը: Հայ բնակչության ունեցվածքի կողոպուտն ընդունեց համատարած բնույթ: Չանազան զանցանքների համար նրանց ներկայացնում էին ծանր մեղադրանքներ, իսկ հաճախ նաև շինծու մեղադրանքներով ծանր տուգանքների էին ենթարկում հայերին:

Ներկայացնելով այդ բոլորը՝ Ստեփաննոս Երեցը ընդհանրացնում է. «Այնքան ձախորդաբեր և դառն էր այդ ժամանակը, որ չկար գլուխ առանց ցավի, և որևէ տեղից չկար օգնություն մեր խեղճ ու անպաշտպան ազգին»¹⁰⁴: «Հայերը,– ասում է նա,– ապրում էին եղկելի և կենսամաշ կյանքով»¹⁰⁵: Արքունիքի ստորաքարշ գայլերը՝ «որպես սովյալ գայլերի ոհմակներ», հալածում էին հայերին՝ նրանց ենթարկելով ծանր կտտանքների՝ շղթաներով զանակոծելով, հարդի ծխով շնչասպառ անելով, քնաթափությամբ տանջելով և այլն: Նրանք, ովքեր հրաժարվում էին դավանափոխ լինել, ցեխին ապակի խառնելով, ստիպում էին բոքիկ ոտքերով տրորել: Շահի կրոնական մոլեռանդություներ նույնիսկ հասնում է այնտեղ, որ հրամայում է Ջուղայի հայոց գերեզմանատան քարերի ծայրերը ջարդել. «որպես թե թլպատեցան ննջեցեալքն հայոց ըստ հրամանի թագաւորին»:

Միաժամանակ իջնում է թագավորական հրաման. հայերը պարտավոր են փողոց դուրս գալու ժամանակ իրենց վրա գցել հին կարպետ, գլխներին դնել պատառոտված գլխարկ, որպեսզի տարբերվեն պարսիկներից: Նրանք պարտավոր են քարշ տալ մահապարտ սպանվածների դիակները «իբրև անարգ յամօթ և ի նախատինք ինք-

¹⁰⁴ Ստեփաննոս Երեց, էջ 153, 156:

¹⁰⁵ Անդ, էջ 156:

մեաց»։ Հայերին կրկնակի նվաստացնելու նպատակով նրանց վրա դրվեց «կուտի հարկ»՝ արքունական հավերին կերակրելու համար։ Ակնհայտ է, որ իրանահայության կրած տառապանքները չէին սահմանափակվում լոկ կրոնական ու քաղաքական բնույթի հալածանքներով, այլ ունեին նաև հայ ժողովրդի ազգային արժանապատվությունը վիրավորելու ու ոտնահարելու ակներև բնույթ։ Օրինակ՝ 1697 թ. շահ Սուլթան Հուսեյինը որոշում է Նոր Ջուղայի հարավային մասում կառուցել Ֆահրաբատ անունով մի շքեղ պալատ՝ «մեծածախ և վալեյուշա, լայն և ընդարձակ, զանազանիւր յօրինուածովք, վերամբարձիւք և սարաւ ուտովք, յարկովք և ամարասնօք, հովանոցօք և պատնիշովք և գունգգուն նկարայկերտօք՝ որպէս տեսանի ի դստիկոն թագաւորի»¹⁰⁶։ Իր այդ մտադրությունն իրագործելու համար նա հրամայում է քանդել ու ավերել հայկական գերեզմանատունը, «զհանգստարանն մաքրել յոսկերոտեաց մնջեցելոցն և տնկել անդ զայգիս ի զբօսանս իւրոյ ճեմելեօց, ճեմասրահ և հովանի»¹⁰⁷։

Ուշագրավ է նշել, որ բռնի ուժի պարտադրմամբ հավատափոխ եղած հայերից շատերը մահվան սեմին գոջում էին իրենց արածը և մեռնելուց հետո մեծահոգի հայրենակիցները թույլ էին տալիս, որ նրանց հողին հանձնեն Նոր Ջուղայի գերեզմանատնից անջատ մի առանձին հանգստարանում, որը կոչվում էր «խարամբ»։ Հետագայում նրանցից ծնվածները, որպես կանոն, կրկին վերադառնում էին Հայ առաքելական եկեղեցու և հարազատ ժողովրդի գիրկը¹⁰⁸։

Միանգամայն ակնհայտ է, որ շահ Սուլթան Հուսեյինը և նրա բռնատիրական վարչակարգը, այլադավանների նկատմամբ իրագործելով կրոնական անհանդուրժողականության քաղաքականություն, ըստ էության, ոտնահարում էին իսլամի սկզբունքներից մեկը, որն ամրակայված է իսլամի սուրբ գրքում՝ Դուրանում, որտեղ սավում է. «Կրօնի մեջ հարկադրանք չկա»։ Քանի որ ձևականորեն իսլամն արգելում էր այլադավանների բռնի հավատափոխությունը, ուստի այդ կարգը շրջանցելու նպատակով շահը մահմեդական հոգևորա-

¹⁰⁶ Ստեփաննոս Երեց, էջ 24-25։

¹⁰⁷ Անդ, էջ 162։

¹⁰⁸ Յ. Տէր-Յովհաննանց, նշվ. աշխ., էջ 206։

կաններին հրամայում էր կազմակերպել «կրոնական վիճաբանություններ»՝ ապացուցելու համար, որ Մուհամմադ մարգարեի կրոնը ավելի կատարյալ և «ճիշտ» կրոն է, քան դիցուք քրիստոնեությունը, զրադաշտականությունը և այլն: Կասկածից վեր է, որ այդ «վիճաբանությունները» կամ «հակաճառությունները» իրականում ոչ այլ ինչ էին, եթե ոչ բռնի դավանափոխության սքողված ձև:

Մոլեռանդ ու կեղծ բարեպաշտ բռնակալը բնավ չուներ իր հակաօրինական և խլամով արգելված գործողությունների զսպիչ որևէ արգելք: Նա, օրինակ, հրամայում է, որ յուրաքանչյուր ամիս մուսուլմանիք ի լուր բոլորի հայտարարի, որ ով թեկուզ մեկ հայի հավատափոխ անի, նրան «թագաւորն զբազում բարիս առնէ նոցա և կատարէ գամենայն խնդիրս նոցին»:

Ինչպես նշվել է վերևում, շահի կողմից իրականացրած կրոնական այլաճեղքության ալիքը հորդալով իր ջրապույտի մեջ է առնում ոչ միայն քրիստոնյաներին ու զրադաշտականներին, այլև հենց իսլամի սուննիական ուղղության հետևորդ մուսուլմաններին, որոնց նկատմամբ ևս մոլեռանդ բռնակալը սկսում է բիրտ ու սանձարձակ հալածանքներ: Սուննի հոգևորականության արտոնությունները աստիճանաբար վերացվում էին, իսկ հոգևորականների իրավունքները սահմանափակվում կամ ոտնահարվում: Անշուշտ, այդ հալածանքները լոկ կրոնական մոլեռանդության արդյունք չէին, այլ պարունակում էին քաղաքական ենթատեքստ: Կառավարությունը վախենում էր, որ սուննիականությունը, որը մինչև XVI դարի սկիզբը հանդիսացել էր Իրանի բնակչության պաշտոնական դավանանքը, և այն փոխարինվել էր իսլամի շիական ուղղությամբ՝ լոկ նշված դարաշրջանի սկզբին (որն այդ երկրի պետական պաշտոնական կրոն էր հռչակվել Սեֆյան արքայատան կողմից), XVII-XVIII դարերում ևս Իրանում դեռևս ուներ լայն տարածում: Ընդ որում, «ուղղադավան» իսլամը, ի դեմս սուննիականության, հանդես էր գալիս շիա պետության դեմ ընդդիմադրի դերում: Սեֆյան արքունիքը լրջորեն մտահոգված էր, որ սուննիականությունը, որի հետևորդների թիվը Իրանում հասնում էր պատկառելի չափերի, կարող էր դառնալ անջատողական շարժումների դրոշ, որը, ինչպես կտեսնենք ստորև, իսկապես տեղի ունեցավ:

Սեֆյան իշխող շրջանները նաև մտավախություն ունեին, որ հանձինս սուննիականությունը դավանող իրանցիների՝ Օսմանյան կայսրությունը Իրանում կարող է ստեղծել իր հիմնգերքող գործադուրդը:

Ստեփաննոս Երեցի հաղորդած տեղեկությունները շահ Սուլթան Հուսեյինի ժամանակաշրջանի իրողությունների վերաբերյալ հաստատվում են նաև բազմապիսի այլ աղբյուրներով: Օրինակ՝ մեր պատմագրի տեղեկությունները համահունչ են Յուղե Կրուշինսկու կողմից հաղորդվող փաստերին: Նա գրում է, որ մահմեդականի կողմից քրիստոնյաներին, մասնավորապես հայերին սպանելու դեպքում մարդասպանը սպանվածի հարազատներին կարող էր որպես արյան գին վճարել մեկ էշաբեռ ալյուր և ազատվել դատ ու դատաստանից: «Բոլոր նահանգներում,– վկայում է Կրուշինսկին,– այս նոր արդարադատությունը գոհերի պատճառ է դառնում, քանզի երբ մի մուսուլման սպանի մի հայի, ապա կարող է դատապարտվել՝ միայն հանգուցյալի ընտանիքին կերակրելու համար մի ավանակի բեռ ալյուր տրամադրելով»¹⁰⁹: Եվրոպացի մեկ այլ դիտորդ, որը՝ որպես Հիսուսյան (ճիզվիթական) միաբանության միսիոներ, դեգերում էր Իրանում որպես դեպքերին ժամանակակից ու վկա, պատմելով Սեֆյան իշխանությունների կողմից հայերի բազմադիմի հալածանքների մասին, գրում է. «Անհավատները հայերի նկատմամբ գործադրում են դաժան իշխանություն: Նրանց վրա բարդում են զանազան հարկեր և տուրքեր՝ դրանք հավաքելով անլուր բռնությամբ»¹¹⁰:

Այդ հալածանքները չէին սահմանափակվում լոկ Իրանի հարավային շրջաններում տեղաբաշխված հայերի շրջանակում, այլ կրում էին համընդհանուր և համապետական բնույթ: Վկայելով այդ մասին՝ Լա Մաց անունով մեկ այլ միսիոներ մասնավորապես անդրադառնում է Թավրիզի հայության իրավական վիճակին. «Հայ քրիստոնյաները,– գրում է նա,– խիստ ճնշումների են ենթարկվում, հայերին մյուսներից լավ տարբերելու համար հրամայված է, որ իրենց մահու-

¹⁰⁹ Krusinski, t. II, p. 88.

¹¹⁰ Letters édifiantes et curieuses, écrites des missions étrangères. Memoires du Levant. Nouvelle edition, Paris, t. III, 1780, p. 104.

դէ գլխարկներին մանուշակագույն կտոր կարեն, և նրանց արգելում են տներից դուրս գալ անձրևի ժամանակ կամ երբ ցելս է լինում: Ե՛վ Սպահանում, և՛ Իրանի մյուս կողմերում, ըստ ամենայնի, ջանք են քափում, որպեսզի մարդիկ հրաժարվեն քրիստոնեական կրոնից: Անգամ Շամախիում հայերին կործանելու զարմանալի միջոցների են դիմում: Անհիմն տուգանքներ են բարդում նրանց վրա, իսկ գյուղացիներն այն աստիճան են ճնշվում, որ գրեթե բոլորն էլ մտածում են իրենց երկրից հեռանալու մասին և եթե ունենային ապահով ապաստան, այնտեղ չէր մնա ոչ ոք»¹¹¹:

Այդ նույն մռայլ իրողությունների հաստատումը մենք գտնում ենք նաև Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան Զալալյանցի վկայություններում: Ներկայացնելով Սեֆյան պետության մամլիչի տակ հեծող հայության դժբախտ և անտերունչ վիճակը՝ նա գրում է. «Ընդ սմին կաշառս յոլովս, և տասանորոյս և զկարգեալ վարձս զինուորացն առաւել քան զչափն առնուին և ապա զգրեալն կրկնէին, ապա յեթ այսորիկ՝ գրեցին և զվանորայս, զանապատս և զիւղօրէից եկեղեցիսն, ընդ նմին և զեպիսկոպոսունս և զարեղայս և զերիցունս առհասարակ ի թիւ արկին և աւարտելով զնոսա սկսան գրել զվաճառականսն և ճանապարհոդսն և զորս սուղ ինչ առետրոյ տեսարքըն էին, զամենեսեան ի համարութիւն գրելով. գլխոցն երեք պատիկ յաւելմամբ ի վերայ առաջնոյ սահմանին»¹¹²:

1700 թ. գրված հայերեն մի հիշատակարանում ասվում է. «Մատնեալ կամք ի ձեռն ժանդարարոյ ազգին պարսից, զոր իբրև անսաստելի ալիք ծովու յարուցեալք են ի վերայ սրբոյ եկեղեցւոյ և յորոյց նորին, և կամին կլանել: Ջոր և ի սոյն ամի հրաման դառնութեան ել ի դրանէ թագաւորին, զի զվանք, զանապատ և զեկեղեցիք հանդերձ բնակչօք իւրեանց ի ներքոյ ծանր հարկի դնել, զի դեռ նոր է բորբոքեալ հուրս այս»¹¹³:

¹¹¹ Письма и донесения иезуитов о России, СПб., 1904, стр. 166-167.

¹¹² Եսայի կաթողիկոս, Պատմութիւն կամ յիշատակ ինչ ինչ անցից դիպելոց յաշխարհին Աղուանից, Շուշի, 1839, էջ 17-18:

¹¹³ Ֆիկն Ժ. Ն., Յուցակ Արգար Հովհաննիսյանի հայերեն ձեռագրերի, Լայպցիգ և Մարբուրգ, 1903, էջ 139:

Պյոտր Ա-ի դեսպան Վոլինսկին տեղեկացնում էր կայսրին, որ «Իրանի (Նոր Ջուղայի) հայ վաճառականները ցանկանում են ազատվել շահական հպատակությունից, որովհետև նրանք գտնվում են ճնշված վիճակում և ենթարկվում են հարստահարությունների ու հետապնդումների դավանանքի հարցերում: Բացի այդ, այստեղ առկա է մի սովորույթ, երբ մարդկանցից, այդ թվում՝ նաև ջուղայեցիներից, բռնի կերպով խլում են իրենց կանանց ու երեխաներին և հակառակ իրենց կամքի մահմեդականացնում նրանց»¹¹⁴:

Կրոնական և քաղաքական հալածանքների գործած ավերը իրանահայությանը դատապարտում էր անհուսությամբ, անհեռանկար ու տագնապով լի կյանքի: Այդ բոլորի հետևանքով սկսվում է հայ բնակչության «բեկումը»: Հուսահատության մատնված և ապագայի նկատմամբ հավատը կորցրած բազմաթիվ հայեր, լքելով իրենց տունն ու տեղը, հայրերի և պապերի գերեզմանները, դիմում են արտագաղթի, որը գնալով ընդունում էր զանգվածային բնույթ: Ընդ որում, գաղթելուց առաջ նրանք չէին կարող վաճառել իրենց ունեցվածքը, քանի որ դրանով իսկ իշխանությունների մոտ կմատնեին իրենց և կենթարկվեին պատիժների:

Բանն այնն է, որ, ինչպես նշվել է վերևում, 1710 թ. շահ Սուլթան Հուսեյինը հրապարակել էր ֆիրման (հրամանագիր), որով գյուղացիները ամրագրվում էին իրենց բնակության վայրում՝ անթույլատրելի համարելով նրանց ինքնակամ տեղափոխությունը այլ վայրեր: Այդ հրամանագրի նպատակը, անշուշտ, հարկահավաքման գործում դյուրություն ստեղծելն էր: Այն գյուղացի-ռայաները, որոնք ինքնագլուխ կերպով տեղափոխվում էին այլ վայրեր, 12 տարվա ընթացքում ենթակա էին բռնի վերադարձման իրենց նախկին բնակավայրերը: Այդ ժամկետը լրանալուց հետո այլևս չէր կարելի որոնել նրանց և վերադարձնել: Նրանք՝ որպես հարկատուներ, այսուհետև պետք է

¹¹⁴ ЦГАДА, ф. 77, 1715-1718, ед. хр. 2, л. л. 194 об.-195 об.

հաշվառման ենթարկվելին իրենց բնակության նոր վայրի հարկացուցակներում¹¹⁵:

Ուստի, որպես կանոն, փախուստը կատարվում էր գիշերով, գաղտնագողի, անշշումն ու հապճեպ տազնապով, առանց սիրելիներին հրաժեշտի համբույր տալու: Հեռացողներն ապրում էին մի զգացում, որը հատուկ է բանտից փախչողներին: Ունևորները հայրենի տնից հեռանալու իրավունքը ձեռք էին բերում Սպահանի քաղաքապետին, ոստիկանապետին և այլ պաշտոնատար անձանց կաշառելու միջոցով, որ իբր նրանց թույլատրում էին ուխտագնացության մեկնել մայրաքաղաքին մոտակա Շիշկանա գյուղի սրբավայրը՝ ավետարանը համբուրելու համար, իսկ ավելի ունևորները պատկառելի չափերով կաշառք տալու դեպքում ձեռք էին բերում Երուսաղեմ ուխտագնացության մեկնելու «իրավունք»:

Այն բոլոր հայերը, որոնց զրպարտում էին, թե իբր առանց իշխանությունների իմացության ու թույլտվության, որոշել են լքել երկիրը և հեռանալ, ենթարկվում էին սարսափելի պատիժների: Նման դեպքերում զրպարտյալից կորզում էին խոշոր գումարներ, չէր բացառվում նաև բանտը կամ կախաղանը: Աննկատ մնալու համար հայերը փախուստի էին դիմում ոչ թե խմբերով, այլ առանձին-առանձին: Մեծ թվով փախստականներ մեկնում էին Պարսից ծոցի Բուշեիր նավահանգիստը և այնտեղից նավերով մեկնում Հնդկաստան, Ճավա, Բասրա և այլ վայրեր:

Շուտով իրանահայությանը սպասում էր նոր փորձություն՝ աֆղանների ավերիչ արշավանքը Իրան:

Սեֆյան պետության մեջ հարկային լծի հարաճուն ծանրացումը, տեղերում շահական դրածո աստիճանավորների բռնություններն ու կամայականությունները, ինչպես նաև կրոնական անհանդուրժողականությունը ալլադավանների և մույնիսկ ոչ շիա սուննի մահմեդականների նկատմամբ առանձնակի ուժգնությամբ դժգոհության պոռթկումներ էին առաջ բերում Սեֆյան պետության ծայրամասային

¹¹⁵ Пигулевская Н. В., Якубовский А. Ю., Петрушевский И. П. и др., История Ирана с древнейших времен до конца XVIII в., Ленинград, 1958, стр. 307.

շրջաններում: Պատահական չէր, որ հենց այդ շրջաններում սկսեցին տեղի ունենալ ապստամբական հուժկու շարժումներ, որոնք կրում էին ազատագրական բնույթ: 1709 թ. տեղի ունեցավ քաղաքային բնակչության ապստամբություն Թավրիզում, 1711 թ. ապստամբեցին Դաղստանի լեզգիները Սուրխայխան դազկիումուխցու գլխավորությամբ, որին միացավ նաև սուննի հոգևորականության ներկայացուցիչ Հաջի Դավուդը: Նրանք գրավեցին և ավարի մատնեցին Շամախին՝ սրի քաշելով երեք հարյուր ռուս վաճառականների: Շարժումը աջակցություն էր գտնում Օսմանյան կայսրության կողմից: 1715 թ. սեֆյան իշխանությունների դեմ հուժկու ապստամբական շարժում ծավալեցին քրդերը, երկրի հարավում սկսեցին խլրտալ նաև արաբները: Ընդ որում՝ Մասկաթի տիրակալին հաջողվեց գրավել Պարսից ծոցի կղզիները: 1717 թ. Մուղանում բռնկեց շահսկենյան տեղերի ապստամբությունը: 1722 թ. Սյունիքում ապստամբության դրոշ պարզեցին հայերը Դավիթ Բեկի գլխավորությամբ: Ապստամբությունների հորդեղը ընդգրկեց նաև երկրի արևելյան շրջանները: 1721 թ. ապստամբեց Բալուչեսթանի բնակչությունը: Սեֆյան պետության դեմ հուժկու ապստամբություն սկսվեց նաև Աֆղանստանում:

Դեռևս շահ Աբբաս Ա-ի մահվանից հետո աֆղանական ռազմաշունչ և մեծաթիվ գիլգայի ցեղը, որի բնակության վայրը Ղանդահարի շրջանն էր, բազմիցս ապստամբում էր սեֆյանների դեմ: XVIII դարի սկզբին աֆղանական էմիրների ջիրգան գիլգայի ցեղի առաջնորդ նշանակեց Ղանդահարի բերդապահ, եռանդուն, փառասեր ու խորամանկ Միր-Վեյսին: Այդ ժամանակ Ղանդահարի մահանգի բեկլարբեկն էր ծագումով վրացի Գորգին խանը, որը Քարթլիի Արչիլ թագավորի եղբայրն էր: Ընդունելով իսլամը՝ նա անվանակոչվել էր Շահնավազ խան: Շահի կողմից նշանակվելով Ղանդահարի բեկլարբեկ՝ նա աշխատել է կտրուկ միջոցառումներով Աֆղանստանում ամրապնդել խարխլված շահական իշխանությունը և հնազանդության մեջ պահել անհնազանդ աֆղաններին: Սակայն խանը իր սանձարձակ վարքագծով իր դեմ էր տրամադրում ոչ միայն գիլգայիների վերնախավին, այլև շարքային աֆղաններին: Ֆրանսիացի Պիկոն վկայում է, որ կանանց գողանում էին ուղղակի ամուսնական մահճից, իսկ աղ-

ջիկներին իրենց մայրերի գրկից: Ստեփաննոս Երեցը մեկ առ մեկ թվարկում է Գորգին խանի և նրա մարդկանց գործադրած սանձարձակ արարքները աֆղանների նկատմամբ. նրանք օրավուր եռակի և քառակի ավելացնում էին արքունական հարկերը, աֆղաններին նվաստացնելու նպատակով նրանց կնքում էին քամահրական մականուններով՝ հաճախ նրանց անվանելով «մուղուլներ», աֆղան կանանց ծոցն էին լցնում շիկացած ածուխ, և երբ նրանք «ի տանջանացս չհանդուրժէին, անկանէին, թաւալէին, մորմոքէին, կսկծային, իսկ նոքայ յայպանելով ասէին՝ մուղուլ խուր բազի միքումատ» (մուղուլ լավ է պարում – Վ. Բ.): Դա դեռ բոլորը չէր, «զի արուագետք էր, բերէին գարու մանուկ նոցայ և շնանային ընդ նոսայ օր հանապագ», գրում է Ստեփաննոս Երեցը¹¹⁶:

Բնականաբար, աֆղանների ատելությունը Գորգին խանի նկատմամբ վերջին հաշվով ուղղվում էր Սեֆյան շահի դեմ, որն ինքն էր Շահնավազ խանին նշանակել որպես Ղանդահարի կառավարիչ:

Գիլգայիները Միր-Վեյսի գլխավորությամբ նախապատրաստում են դավադրություն Գորգին խանի դեմ: «Երբ Միր-Վեյսը տեսավ, որ մահը կյանքի դառնությունից բարի է,– պատմում է Ստեփաննոս Երեցը,– շատ խորհեց և պատվավոր այրերից առնելով քսան տղամարդու, նաև շատ գանձեր՝ գիշերով ելավ Ղանդահարից ու աճապարեց դեպի Սպահան»¹¹⁷: Միր-Վեյսը Մեքքա ուխտագնացություն կատարելու պատրվակով շահից թույլտվություն է ստանում և կաշառքով ու սադրանքներով կարողանում է ինքնակալին և նրա շրջապատի մարդկանց տրամադրել Գորգին խանի դեմ: Միր-Վեյսը շահական պալատում Գորգին խանին ներկայացնում է որպես Պարսկաստանի համար ամենավտանգավոր մարդու, որին չի կարելի վստահել մանավանդ ներկա իրադրության պայմաններում,– պատմում է Յուդե Կրուշինսկին: Նա Իրանի ղեկավար շրջաններին «ախաբեկում էր մոսկովցիների հզորությամբ, որոնք շվեդական թագավորի պարտությունից հետո ի գործ էին իրենց կամքը թելադրել

¹¹⁶ Ստեփաննոս Երեց, Պատմագիրք, էջ 25:

¹¹⁷ Ստեփաննոս Երեց, էջ 161:

հարևաններին»¹¹⁸, - շարունակում է ճիզվիթ միսիոները: Միր-Վեյսը շահին ներշնչում է հետևյալ մտքերը. «Ի՞նչ կլինի, եթե բնականորեն մշտապես անհանգիստ ու հուզաթաթախ վրացիները, որոնք միննույն հավատալիքների ու դավանանքի համար հակում ունեն դեպի մոսկովցիները, օգտվեին ներկայիս բարենպաստ պայմաններից և զենքի միջոցով հասնեին ազատագրման»¹¹⁹: Այնուհետև, Սպահանում շարունակելով անհաբեկել շահին ու նրա պալատականներին, Միր-Վեյսը ասում է, որ ռուսների հետ Իրանի դեմ համատեղ ռազմական գործողությունների կոչ են անում Գորգին խանի Պետերբուրգում հաստատված մերձավորագույն ազգականները: «Անհրաժեշտ է,- ասում է նա,- ուշադրություն սևեռել նաև Պարսկաստանում մեծ թիվ կազմող հայերի վրա: Առևտրի միջոցով ձեռք բերելով հսկայական հարստություններ, հայերը պատրաստ են պատեհ առիթի դեպքում թոթափել իրենց համար անտանելի լուծը՝ վերականգնելու համար իրենց թագավորությունների ժամանակ վայելած ազատությունը: Եվ վերջապես, երբ մի կողմից մոսկովցիները մտնեն իրենց գրկաբաց դիմափորոջ Վրաստան, մյուս կողմից հայերն ապստամբություն բարձրացնեն թագավորության մեջ, և իր հերթին Գորգին խանը, աֆղաններին ապստամբեցնելով, Ղանդահարը հանձնե՞ր մողոլ¹²⁰ տիրակալին և նրա ուժերի հետ դաշնակցած հարձակվե՞ր մոսկովցիներին և հայերին դիմակայող Պարսկաստանի վրա, ի՞նչ կլինե՞ր այն ժամանակ բոլոր կողմերից հարձակման ենթարկված թագավորության վիճակը»¹²¹:

Նման կարգի ներշնչումները ուժգին ազդեցություն էին թողնում շահ Սուլթան Հուսեյինի վրա, մանավանդ որ այդ օրերին որպես Վատիկանի և 1708 թվականից նաև Պյոտր Ա-ի դեսպան Սպահան էր ժամանել Իսրայել Օրին (1658-1711), որի գործունեությունն ուղղված էր հայ ժողովրդի ազատագրմանը օսմանյան և պարսկական լծից:

¹¹⁸ Krusinski, t. I, p. 221.

¹¹⁹ Krusinski, t. I, p. 221.

¹²⁰ Մոլոլ (մողոլ) բառի տակ հասկացվում է Հնդկաստանի Մեծ մողոլների պետությունը: Ամենայն հավանականությամբ Աֆղաստանում այդ բառը օգտագործվել է արհամարհական և նվաստացուցիչ իմաստով:

¹²¹ Krusinski, t. I, p. 221-222:

Դա ծայրահեղ կերպով վախեցրել էր շահին և նրա մոտ առաջ բերել կասկածներ, որ ողջ հայությունը և վրացիները հակված են դեպի Ռուսաստանը: Միր-Վեյսը փայլուն կերպով օգտագործում էր այդ կասկածները, որպեսզի հարուցի շահի անվստահությունը Գորգին խանի նկատմամբ՝ որպես ծպտված քրիստոնյայի և ռուսամետի: Իր՝ Սպահան եղած ժամանակը Միր-Վեյսը չէր օգտագործում միայն սաղրամքներ հյուսելու վրա: Նա հետախուզում էր Սեֆյան պետության ներքին վիճակը, ուսումնասիրում նրա թույլ կողմերը, գործնական կապեր հաստատում Սեֆյան արքունիքի «պիտանի» մարդկանց հետ և այլն: Ընդառաջելով աֆղանցու խնդրանքին՝ շահը նրան թույլատրում է մեկնել ուխտագնացության («հաջ») իսլամի կարևորագույն սրբավայր Մեքքա: Այնտեղ նա գաղտնաբար Մեքքայի սուննի աստվածաբան հոգևորականներից ստանում է ֆեթվա (աստվածաբանական-իրավաբանական փաստաթուղթ), որը սուննիների ապստամբությունը «հերձվածող» շիա տիրակալի դեմ հայտարարում էր աստվածահաճո գործ:

Ստեփաննոս Երեցը վկայում է, որ վերադառնալով Ղանդահար Միր-Վեյսը «ժողովեց իշխաններին, հազավ շքեղ խալաթը, արքայի հրամանը դրեց գլխին և որպես կատաղած առյուծ՝ հարձակվեց Գորգին խանի վրա՝ ծարավի նրա արյանը»: Այնուհետև նա ձերբակալում է Գորգին խանին և հրամայում տանջալից մահով սպանել նրան և նրա թիկնազորի բոլոր մարտիկներին: «Եւ ի մտանելն զօրացն, – գրում է պատմագիրը, – զամենայն կալեալ կապեցին, որ ոչ մնաց և ոչ մի: Եւ եղև որժամ կալան զամենայն, ապա ըսկսան բազմազան չարչարանօք սպանանել զԳորգին խանն, զի նախ ուստուցին (փորեցին) զաչսն նորայ, և ապա հատին զոլոք (սրունգ) ոտից և ապա ետին զբազուկ ձեռաց նրայ ի վերայ սալին, հարին կռանաւ խորդակեցին զնայ, ապա հարին աշտէիւ ի փոր նորա, որ վաթեցավ թաղերտն նորայ, և Գորգին խանն խանչէր և տոչորէր առ ցաւս իր»¹²²:

Գորգին խանին և նրա մարդկանց կոտորելուց և պատմագրի ասելով «նրանց լեշերը շների և գազանների առջև որպես կերակուր

¹²² Ստեփաննոս Երեց, էջ 27:

մետելուց հետո» Միր-Վեյսը ավարի է մատնում նրանց ողջ ունեցվածքը և «տիրում Աֆղանից գավառին»:

Այդ միջադեպը ծառայում է ազդանշան 1709 թ. Սեֆյանների դեմ աֆղանական ցեղերի հզոր ապստամբության բռնկման համար: Գնալով ապստամբների թիվը մեծանում էր, քանի որ գիլգայիների շարժմանը աջակցում էին շահական կառավարությունից դժգոհ հարևան աֆղանական ցեղերը: Ապստամբներին հաջողվում է երկու անգամ՝ 1711 և 1712 թթ. ջախջախել իրենց դեմ ուղարկված շահական զորքերին: Ստեփաննոս Երեցը այդ ապստամբությունը և աֆղանների կողմից Իրանի նվաճման և շահ Սուլթան Հուսեյնին գահընկեց լինելու պատմության վերաբերյալ հաղորդում է խիստ արժեքավոր և ուշագրավ տեղեկություններ, որոնք ունեն հիշյալ իրադարձությունների վերաբերյալ եզակի (ունիկալ) բնույթի սկզբնաղբյուրի արժեք: Շարժմանը կրոնական երանգավորում տալու շնորհիվ Միր-Վեյսը կարողանում է իր դրոշի ներքո համախմբել ոչ միայն աֆղանական մյուս ցեղերին, այլև առհասարակ պետության արևելյան ծայրամասերի բոլոր սուննի ցեղերին ու ժողովուրդներին: Ստեփաննոս Երեցի նշելով՝ «կազմելով մի մեծ խաժամուժ բանակ»: Մինչև իր մահը (1715 թ.) Միր-Վեյսը իր հսկողության տակ գտնվող երկրամասի անկախ և ինքնիշխան կառավարիչն էր:

Միր-Վեյսին փոխարինած Միր Աբդուլլան (կառավարել է 1715-1717 թթ.) արտահայտել է շահի հետ հաշտվելու ցանկություն պայմանով, որ նա վերացնի ծանր հարկերը և Ղանդահարի բեկլարբեկությունը վերածի Միր-Վեյսի ժառանգորդների ժառանգական տիրույթ: Այդ ուղղությամբ նրա վարած բանակցությունները շահական արքունիքի հետ ասպատմբաժ աֆղանների զանգվածի կողմից ընկալվում է որպես դավաճանություն: Միր-Աբդուլլան սպանվում է և նրա տեղը գրավում է Միր-Վեյսի տասնիննամյա որդին՝ ռազմաշունչ հակումներով օժտված Միր-Մահմուդը (կառավարել է 1717-1725 թթ.): Վերջինս, ինչպես նաև նրան աջակցող ցեղային ազնվականությունը, որոշեց օգտագործել շարժումը կողոպտչական և նվաճողական արշավանքներ կազմակերպելու համար: Հարուստ ավար ձեռք բերելու հույսով ապստամբական բանակին են միանում գիլգայի ցեղից նո-

րանոր ռազմիկներ, քիչ անց նաև արդալի խոշոր ցեղը, Բելուջեսթանի ռազմիկ ցեղերը և այլն: Չնազանի նման աճող Սիր-Մահմուդի բանակը արագորեն մեծանում է՝ հասնելով 20-30 հազարի: Այդ հեծյալ զորքերը 1721 թ. վերջին Սիսթանի (Սեյիսթան) և Քերմանի վրայով սկսում են շարժվել դեպի բուն Սեֆյան պետության տարածքը: Հեղեղի նման սուրարով առաջ, նրանք մոտենում են մայրաքաղաքին:

1722 թ. մարտի 8-ին Սպահանից 25 կմ արևելք՝ Գուլնաբադ գյուղի մոտ տեղի է ունենում աֆղանական զորքերի և 50 հազարանոց իրանական բանակի բախումը: Վերջինս բաղկացած էր գլխավորապես շրջակա գյուղերից հապշտապ հավաքված աշխարհագորայիններից: Այդ «բանակը» չկարողացավ լուրջ դիմադրություն ցույց տալ զավթիչներին և փախուստի դիմեց: Գուլնաբադի ճակատամարտում, վկայում է Ստեփաննոս Երեցը, «շրջապատեցին աղուանքն զգօրս նոցայ և այնպես ճորտտեալ կոտորեցին, որպէս տերևս ծառոյ հարեալ ի կարկտէ»¹²³: Այնուհետև աֆղանները պաշարում և գրավում են Նոր Ջուղան և հայ բնակչության վրա դնում 120 հազար թումանի չափով հսկայական ռազմատուգանք: Համոզվելով, որ անհնար է հավաքել այդչափ մեծ զումար, զավթիչները այն իջեցնում են 70 հազարի: Մահմուդ-խանը շահ Հուսեյինին առաջարկում է հաշտություն հետևյալ պայմաններով. իրեն զիջել Ղանդահարը, Սիսթանը և Խորասանը, վճարել 50 հազար թուման ռազմատուգանք և շահի աղջկան կնության տալ իրեն: Արքունիքին կից շահական մեջլիսը կտրուկ մերժում է այդ պայմանները: Դրան հետևում է աֆղանների կողմից Սպահանի պաշարումը, որը շարունակվում է յոթ ամիս (1722 թ. մարտից մինչև հոկտեմբեր):

Անդրադառնալով այդ իրադարձություններին՝ ճիզվիթ կրոնավոր Հակոբ վարդապետն արձանագրում է. «յազգէն նետողաց և Աղուանից եղև այս կիզումն պարսից, որ էր Սիրմահմուդ անուամբ ոճն բռնաւոր որդի Սիրվէիսի ելեալ զօրօք ի Ղանդահարայ, և ի թիվն փրկչին 1722 մարտ 1 եհաս ի Սպահան քաղաքն, պատեալ պաշարեաց գնա և յետ եօթն ամսոյ հոկտեմբերի 12 էառ զքաղաքն, և որոյ ճա-

¹²³ Ստեփաննոս Երեց, էջ 29:

րակ տուեալ, որ թէ ի սովու և թէ ի սրոյ, վեց հարիւր հազար անձինք մեռան»¹²⁴:

Ուշագրաւ է դեպքերին ժամանակակից ճիզվիթ միսիոներ Յուդէ Կրուշինսկու հետևյալ հաղորդումը: Հիվանդագին երևակայությամբ տառապող շահ Սուլբան Հուսէյինը մտավախություն է ունեցել, որ օգտվելով աֆղանների ներկայությունից, Իրանի հայ բնակչությունը, մասնավորապես իր մայրաքաղաքի մերձակայքում գտնվող Նոր Ջուղայի հայությունը, կապստամբի իր դեմ: Ուստի նա որոշում է չեզոքացնել նրանց: Շահը պահանջում է, որ հայերը՝ որպես իր հպատակներ, զինված ներկայանան պալատ իբր իրեն աֆղաններից պաշտպանելու համար: Հայերը հավատարիմ լինելով իրենց ապրած երկրին և նրա տիրակալին պաշտպանելու պարտքի գիտակցությամբ՝ ներկայանում են արքունիք, սակայն շահը հրամայում է անմիջապես զինաթափել նրանց:

Աֆղանների առաջնորդը, - պատմում է Ստեփաննոս Երեցը, - «շուրջանակի մեջ առավ մայրաքաղաք Սպահանի բոլոր ճանապարհներն այնպես, որ չէին կարողանում քաղաք ելումուտ անել և ուտելիքի պաշար տանել»¹²⁵: Ջավթիչները «սփռեցան ի շրջակայ գաւառս ի Գիւղօրեայս, քակէին, ավերէին, հրձիգ արկանէին, սպանանէին և զաւարն բերէին ի բանակն»: Պատմագիրը նկարագրում է, որ պաշարված մայրաքաղաքում և շրջակա մահալներում սկսվում է սարսափելի թանկություն, որին հետևում է սովը: «Մարդիքն մին գմինու կերան, ռխչ սովամահ ելան»: Նրա ասելով սովի մատնված մարդիկ սկսեցին ուտել շների, կատուների, ավանակի միս, ծառի տերևներ, թրիք, կաշի, հին կոշիկներ և առհասարակ ինչ պատահի: Գործը հասնում է նույնիսկ մարդակերության: Գտնվում են մայրեր, որոնք սպանում և ուտում էին իրենց սեփական զավակներին: «Բազումք մեռան ի սովոյն այնքան, որ ոչ բաւ էին քաղել գնոսայ և տեսօղքն պատմէին, թե ոչ մնաց անասունս, որ ոչ կերան՝ զսուրբն և անսուրբն»¹²⁶:

¹²⁴ **Յ. Տէր-Յովհաննէանց**, նշվ. աշխ., հ. 1, էջ 235:

¹²⁵ **Ստեփաննոս Երեց**, էջ 165:

¹²⁶ Անդ, էջ 29:

Անհավանական է թվում պատմագրի հաղորդած այն տեղեկությունը, որ համատարած ավերի ու կործանիչ սովի պայմաններում Նոր Զուղան «ազատ մնաց ի սովոյն հարուածոց, զի կայր ի Զուղայ լիութիւն, համբարայ և կերակրոց, և ոչ ոք ի Զուղայեցոյն վտանգեցաւ ի սովոյն»¹²⁷:

Ստեփաննոս Երեցը «վշտագնեալ սրտիւ և արտասուաթոր աչոք» պատմում է, որ «թիւ սովամահ մեռելոցն ի քաղաքամիջի անդ եղև քսան հազար, յորոց բազումք յանցս ճանապարհի երթեալ և անկեալ մեռեալ էին և սկսեալ էին նեխիլ, զորս Մահմուդ հրամայեաց քաղել և մաքրել գրաղաքն»¹²⁸:

Աֆղանները Նոր Զուղայում հանդիպում են բնակչության կողմից կազմակերպված դիմադրությանը: Ստեփաննոս Երեցի հաղորդած այդ տեղեկությունը հաստատվում է Յուդե Կրուշինսկու վկայությամբ, որը Զուղայի պաշարման և այնուհետև գրավման ժամանակ գտնվել է տեղի ճիզվիթների տանը և դարձել հայ բնակչության համար ստեղծված աղետալից վիճակի անմիջական ակնմատեսը¹²⁹:

«Ոգևորված իրենց հաջողություններից, – վկայում է նա, – հայերը սպասում էին Արաբիայի վալիի գալստին, որպեսզի իրենց հերթին անցնեն հարձակման, սակայն այս գորապետն արդեն հասկացնել էր սովել, որ ինքը քիչ է հսկված ընդհանուր շահագրգռության ներկայացնող հարցերի լուծմանը: Այս տարօրինակ մոտեցումը, հայերին զինաթափելու մախաձեռնությունը, և նրանց օգնական կայազոր ուղարկելու կոչն անուշադրության մատնելը, մարդկանց հանգեցրին այն մտքին, որ թագավորի մտադրությունն է Զուլֆան և նրա բնակիչներին զոհաբերել համուն մայրաքաղաքի փրկության: Ենթադրվում էր, որ աֆղանները կողոպտելով արվարձանի մեծ հարստությունները, բավարարված կլինեն և կմտածեն վերադառնալ Ղանդահար»¹³⁰:

Չստանալով պետության աջակցությունը՝ ջուղայեցիները ստիպված են լինում դադարեցնել դիմադրությունը և զավթիչների

¹²⁷ Անդ, էջ 29:

¹²⁸ Անդ, էջ 30:

¹²⁹ Krusinskiy, I, p. 54 և հուն.:

¹³⁰ Krusinskiy, I, p. 274.

հետ մտնել բանակցությունների մեջ: Աֆղանները խոստանում են Նոր Ջուղայում չդիմել կոտորածի և կոլոպուտի, եթե հայերը անհապաղ վճարեն 70 հազար բուման ռազմատուգանքը: «Ինչքան էլ ծանր լինեք այս պայմանը, – գրում է Կրուշինսկին, – Մահմուդը դրան ավելացրեց ավելի ծանրը: Դեռ նոր էր տեր դարձել Ջուղային, երբ հայերից պահանջվեց տոհմիկ ընտանիքներից իրենց հայեցողությամբ ընտրված որոշակի թվով երիտասարդ աղջիկներ»¹³¹: Այդ ամենը քիչ համարելով և դրժելով իր համաձայնագիրը ջուղահայերի հետ՝ բռնակալը հրամայում է Նոր Ջուղան ենթարկել անխնա կոլոպուտի: Ի կատարումն այդ հրամանի՝ աֆղան զինվորները սկսում են բարբարոսական և գազանաբարո եղանակներով թալանի մատնել հայերի տները, գլխատում են Ջուղայի քաղանքարին, գերության քշում հարյուրավոր տղաների և աղջիկներով լցնում իրենց հարեմները: Ովքեր չէին կարողանում վճարել «արյան գնի» կամ «փրկագնի» իրենց բաժինը՝ մատնվում էին տանջանքների ու մահվան: Ուշադրություն չդարձնելով անօգնական ժողովրդի լացին ու տառապանքներին՝ բարբարոսները շարունակում էին իրենց պժգալի արարքները՝ անխնա խողխողելով ու կոլոպատելով բնակչությանը: «Ոսկի, արծաթ, թանկագին քարեր, կահույք, թանկարժեք կերպասեղեն, ամեն ինչ և բնակիչները հոգեվարքին հասած իրենց վրա կրեցին հարձակումով գավթված մի քաղաքին սպառնացող ամեն տեսակի բռնությունները»¹³²: Աֆղանները, – պատմում է լեհ միսիոները, – մահակներով հարկանելով ջուղայեցի երեւի ու հարուստ վաճառականներին, նրանցից խոստովանություն էին կորզում իրենց և բարեկամների թաքցրած հարստությունների վերաբերյալ¹³³: Ի վերջո հուսահատության մատնված շահը բանակցում է Մահմուդի հետ՝ այս անգամ նրան առաջարկելով վճարել 100 հազար բուման ռազմատուգանք, և համաձայնվելով, որ նրան կգիջի իր պահանջած երկրամասերը, դրանց գումարած նաև Քերմանը: Նա խոստանում է նաև իր աղջկան կնության տալ հաղթողին: Չբավարարվելով այդ ամենով, Մահմուդը

¹³¹ Անդ, էջ 271-272:

¹³² Անդ, էջ 279:

¹³³ Անդ:

լկտիաբար հայտարարում է, որ իր հաղթանակից հետո Իրանի բոլոր շրջանները իրենց հարստություններով առանց այն էլ անցնում են իրեն, և ինքը շահի բոլոր աղջիկներին ու շահի հարեմի կանանց որպես ստրուկներ բաժանելու է իր զինվորներին:

Մայրաքաղաքից անհաջող փախուստի փորձից հետո շահ Սուլթան Հուսեյինը իր շքախմբի հետ 1722 թ. հոկտեմբերի 22-ին մեկնում է Մահմուդի ռազմական ճամբարը և նրան հանձնում մայրաքաղաքի բանալիները, իր իշխանությունը և շահական արժանապատվության բոլոր խորհրդանիշները: Երկու օր հետո Մահմուդը իր գորքերով մուտք է գործում Սպահան և զբաղեցնում շահական գահը: Մեֆեյան էմիրների և զինվորական աստիճանավորների մի մասը, ինչպես նաև բարձրաստիճան պալատականները հավատարմության երդում են տալիս Մահմուդին¹³⁴:

Անդրադառնալով վերոհիշյալ իրադարձություններին՝ Ստեփաննոս Երեցը գրում է. «Երբ քաղաքի (Սպահանի – Վ. Բ.) բնակիչները տեսան, որ բոլորը սովից մեռնելու են, կամա թե ակամա Պենտեկոստեի կիրակիին քաղաքը տվեցին աֆղանների ձեռքը: Երբ նրանք մտան քաղաք, բռնեցին շահ Սուլթան Հուսեյին թագավորին: Թագավորը Թահմազ անունով մի որդի ուներ, որին փախցրել էին Խորասանի գավառ: Քաղաք մտնելով՝ աֆղանից գորքը փողոցներում, պողոտաներում և տների անկյուններում տեսավ բազմաթիվ մեռելների՝ գազանների կողմից հոշոտված, տրորված ու գարշահոտած: Հրամայեցին թաղել նրանց և հաշվառել. թվով քսան հազար սովամահ եղած գտան»¹³⁵: «Բազում մանկամարդ աղջիկներ գերեվարեցին պարսիկները, – շարունակում է պատմագիրը, – և տարան իրենց գավառը՝ Ղանդահար, նրանց փոխարեն, որ առել էր Գորգին խանը: Ապա գրավելով՝ տիրեցին բոլոր գավառներին»¹³⁶: Որպես Իրանի տիրակալ՝ Մահմուդ շահի առաջին գործն եղավ Սպահանի վրա ծանր ռազմատուգանք դնելը: Իսկ քիչ անց՝ 1723 թ. հունվարի 25-ին

¹³⁴ Ст'ю И. В. *Пигулевская и др.*, История Ирана с древнейших времен до конца XVIII в., стр. 311-313.

¹³⁵ Ստեփաննոս Երեց, էջ 165:

¹³⁶ Անդ, էջ 165-166:

նորաթուխ շահը ողջ Մեֆյան ազնվականությանը և մայրաքաղաքի աչքի ընկնող մարդկանց իրենց ընտանիքներով հրավիրեց պալատ՝ «արքայական խնջույքի», որի ժամանակ հրամայեց նրանց բոլորին՝ մինչև վերջին մարդը, չխնայելով նույնիսկ երեխաներին, անխնա սրի քաշել: Ժողովրդի աչքում այդ նողկալի դաժանությունն արդարացնելու համար հայտարարվեց, որ իբր այդ մարդիկ դավադրություն էին կազմակերպել և ցանկանում էին նրան սպանել:

Սակայն բռնակալը դրանով չբավարարվեց: Սպահանում էին գտնվում շահ Սուլթան Հուսեյնի թիկնազորի և բանակի երեք հազար զինվորներ, որոնք կամավոր անցել էին աֆղանների կողմը և հավատարմության երդում էին տվել Մահմուդին: Սակայն չնայած դրան, վերջինս մշտական երկյուղի մեջ էր, որ մի գեղեցիկ օր դրանք կարող են գենքը շուռ տալ իր դեմ: Ուստի նրանց պատիվների արժանացնելու և հյուրասիրելու պատրվակով շահը հրավիրեց շահական նստավայրերից մեկը: Երբ բոլորն անխտիր հավաքվեցին, նենգ աֆղանցին հրամայեց զինաթափ անել և կոտորել նրանց: Դա տեղի ունեցավ 1723 թ. հունվարին: Այնուհետև մայրաքաղաքում սկսվեց բոլոր այն մարդկանց որսը, որոնք ընդունակ էին գենք կրելու:

Օգտվելով երկրում ստեղծված խառնակ վիճակից ու քառսից՝ մի շարք հպատակ ժողովուրդներ գլուխ բարձրացրին: Նախ ապստամբեցին քրդերը, որոնց զինված ջոկատները նույնիսկ հայտնվեցին Սպահանի մերձակայքում¹³⁷: Ուզբեկները սկսեցին ասպատակ սփռել Խորասանում¹³⁸: Կովկասում ալեկոծվեցին լեզգիները¹³⁹: Երկրի հարավում՝ Խուզիսթանում, ապստամբեցին արաբները: Վրաստանում ևս սկսվեցին քաղաքական խլրտումներ: Բուն Իրանի տարածքում վաչկատուն լեռնական ցեղերը սկսեցին ասպատակ սփռել և կողոպուտի մատնել դաշտավայրերի երկրագործ բնակչությանը: Ինչպես միշտ, նրանց թիրախը հատկապես հայերն էին, գլխավորապես Փերիայի և Բուրվարի գավառների հայ հողագործ բնակչությունը: Եվ քանի որ Իրանում ոչ մահմեդական, այլադավան-

¹³⁷ Krusinski J., II, p. 121.

¹³⁸ Անդ, էջ 121-122:

¹³⁹ Անդ, էջ 122-123:

ների կողմից գենք կրելն արգելված էր, ապա անգեն հայ բնակչությանը կողոպտելը զինված քոչվորների համար մեծ դժվարություն չէր: Հաճախ լեռնական ավարառուներին միանում էր նաև տեղի մահմեդական նստակյաց բնակչությունը:

Ստեփաննոս Երեցը պատմում է, որ Փերիայի լոռերը տաճիկներին հետ ապստամբեցին նրա (Մահմուդի – Վ. Բ.) դեմ և «սկսան գործել չարիս և աւար հարկանել զգեղորայսն Փէրիոյ: Ի գործէս յասմանէ ժողովեցան ազգն լօռից, որ Քէյմաստ անուանեն, եկն ի գետոն Խոջիղալէն և ասէն ցտանուտերն, որ Սինան անուանեն, ասեն. «Գնայ ի գետոն Հազարջրիպ և ասայ ցնոսայ, թէ՛ տուք մեզ հարուր գրուանս գարոյ և ցորնու, ապա թէ ոչ, աւար հարկանելոց ենք զգետոս ձեր՝ զանասուն և զամենայն կահս ձեր»¹⁴⁰:

Ստեփաննոս Երեցը գրում է, որ թեև հայ գյուղացիությանը հաջողվում է փոքրաթիվ ուժերով փախուստի մատնել Քէյմաստ ցեղի ավարառուներին, սակայն հասկանալի է, այդ հուսահատ դիմադրությունը ի գործ չէր հանգցնել լեռնական գիշատիչ ցեղերի ավարառության տենչը, որոնք վրիժառությանը վառված նոր ուժերով հարձակվում են Հազարջրիբի և շրջակա գյուղերի հայկական բնակավայրերի վրա:

«Հարձակման ենթարկված հայերը,- հայտնում է Ստեփաննոս Երեցը,- «ըսկսան կրել զմարմին մահատակացն ի գետոն և ըսկսան սուգ առնուլ զնոսայ: Չմորմոքումն հարց, զկոծումն մարց, զճշումն քերց, զխանչումն եղբարց, զհառաչումն սիրելեաց, զարտասուս բարեկամաց, զկսկիծ տետղացն՝ որպէս ճայթմունս ջուրց և որպէս որոտումն ամբոց ելանել յերկին՝ ըստ ասելոյն Եսայի. «Սուք էառ և կոծեցաւ երկիր, կործանեցաւ և ապականեցան տիեզերք»¹⁴¹:

Համատարած քաոսի և անիշխանության պայմաններում Իրանի արևմտյան գավառներում դժբաղ Ֆրեյդուն անունով գորականներից մեկը անցնելով ութսուն հազարանոց հեծելագործի գլուխ ապստամբում է աֆղանների դեմ: Լսելով նրա գալստյան մասին՝ Համա-

¹⁴⁰ Ստեփաննոս Երեց, էջ 30:

¹⁴¹ Անդ, էջ 31:

դանի «տաճիկ իշխանները քրճագգեստ և մոխիր քսելով իրենց գլուխներին գնացին մինչև Համադան և չարախոսեցին քրիստոնյաների (նկատի ունի հայերին – Վ. Բ.) դեմ, թե նրանք բերեցին աֆղանից զորքը, բնաջնջեցին մեր ազգը և մեր գյուղերը թալանեցին»¹⁴²:

Այսպիսով, հայության վրա կախվում է քավության մոխազ դառնալու վտանգը: Խոստանալով, որ ինքը կառնի բողոքավորների արյան վրեժը, Ֆրեյդունը զորքը շարժում է Բուրվարի և Փերիայի հայկական գյուղերի ուղղությամբ, անխնա մահ ու ավեր տարածելով: «Բռնեցին գյուղի (Հազարջրիբի – Վ. Բ.) տղամարդկանց, լլկեցին ու չարչարեցին և մտադրվեցին մինչև արևի մայր մտնելը բոլորին սրախողխող անել»¹⁴³, – վկայում է Ստեփաննոսը: Այնուհետև ավարառուները ցրվում են հայկական մյուս բնակավայրերում (Բոլորան, Չինիսուլթան, Ավուս և այլն) «գարնան հեղեղի նման տապալելով գյուղերը»¹⁴⁴:

«Երբ Ֆրեյդուն խանը բանակ դրեց Ավուս գյուղում, – հայտնում է պատմագիրը, – հավաքվեցին մուֆտիներն (մահմեդական օրենսգետ – Վ. Բ.) ու կանաչագլուխները (սուննի սեյյեդները – Վ. Բ.), գլխներին մոխիր ցանաժ և երեսներին կավ քսաժ, կրկին չարախոսեցին հայերին՝ դրանք բերեցին աֆղանից զորքը և ավերեցին մեր գյուղերը՝ Ֆրեյդուն խանը տեսավ, որ կրկնվեցին նրանց չարախոսությունները՝ հրամայեց «գիսյոց ազգն ի սուր քաշել զամենայն»...: Եւ յորժամ լուսան ի պղծէն անողորմ զորքն տաճկաց, առին զգեմս և զգաղաբսանս իւրեաց և դիմեցին ի սուր սուսերի մաշեցին զգետօս չորս, որ են այսոքիկ՝ Մարդիդրագ, Խոյկան, Դաշքաշան և Հատան»¹⁴⁵:

Գոլփայեզանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում աֆղանները ջախջախիչ պարտության են մատնում ապստամբ Ֆրեյդուն խանին: Աֆղանական զորքը այնպես է կոտորում հակառակորդին, «ինչպես ծառի տերևներն են ընկնում կարկուտից: Աֆղանների սրից

¹⁴² Անդ, էջ 173-174:

¹⁴³ Անդ, էջ 174:

¹⁴⁴ Անդ, էջ 174:

¹⁴⁵ Անդ, էջ 40:

ութսուն հազարից երկու հազարը մազապուրծ փրկվեց»¹⁴⁶: «Աֆղանները մտան Գոլփայեզանի բերդը, կոտորեցին նրանց տղամարդկանց, մանկամարդ աղջիկներին գերեվարեցին, թալանեցին նրանց ամբողջ ունեցվածքն ու ամասունները», - պատմում է Ստեփաննոսը, նշելով նաև, որ «աֆղանից զորքը ազատեց հայերին գնալու իրենց տեղերը, իսկ տաճիկ գերիներին տարան իրենց հետ»¹⁴⁷:

Իրանում աֆղանների հսկողության տակ անցած տարածքներում զավթիչները իրենց պահում էին ինչպես նվաճողներ: Ղազվինում, օրինակ, աֆղան զորավարներից Ամանուլլա խանը քաղաքի բնակչության վրա դրեց քսան հազար թուման գումարի ռազմատուգանք և պահանջեց աֆղաններին հատկացնել գեղեցիկ աղջիկներ: Շահ Մահմուդը ծանր ռազմատուգանք դրեց նաև Սպահանի բնակչության վրա: Նոր Ջուղայի հայ վաճառականներին մինչև վերջ «քամելու» համար կրկին անգամ նրանցից որպես «փրկագին» պահանջվեց խոշոր գումար: Հայերին սարսափի մատնելու նպատակով աֆղանները գլխատեցին Նոր Ջուղայի քաղաքարին: Փրկագին վճարելու պարտավորություն դրվեց նաև անգլիական, հոլանդական, ֆրանսիական և հնդիկ վաճառականներին վրա:

Չնայած աֆղանների կողմից իրականացվող բարբարոսական բնույթի դաժանություններին, որոնց նպատակն էր անդամալուծել Իրանի բնակչության կամքը և դրանով իսկ բացառել դիմադրությունն ու ապստամբությունները, զավթիչների վիճակն Իրանում կայուն չէր: Երկրի նշանակալից մասը, փաստորեն, չէր հնազանդվում նրանց: Տարբեր վայրերում նրանց դեմ բռնկվում էին մեծ ու փոքր ապստամբություններ: Որպես կանոն Մահմուդ շահը դրանց պատասխանում էր զանգվածային կոտորածներով ու ահաբեկչությամբ, որոնք, սակայն, ի վիճակի չէին կայունացնելու իրավիճակը: Սկսել էր երերալ նաև շահի սոցիալական հենարանը: Շահը սկսել էր կասկածամտությամբ ու անվստահությամբ վերաբերվել մույնիսկ իր ցեղակից բարձրաստիճան զինվորականությանը: Ստեփաննոս Երեցը պատմում է,

¹⁴⁶ Անդ, էջ 175:

¹⁴⁷ Անդ, էջ 175:

որ ցանկանալով բացահայտել իր երևութական և աներևույթ թշնամիներին («զբարեկամս և զթշնամիս իւր ճանաչել»), խորամանկ ու նենգ Միր-Մահմուդը իր մարդկանց միջոցով հայտարարում էր, թե իբր ճակատարմարտերից մեկի ժամանակ ինքը սպանվել է¹⁴⁸: Այդ ճանապարհով նա բացահայտում էր իր թշնամիներին և հաշվեհարդար տեսնում նրանց հետ:

Աստիճանաբար սկսեցին հակասություններ դրսևորվել նաև աֆղանական վերնախավի միջև: Երևան եկան նաև գահի նոր հավակնորդներ: Դրանցից մեկն էր Մահմուդի եղբորորդի Աշրաֆը, որը դեմ էր իր ազգականի վարած քաղաքականությանը՝ այն համարելով անհեռանկար ու արկածախնդրական: Նրա կարծիքով անհրաժեշտ էր վերջ տալ զանգվածային կոտորածներին և ամեն ինչ անել մերձեցման եզրեր ստեղծելու համար աֆղան տիրապետողների և նրանց պարսիկ հպատակների միջև: Սակայն առաջմ ուժը Մահմուդի ձեռքերում էր: Նա չհապաղեց Աշրաֆին նետելու բանտը:

Սակայն Աֆղան տիրակալի համար առավել վտանգավոր ախտյանը աֆղանների կողմից գահընկեց արված շահ Սուլթան Հուսեյինի որդի Թահմազն էր (Թահմասպ), որին հաջողվել էր փախուստի միջոցով փրկվել անխուսափելի մահից: Նա գտնվում էր երկրի հյուսիսային շրջաններում՝ Գիլանում, Մազանդարանում և Ատրպատականում՝ այդ վայրերում ճանաչվելով որպես շահ Թահմասպ Բ: Սակայն զավթիչների նկատմամբ նրա բռնած պասիվ կրավորական դիրքորոշումը նրան հնարավորություն չտվեց աֆղանների դեմ կազմակերպելու զանգվածային ժողովրդական շարժում, հետևաբար նաև ստեղծելու մի այնպիսի բանակ, որն ի վիճակի լիներ զավթիչներին վռնդելու երկրից: Սեֆյան դինաստիան իր գոյության տարիներին այն աստիճանի էր վարկաբեկել իրեն, որ մարդիկ չէին ցանկանում հավաքվել նրա դրոշի ներքո:

Իրանի ներքաղաքական վիճակը էլ ավելի բարդացավ Ռուսաստանի վարած ակտիվ քաղաքականության հետևանքով: Այն ժամանակ, երբ աֆղանները պաշարել էին Սպահանը՝ 1722 թ. հուլիսին,

¹⁴⁸ Անդ:

Ռուսաստանի կայսր Պյոտր Ա-ն հրամայեց իր զորքերին Աստրախանից ծովով անցնել Դաղստան: Սկսվեց, այսպես կոչված, «Կասպիական արշավանքը»: Ռուսաստանի ելույթը արագացվեց նրանով, որ այդ նույն օրերին օսմանցիները սկսել էին եռանդուն կերպով միջամտել Շիրվանի խանության գործերին՝ նրա սուննի բնակչությանը հրահրելով ակտիվ քայլերի ինչպես Իրանի, այնպես էլ Ռուսաստանի դեմ:

Սակայն Կասպիական արշավանքը դեռ, չսկսված, մարեց: Դրա հիմնական պատճառը Օսմանյան կայսրության հետ պատերազմի սպառնալիքն էր, որին Ռուսաստանը պատրաստ չէր: Հակառակ հայերի և վրացիների սպասելիքների, որոնք ոգևորվել էին Պյոտրի հրապարակած մանիֆեստի այն հայտարարությունից, որ ինքը կազմակերպում է այդ արշավանքը կովկասյան քրիստոնյաներին՝ հայերին ու վրացիներին պաշտպանելու համար, որի պատճառով և՛ Ղարաբաղի հայ մելիքները, և՛ Աղվանից կաթողիկոս Եսային իրենց զորքերով դուրս էին եկել վրաց Վախթանգ թագավորի առաջնորդությամբ՝ դիմավորելու ռուսներին և իրենց զորքերով միանալու նրանց՝ ազատագրական մեծ հույսեր կապելով այդ արշավանքի հետ: 1722 թ. սեպտեմբերին Պյոտրը դադարեցրեց արշավանքը, իր զորքերը հետ տարավ Աստրախան, իսկ ինքը մեկնեց Պետերբուրգ:

Օսմանյան կայսրությունը, որը տևական ժամանակաշրջանում Իրանի հետ պահպանում էր խաղաղ հարաբերություններ (1639-1723 թթ.), շտապեց օգտվել սեֆյանների պետության կազմալուծումից ու քայքայումից: Միաժամանակ 1723 թ. ռուսական զորքերի կողմից Բաքվի գրավումը մեծապես անհանգստացրել էր օսմանցիներին՝ նրանց բերելով այն համոզման, որ ռուսները քայլ առ քայլ նվաճելու են Անդրկովկասը:

1723 թ. սուլթան Ահմեդ Գ-ի հրամանով օսմանյան բանակը ներխուժեց Արևելյան Հայաստան ու Արևելյան Վրաստան, գրավելով Երևանն ու Թիֆլիսը: Այնուհետև ներխուժելով բուն Իրանի տարածքը՝ թուրքական զորքերը գրավեցին Ղազվինը, Համադանը և Քերման-շահը: Գրավված վայրերում թուրքերը սրի քաշեցին տեղական բնակչությանը, իսկ հազարավոր տղաների և աղջիկների քշեցին գե-

րության: Համադանում, օրինակ, որտեղ բնակվում էին երեք հարյուր տուն հայեր, թուրքերի կոտորածից հետո մնացին միայն հատ ու կենտ մարդիկ:

Օսմանյան կայսրությունը չբավարարվեց նույնիսկ 1725 թվականին Սպահանից հետո իր մեծությամբ Իրանի երկրորդ քաղաքի՝ Թավրիզի գրավումով: Ստամբուլը ձգտում էր նվաճել ամբողջ Իրանը: Թուրքական զորքերին հաջողվեց 1726 թ. ընդիույ մոտենալ մայրաքաղաք Սպահանին:

Օսմանյան զորքերի այդ արշավանքի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև Ստեփաննոս Երեցը: «Ի թուին Ռ-ճՀԲ (1723)-ին ժողովեցան ազգն օսմանցոց իբրև զօրս Բճ (200) հազար գալ ի վերայ Մահմուդ թագաւորին: Եկին ի գաւառ Քազազու ի գեղոն Աստան և ետուն անդ ովրակն իւրեաց: Եւ լուաւ արքայն Մահմուտ զգալ նոցա, հանգանակեց և սայ զզօրս իւր հեծեալս քառասուն հազար, ելեալ յԱսպահանայ և չունեաց բանակաւ իւրով դեպի Քազազու... և պատերազմել ընդ օսմանցոց, յաղթահարեաց զնոսա և զբազումս ի նոցանէ կոտորեցին և հուսկ ապա հաստատեցին ընդ միմիայնս զղաշինս խաղաղութեան և Մահմուդ դարձաւ յԱսպահան»¹⁴⁹:

Ներքին և արտաքին բարդությունները շահ Մահմուդի մոտ ուժեղացրել էին բռնավորներին հատուկ կասկածամտությունը և վախը, որը նրան հաճախ մղում էր անհարկի դաժանությունների: Այսպես, օրինակ՝ 1725 թ. փետրվարին նա հրամայեց Սեֆյանների ընտանիքի բոլոր տղամարդկանց, բացառությամբ նախկին շահ Սուլթան Հոսեյնի, սրի քաշել: Այդ կոտորածի պատճառը այն էր, որ բախսիարական ցեղի ապստամբությունը ղեկավարում էր մի ինքնակոչ, որն իրեն անվանում էր շահ Հոսեյնի որդի Սեֆի միրզա:

Աֆղանական կառավարող վերնախավի մարդկանցից շատերը աստիճանաբար սկսեցին գիտակցել, որ Միր-Մահմուդի ահաբեկչական և իրանական բնակչության նկատմամբ անլուր հալածանքների, անսամձ բռնությունների և կոտորածների քաղաքականությունը տա-

¹⁴⁹ Ստեփաննոս Երեց, Պատմագիրք, էջ 34-35:

նում է դեպի Իրանում աֆղանական տիրապետության կործանում։ Ուստի կազմակերպվեց դավադրություն, և 1725 թ. ապրիլի 22-ին բռնակալը խեղդամահ արվեց։ Ըստ՝ Ստեփաննոս Երեցի օգտվելով այն հանգամանքից, որ Մահմուդ թագավորը հիվանդացել էր, նրա զորապետներից Աշրաֆը, գտնելով հարմար պահ, թագավորի գլխի տակ դրված բարձով խեղդամահ արեց նրան¹⁵⁰։ Շահ հռչակվեց Մահմուդի կողմից երկուս ու կես տարի բանտ նետված նրա Սիր-Ար-դուլլա անունով հորեղբոր որդու տղան՝ Աշրաֆը։ Նույն օրը գիլգայի ցեղի առաջնորդները հավատարմության երդում տվեցին նրան և Աշրաֆին ճանաչեցին որպես իրենց տիրակալ։ Նա դատապարտեց Սիր Մահմուդի անհարկի դաժանությունները իրանցիների նկատմամբ և հասկանում էր, որ չի կարելի ամրապնդել իշխանությունը՝ մնալով լոկ որպես աֆղանական ցեղերի առաջնորդ։ Ըստ այնմ՝ նա աշխատում էր իրեն պահել ինչպես Իրանի տիրակալ, Աշրաֆը իր զորքերի մեջ հաստատեց կարգապահություն, որոշ չափով ձեռնամուխ եղավ պետությունը բարեկարգելու գործին, ինչ որ չափով դադարեցրեց պարսիկների նկատմամբ կողոպուտներն ու բռնությունները, որոշ թվով էթնիկ պարսիկներին ներգրավեց իր բանակի շարքերը, վերացրեց նրանց երկրորդ կարգի մարդ համարելու վերաբերյալ Սիր-Մահմուդի որոշումը, ամեն ինչ անում էր իրանական հողային ազնվականությանը իր կողմը գրավելու համար և այլն։

Նոր տիրակալը բարյացակամության նշաններ էր ցուցաբերում նաև հայերի նկատմամբ։ Նա հրապարակում է հրովարտակ, որով հայկական եկեղեցիներին շնորհվում էր ապահարկության իրավունք։

Սակայն այդ բոլորի հետևանքով նա իրենից վանեց աֆղանական ազնվականությանը, որը ցանկանում էր Իրանում իրեն պահել ինչպես նվաճված երկրում։

Ինչ որ չափով ամրապնդելով իր ներքին վիճակը՝ Աշրաֆը սկսեց զբաղվել արտաքին քաղաքական խնդիրներով։ Նա իրավացիորեն գտնում էր, որ տվյալ պահին ամենավտանգավոր թշնամին օսմանցիներն են, որոնք ձգտում էին ողջ Իրանը միավորել իրենց տիրապե-

¹⁵⁰ Ստեփաննոս Երեց, էջ 176։

տության ներքո: Յուդե Կրուշինսկին վկայում է. «Չբավարարվելով իրենց կողմից նվաճված ընդարձակ տարածքներով, նրանք երագում էին և՛ աֆղաններին, և՛ մոսկովիտներին գրկել այն բոլորից, ինչ նրանք ունեին Պարսկաստանում»:

Ուստի Աշրաֆը որոշեց առաջին հարվածը հասցնել հենց թուրքերին, որոնք տվյալ պահին սրընթաց մոտենում էին մայրաքաղաք Սպահանին: Աֆղանական բանակի պարսիկ հրամանատարներն իրենց տիրակալին հուշեցին թշնամու դեմ օգտագործել իրանական հին ու բազմիցս փորձված «այրված հողի» մարտավարությունը: Աշրաֆը այն աստիճանի ամայացրեց Սպահանի և Ղազվինի միջև ընկած տարածքը, որ յոթանասուն հազարանոց օսմանյան բանակը, գրկվելով ամեն տեսակի մատակարարումից, ստիպված էր մայրաքաղաքին մոտենալ շրջանցիկ ճանապարհներով: Համաճարակների, սննդամթերքի ու ջրի պակասի, լեռնային պատերազմներին վարժված աֆղանների մշտական հարձակումների հետևանքով թուրքական բանակն ուժասպառ եղավ, բարոյալքվեց և կորցնելով մեծ թվով զինվորներ ստիպված եղավ նահանջել Վրաստան (1726 թ.), որպեսզի հանգստանա և համարի իր նոսրացած կազմը: Հաջորդ տարի, երբ թուրքերի ռազմարշավը կրկնվեց, աֆղանները երկու անգամ ջախջախեցին նրանց և հետապնդեցին մինչև Համադան: Սակայն Աշրաֆն իրավացիորեն այդ հաջողությունը համարեց ժամանակավոր և քայլեր ձեռնարկեց օսմանցիների հետ հաշտության բանակցություններ սկսելու համար: Վերջիններս նույնպես հակված էին հաշտության: 1727 թ. նոյեմբերին կողմերի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ Աշրաֆը օսմանյան սուլթան Ահմադ Գ-ին ճանաչում էր որպես բոլոր ուղղադավան մահմեդականների (սուննիների) գերագույն հոգևոր և աշխարհիկ առաջնորդ՝ խալիֆ և Օսմանյան կայսրությանն էր զիջում ոչ միայն այն բոլոր նահանգները, որոնք իրեն էին անցել 1724 թ. Կ. Պոլսի ռուս-թուրքական պայմանագրի համաձայն, այսինքն Ատրպատականը և Իրանական Քրդստանը, այլև Պարսից ծոցի առափնյա Խուզիստանը, ինչպես նաև կենտրոնական Իրանի մի մասը՝ Ջենջան քաղաքով հանդերձ, դրան գումարած նաև Ղազվինը, Մուլեյմանին և Թեհրանը իրենց շրջակա տարածքներով: Այլ կերպ

ասած՝ Աշրաֆը օսմանցիներին էր զիջում ողջ Իրանի տարածքի 2/3 մասը: Այդ բոլորի փոխարեն սուլթանը Աշրաֆին ճանաչում էր որպես Իրանի շահ, որը, սակայն, վասալական կախման մեջ պետք է լիներ Օսմանյան կայսրությունից, և Իրանի մզկիթներում ուրբաթօրյա աղոթքի՝ «խուբբայի» ժամանակ սուլթան Ահմադ Գ-ի անունը պետք է հիշատակվեր Աշրաֆի անունից առաջ:

Թվում էր, թե Աշրաֆին հաջողվել է կայունացնել իր վիճակը: Սակայն Արևելքից, հատկապես Աֆղանստանից, գալիս էին վատ լուրեր: Սպանված Միր-Մահմուդի եղբայր Հուսեյնը զավթել էր Ղանդահարը և հրաժարվում էր ճանաչել Աշրաֆի իշխանությունը: Հերաթի արդալի ցեղի աֆղաններն այլևս չէին ենթարկվում Աշրաֆին: Սիսթանի Մելիք-Մահմուդը պայքար էր սկսել ինչպես Աշրաֆի, այնպես էլ գահաժառանգ Թահմազ Բ-ի դեմ՝ ձգտելով կատարյալ ինքնիշխանության: Երկրի տարբեր մասերում հակաաֆղանական ապստամբությունները չէին դադարում: Ատելությունը աֆղանական վարչակարգի դեմ լեռնանում էր, ուժեղանում էր նաև աֆղանական ազնվականության դժգոհությունը Աշրաֆի վարած քաղաքականության նկատմամբ: Չնայած այդ ամենին, զավթիչների սահմանած վարչակարգը շարունակում էր սանձարձակ բռնությունների, ահաբեկման ու հարստահարությունների մատնել երկիրը և կողոպտել նրա բնակչությանը:

Թահմազ Բ-ի փորձերը դիմադրություն կազմակերպելու աֆղանների դեմ հաջողություն չունեցան: Երկրի ծայր արևելքում՝ Խորասանում, ձևավորվում էր հակաաֆղանական պայքարի մի կենտրոն, որին միանում են մի շարք ցեղապետեր ու խաներ, այդ թվում նաև Նադիր խան Աֆշարը, որն իրեն հռչակեց Թահմազ դուլի խան (Թահմազի ծառա – Վ. Բ.) և իր գլխով երդվեց, որ Թահմազին կվերականգնի իր նախնիների գահին: 1729 թ. հոկտեմբերի 2-ին Դամղանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Նադիրը ծանր պարտության մատնեց աֆղաններին և գրավեց Հերաթը: Այդ նույն թվականին Մեհմանդուսի մոտ և Դերբեն-ի Խար կիրճում (Էլբուսյան լեռներում) երկու անգամ կործանիչ հարված հասցրեց աֆղան-զիլզայիներին: Նադիրը Աշրաֆին ևս մեկ անգամ ջախջախիչ պարտության

մատնեց 1729 թ. նոյեմբերի 29-ին Մուրչեխուրդի մոտ տեղի ունեցած ճակատամարտում, որը գտնվում էր մայրաքաղաքից 60 կմ հեռավորության վրա: Թշնամին խուճապահար փախուստի դիմեց՝ հետապնդվելով տեղական բնակչության կողմից: Աշրաֆը լքեց Սպահանը և իրեն հավատարիմ տասը հազարանոց զորքի հետ բռնեց փախուստի ճանապարհը, սակայն ճանապարհին սպանվեց: Փախուստից առաջ գազազած Աշրաֆը իր զորապետներին հրամայել էր, որ ինչքան կարող են կոտորեն պարսիկ տղամարդկանց և կանանց: Աֆղանները չխնայեցին նաև շահ Սուլթան Հուսեյնին, որին Աշրաֆի հրամանով խեղդամահ արեցին:

Ստեփաննոս Երեցը հանգամանորեն անդրադառնում է այդ եղերական իրադարձություններին՝ տալով արժեքավոր տեղեկություններ: Նրա հաղորդմամբ Նադիրի հետ ճակատամարտը տանուլ տալուց հետո՝ «Թագաւորն Աշրաֆ... հրամայեաց զօրաց իւրոց, թէ որ ունի զկին տաճկի, ըսպանեցէ զնայ, որ և ըսպանին յայնմ գիշերի յաւելի, քան զերեք հազար կանայսն և ծառայս տաճկաց, և ելին ի քաղաքէն և յաճապարեցին դէպ ուղիղ ի գաւառն իւրեաց Դանդահար, հապճեպ ըշտապով»¹⁵¹:

«Երեք օր հետո Թահմազ խանը և Թահմազդուլի խանը, որ Նադիրն էր, լսեցին Աշրաֆ թագավորի փախուստի մասին և վերցնելով իրենց բանակը՝ Գազիբուլհայից եկան Սպահան քաղաք, հրամայեցին որոնել ու գտնել աֆղաններին: Որոնեցին ու գտան մոտ երկու հարյուր տղամարդու և նրանց բերեցին Թահմազ խանի մոտ: Նա հրամայեց թքել նրանց երեսներին, ապա սպանել: Տաճիկներն այնքան թքեցին, որ ոչ նրանց դեմքն էր երևում, ոչ մորուքը: Իսկ թքելուց հետո ծաղր ու ծանակի ենթարկելով՝ բոլորին սպանեցին փողոցում»¹⁵², – պատմում է Ստեփաննոս Երեցը:

Աֆղանական տիրապետության շրջանը իրանահայության համար կողոպուտի, հալածանքների և հետապնդումների դառնադետ մի շրջան էր: Այդ մասին վկայակոչելով մի շարք ձեռագիր հիշատակա-

¹⁵¹ Ստեփաննոս Երեց, էջ 43:

¹⁵² Անդ, էջ 178:

րաններ՝ Հարություն Տեր-Հովհանյանը գրում է, որ հայերը «չունէին զհանգիստ յերեսաց հանապազորդեան հարստահարութեանց, զորս զօրապետք և զօրք Աղուանից հասուցանէին նոցա, պահանջելով զդրամս՝ զկերակուրս՝ զգինի՝ զօղի՝ և զայլ բազում ինչս: Մեծ եղև նոյնպէս տառապանքն նոցա յաղագս վճարելոյ զեօրանասուն հազար թումանն՝ զոր որպէս զին արեան Ջողայեցոց սակ էարկ... յխացան այլազգիք ընդդէմ հայոց, կարծելով տգիտաբար՝ թէ հայք համախոհ ընդ Աղուանից լինելով հասուցին զմեծամեծ վնասս երկրին պարսից»¹⁵³:

Հիրավի, աֆղանական տիրապետությունը ծանր աղետ էր Իրանի համար: Այդ սահաբեկչական վարչակարգի տիրապետության ընթացքում Իրանը զոհաբերեց հարյուր հազարավոր մարդկային կյանք: Երկրի առանձին շրջաններ վերածվեցին ավերակների: Արտադրողական ուժերին հասցվեց ծանր հարված: Բոլոր տեսակետներից աֆղանական տիրապետության յոթ տարիները (1722-1729) Իրանի համար կորսված տարիներ էին:

Նադիրի հաղթանակը շրջադարձային նշանակություն ունեցավ Իրանի համար: Նադիրը, իսկ նրա հետևից նաև Թահմազը, հաղթական երթով մուտք գործեցին ազատագրված մայրաքաղաք Սպահան և Թահմազը նստեց Սեֆյանների գահին, որը յոթ տարի շարունակ զավթված էր օտարների կողմից:

Աֆղանների վտարումից հետո՝ 1730 թ., Նադիրն իր զենքն ուղղեց ամենաահարկու թշնամու՝ օսմանյան թուրքերի դեմ, որոնք գրավել էին համարյա ողջ Անդրկովկասը, Դաղստանի և Շիրվանի մի մասը, ինչպես նաև ընդարձակ տարածքներ Հյուսիսային, Արևմտյան և Կենտրոնական Իրանում: Նադիրին հաջողվեց մի քանի անգամ պարտության մատնել թուրքերին: Այնուհետև երկրի արևելքում նա ձեռնամուխ եղավ Հերաթում արդալի աֆղանական ցեղի ապստամբությունը ճնշելու գործին: Մինչև նա գլխավորում էր աֆղանների և ուզբեկների դեմ կռիվները, շահ Թահմազ Բ-ն, հակառակ Նադիրի բազմիցս նախազգուշացումներին, խուսափել երկու ճակատով մար-

¹⁵³ Զ. Տեր-Հովհաննյան, նշվ. աշխ., 1, էջ 240:

տեր մղելուց, պատերազմական գործողություններ սկսեց թուրք-օսմանցիների դեմ՝ նպատակ ունենալով գրավել Երևանը և Նախիջևանը, դրանով իսկ հույս ունենալով բարձրացնել իր հեղինակությունը: Սակայն Համադանի մոտ՝ Կուրիջանի դաշտում, տեղի ունեցած արյունահեղ ճակատամարտում թուրքական բանակը ջախջախեց Թահմազի զորքերին: Օսմանյան բանակի առջև ճակատը բոլորովին մերկացավ, և սրընթաց շարժվելով առաջ՝ օսմանցիները գրավեցին Համադանը, Քերմանշահն ու Թավրիզը և ներխուժեցին հարավ՝ Խուզիսթան: Անօգնական ու հուսահատ Թահմազը ստիպված էր հաշտություն բախանձել: Նրա և թուրքական սերասկերի միջև 1731 թ. հունվարի 10-ին ստորագրվեց ամոթալի մի փաստաթուղթ հաշտության մասին, որով Թահմազը օսմանցիներին զիջեց Արաքս գետից հյուսիս ընկած «չոխուր սաադ» կոչված բոլոր տարածքները, և Արաքսը ճանաչվեց որպես երկու երկրների սահման: Բացի այդ, Բաղդադի օսմանյան փաշան որպես «արփալըք» (կերակրում) ստացավ Քերմանշահի նահանգի ինը գավառներ: Իր այդ խայտառակ պարտությունից հետո վերադառնալով Սպահան՝ շահը սկսեց վարել սանձարձակ ու անհոգ կյանք՝ իրեն տալով վայելքներին ու հարբեցողությանը և պետության կառավարման ղեկը վստահելով իր պալատականներին:

Նադիրը հրապարակեց մի կոչ, որտեղ շահին անվանում էր հարբեցող, ծուլ, փոքրոգի, վախկոտ և անառակ, անընդունակ երկիր կառավարելու: 1732 թ. օգոստոսին նա իր զորքերով ժամանեց Սպահան և գահընկեց արեց շահ Թահմազին, և նրա ութ ամսական որդուն հռչակեց շահ՝ նրան շնորհելով Աբբաս Գ գահակալական անունը (վերջինս շահ էր համարվում 1732 թվականից մինչև 1736 թ.): Սակայն երկրի ռեալ իշխանությունը գտնվում էր Նադիրի ձեռքերում: Դրանից հետո փաստորեն Նադիրը դարձավ երկրի ինքնիշխան տեր: Անրապնդելով իր դիրքերը՝ նա զորաշարժ կատարեց օսմանցիների դեմ և Քերքուքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում (1733 թ.) պարտության մատնեց թուրքերին: Այսպիսով, պետության քաղաքական միավորումը հասավ իր ավարտին: Իրանական բնակչությանը բնակեցված տարածքները, որոնք կորցվել էին XVIII դարի 20-ական

թվականներին վերադառնալով էին: Անդրադառնալով այդ իրադարձություններին՝ Ստեփաննոս Երեցը գրում է. «Նաղիիրը հավաքեց իր գործը և գնաց Քերմանշահի գավառը՝ օսմանցիների դեմ կռվելու, քանի որ օսմանցիների գործը եկել էր Քերմանշահ: Նաղիիրը նրանց հաղթելով դարձրեց հարկատու: Ապա այնտեղից իր բանակով շարժվեց գնաց Ղարսի վրա և այնտեղ մնաց ինն ամիս, սակայն նրա ամբողջյան պատճառով չկարողացավ գրավել ու վերադարձալ: Հետո իր բանակով չվեց գնաց Դաղատանի գավառը, տիրելով նրան՝ դարձրեց հարկատու: Այստեղից էլ մտրակեց երիվարը և բանակով առաջխաղաց ու գնաց Աֆղանից գավառի Ղանդահարի բերդը: Երեք ամիս պաշարելուց հետո տիրեց նրան, ավերեց բերդը և նրա տեղում ցանեց գարի ու կորեկ: Գերեց նրանց բոլոր մանկամարդ աղջիկներին և հրամայեց ավարն ու գերիներին տանել Սպահան քաղաք»¹⁵⁴:

Ստեփաննոս Երեցը գումեղ կերպով պատմում է նաև Նաղիիրի Հնդկաստան կատարած կողոպտչական արշավանքի մասին¹⁵⁵:

1736 թ. հունվարին Մուղանի դաշտավայրում Նաղիիրը (Թահմասպ դուլի-խանը) գումարեց մեծ դուռույթայ, որին ի դեպ մասնակցում էր նաև Աբրահամ Կրետացի հայոց կաթողիկոսը: Գարնանամուտին պարսից ավանդական ամանորին (նովրուզ) համընդհանուր վախի մթնոլորտում Նաղիիրը հռչակվեց Իրանի շահ՝ Նաղիր շահ Աֆշար գահակալական անունով: Այսպիսով, պատմության թատերաբեմից հեռացած Մեֆյան դինաստիային փոխարինելու եկավ Աֆշարների արքայատոհմը:

Գահ բարձրանալուց մի քանի օր անց նոր թագակիր արքան հասկացրեց իր շրջապատի մարդկանց, որ մտադիր չէ իշխանությունը կլիսել որևէ մեկի հետ: Ուստի նա հրամայեց խեղդամահ անել գահինկեց արված Թահմազին, ինչպես նաև նրա մանկահասակ որդուն: Մեֆյան գահի այդ վերջին շառավիղների մասին Ստեփաննոս Երեցը գրում է. «Խորամանկ և օճաբարո Նաղիիրը տեսավ, որ օր օրի Թահմազ խանը գինարբուքներով ու խրախճանքներով էր տարվում, հրա-

¹⁵⁴ Ստեփաննոս Երեց, էջ 179:

¹⁵⁵ Անդ, էջ 179:

մայեց իր գորքին՝ սպանել նրան: Նետով հարվածեցին Թահմազ խանին այնպես, որ մի կողմից մտավ, մյուսից դուրս եկավ»¹⁵⁶: Նա-
ղիի շահը հրամայում է նաև սրի քաշել շահական ընտանիքի բոլոր
մեծ ու փոքր շառավիղներին, դրանով իսկ հիմքից արմատախիլ անե-
լով Մեֆյան դինաստիան:

Ստեփաննոս Երեցը Նաղիիի մասին քե՛ մինչև նրա շահ հրչակվե-
լը և քե՛ գահը ստանձնելուց հետո՝ կտրուկ բացասաբար է արտա-
հայտվում, նրան անվանելով «օձաբարո», «դարանակալ օձ», «սա-
տանայի բնակարան», «խորամանկ և սատանայի անխափան կա-
մակատար», «ծարավի քրիստոնյաների արյան»¹⁵⁷: Ըստ պատմա-
գրի՝ այդ բռնակալի տիրապետության շրջանում ամենուրեք իշխում
էր բիրտ ուժի սարսափը և օրենքը փոխարինվել էր քմահաճ կամքով:
Դա է վկայում նաև ակնանատես ռուս ռեզիդենտ Բրատիշչևի հետևյալ
տողերը, որ «Պարսկատանում Նաղիիի կառավարման շրջանում
մարդիկ ոչ թե կյանք, այլ մահ էին երագում»:

Ստեփաննոս Երեցի «Պատմագրքից» որոշակի տեղեկություն-
ներ կարելի է քաղել նաև Նաղիիի շահ դառնալուց հետո նրա իրա-
գործած ներքին ու արտաքին քաղաքականության, Իրանում տեղի
ունեցող խմորումների մասին և այլն: Այդ տվյալներից արվող հե-
տևությունը կարող էր լինել այն, որ Նաղիի շահը, որն անկասկած
ռազմական տաղանդով օժտված և աչքի ընկնող կամային հատկու-
թյուն ունեցող անհատականություն էր, իր ողջ գործունեության նպա-
տակն էր դարձրել կենտրոնացված վարչական համակարգի ստեղ-
ծումը՝ երկաթյա կամքով երկիրը կառավարելու համար: Բանակի օգ-
նությամբ և վարչական միջոցառումներով նա աշխատում էր նաև
սանձել անիշխանական հակումներ ունեցող և ինքնագլխության
ձգտող ռազմաշունչ քոչվորական ցեղերին, որոնց թիվը Իրանում
XVIII դարում չափազանց մեծ էր: Նրա այդ քաղաքականությունը,
բնականաբար, առաջ էր բերելու ցեղերի ապստամբություններ ու
խռովություններ: Ստեփաննոս Երեցը, օրինակ, պատմում է, որ լոռ

¹⁵⁶ Ստեփաննոս Երեց, էջ 179:

¹⁵⁷ Անդ, էջ 166-167:

(լոր) ցեղի առաջնորդներից մեկը ապստամբում է Նադիրի դեմ և «իբրև հողմախառն հուր ընդ եղեգն ընթացեալ» ավարի ու կողոպուտի է մատնում Բուրվարի գավառի հայկական գյուղերը, անխնա կրակի մատնում նրանց խոտերի դեզերը, ցորենի և գարու ամբարները և առհասարակ այն ամենը, ինչը կարող էր պիտանի լինել գյուղացիների կենսապահովման համար: Ինչպես միշտ, թալանն ուղեկցվում էր նաև բռնություններով ու մարդոքսությամբ:

Ապստամբ խանը նույնիսկ համարձակվում է իր անունով դրամ հատել, որը բացահայտ անհնազանդության ցուցադրում էր: Պատմագիրը հայտնում է, որ շահը խոշոր բանակ է շարժում ըմբոստ խանի դեմ և արյան մեջ խեղդում նրա ապստամբությունը, իսկ իրեն՝ խանին, հրամայում է «անդամ-անդամ յոշոտել»: Նադիր շահը հրամայում է նաև ապստամբությանը մասնակից լռեցրին բռնի տանել Խորասան և «անդ զետեղեալ բնակեցուցին զնոսայ զատեալք և հեռացեալք միմիանց»: Շարունակելով իր խոսքը Նադիր շահի բռնակալական վարչակարգի մասին՝ Ստեփաննոս Երեցը ասում է. «Գրեթե ոչ մնաց ի ներքոյ տերութեան տրայ աւաքունս և մեծամեծս, որ ոչ Էսպան, և ոչ կուրացուց, և ոչ տութանեաց, զի բազումք ևս կային թակարդօք և անուրօք ի կալանս և ի բանդս մաշխեալ կային և բազումք մեծայտունք և ընչաւետքս մուրացիկս արար որոց կան նպատակ նոցայ»¹⁵⁸:

Պատմագիրն ավելացնում է, որ մարդիկ զգվել էին իրենց կյանքից, աշխարհից և նրանում եղած ամեն ինչից, տենչում էին մահ՝ տառապանքներից ազատվելու համար՝ «ցանկան մահու և ոչ հասանին...: Ջի այնքան ծայրածող ապականիչ էր սա, որ ի ներքոյ տերութեան իւրոյ ոչ մնաց ողջանդամ մեծամեծացն, որով վշտացեալք հոգով չափ և թախծեալ սրտիւ զմահ խնդրէին: Եւ ոչ որ տայր նոցա, բանգի այնպէս ձախտողաբեր և դառն էր ժամանակն այն, որոց ոչ էր գլուխ առանց ցաւոց և յոլովք վիշտք և նեղութիւնք ի բազում ուրէք յա-

¹⁵⁸ Ստեփաննոս Երեց, Պատմագիրք, էջ 45-46:

ռաջացան, մանաւանդ ի քաղաքն յԱսպահան, որ ոչ մեկան բաւ է առ ի ծրելն, և ոչ բերան բաւէ առ ի ճառել»¹⁵⁹:

Ստեփաննոս Երեցը սրտի անհուն կսկիծով և մորմոքով պատմում է, որ ընդամենը մի ձիու թամբի համար Նաղիի շահը հրամայում է խարույկի վրա այրել ջուղայեցի վաճառականներ Խաղարենց աղա Էմնիագին, Ջուղայի հայ կաթոլիկ համայնքի առաջնորդ Հարություն Շահրիմանյանին, երկու հրեաների, երկու պարսիկ և երկու հնդիկ վաճառականների, նրանց մեղադրելով, որ «ուշացրել էին» թամբի նվիրումը թագավորին: «Եւ հրամայեաց, – գրում է պատմագիրը, – բերել փայտ և այրել զնոսա: Եւ բերին փայտս և կուտեցին ի փողոց քաղաքին, նաթով և վշով այրեցին զնոսայ և աւար հարին զամենայն ինչս և զըստուացուածս նոցայ: Եւ յետ յաւոր ինչ չուեաց անդի բանակարն իւրով դէպի գաւառն Քրմանու և յախտահարեաց զնոսայ և ճորտտեալ կոտորեց զամենայն արու այր նոցա: Եւ հրամայեաց շինել աշտարակս գլխով մարդոց ի դաշտին Քրմանու»¹⁶⁰:

Ստեփաննոս Երեցը թանձր գույներով է ներկայացնում Նաղիի շահի անագորույն, դաժան ու մարդատյաց խառնվածքը, համարելով, որ մարդկային կյանքը նրա համար ոչ մի արժեք չուներ: Նրա ասելով ձայնակցելով Հոր երանելուն մարդիկ ասում էին «ինչո՞ւ չմեռա ես արգանդում, դուրս եկա այսպես և տեղնուտեղը չչքացա»¹⁶¹: Այսպիսի կենսամաշ կյանքով էր ապրում մեր խեղճ ազգը:

Պատմագիրը նշում է. «Յոյժ ընչասէր և ագահ» Նաղիի շահը հատկապես թիրախավորել էր Նոր Ջուղայի միջազգային առևտրով զբաղվող հայ վաճառական-խոջաներին, որոնց նա պարբերաբար «քամում» էր, հասցնելով «զմեծամեծ տառապանս, ստանալով ի նոցանէ զբազում գումարս»: Հարություն Տեր-Հովհաննեանցը գրում է, որ 1739 թ. մինչև 1747 թ. շահը Նոր Ջուղայի վրա դնում է ծանր հարկեր, պահանջելով «ամ ըստ ամէ անընդհատ ոչ պակաս քան զտասն հազար թուման մինչև 45.000 թումանս՝ զորս յամի միում միայն»¹⁶²:

¹⁵⁹ Ստեփաննոս Երեց, էջ 46:

¹⁶⁰ Անդ, էջ 45:

¹⁶¹ Անդ, էջ 180:

¹⁶² Զ. Տեր-Յովհաննեանց, նշվ. աշխ., 1, էջ 250:

Ուժից վեր հարկերի գանձումը իրականացվում էր բարբարոսական եղանակներով: «Ադետալի է արդարև մանրամասն նկարագրութիւն հարըստահարութեանցն,- գրում է Հարություն Տեր-Հովհանյանցը,- զոր հասուցանէին Ջուղայեցոց այնպիսի տուգանառու բռնաւորք, զի յետ ստանալոյ զիրաման թագաւորին ֆառաշ կոչեցեալ ծառայքն ղիւանի՝ իբրև գայլք սովեալք զժանիս սրեալ երագէին հասանել ի Ջուղայ և մինչ կոխէին ոտք նոցա զՋուղայ, ահ և երկիւղ սփռեալ տարածէր, կալնուին զիշխանս, արկանէին զնոսա ի գելարան և զբովանդակութիւն տագանացն պահանջէին ի նմանէ՝ զոր նախ ըմբռնէին ի ծուղակ իրեանց տանջանացն: Այլ բազումք առ ահի և երկիւղի դողեալ ի խորշս տանց թաքչէին, այլ ծառայքն արքունի զդրունս խորտակէին և այրէին և մտանէին տանէ ի տուն և զարսն զորս գտանէին՝ որպէս մահապարտս ընդ քարշ ածեալ տանէին ի հրապարակն, իսկ զոր ոչ գտանէին՝ զկանայս նոցա կալեալ խարան ի վերայ ըստեանց նոցա դնէին և խոշտանգէին զգաւակունս նոցայ, կամ զտեղի թաքստեան հօրն կամ՝ ստացումածոցն իրեանց ցուցանել: Իսկ զնոսա զոր արդէն ընդ բռամբ ածեալ էին՝ գանէին, հարուածէին, զեղէգն սրածայ ի ծայրս մատանց ձեռաց և ոտիցն ընդ եղնգունս մխէին, ծխով յարդի մերձ ի շնչասպառ լինել առնէին, զոտս ի գելարանս պնտէին և ազգի ազգի բռնաւորական կտտանօք ժողովէին զգումարն»¹⁶³:

«Ի պատճառս այնչափ ծանրաբեռն հարստահարութեանց,- շարունակում է Նոր Ջուղայի պատմության հեղինակը,- որք կարող լինէին խոյս տային, և որք ոչ՝ զօղեալ ի խորշս տան ոչ ելանէին արտաքս, վասն որոյ լռեցան ժամերգութիւնք, դադարեցան երթևեկք բարեկամաց, և որ առաւելապէս զոսկերս սարսեցուցանէ՝ մեռեալք մնացին ի տան, զի չկայր ոք որ համարձակէր մտանել տանէ ի տուն և զմեռեալսն ղիապատելով ի գերեզման իջուցանել»¹⁶⁴: Ուստի 1745 թ. Նոր Ջուղայի քաղաքարը բողոք է ներկայացնում Սպահանի քաղաքապետին, որ ի վիճակի չլինելով վճարել իրենց վրա դրված հարկը, ջուղայեցի «վարդապետք, քահանայք և ժողովրդականք»

¹⁶³ **Յ. Տեր-Յովհաննէաց**, նշվ. աշխ., 1, էջ 251:

¹⁶⁴ **Յ. Տեր-Յովհաննէանց**, 1, էջ 269:

փախստական են, ուստի մեռելները մնացել են անթաղ, քանի որ «չիք որ գնոսս պատանեսցէ և թաղեսցէ»¹⁶⁵: Խնդրարկում «աղաչանոք» թախանձում էր, որ հրաման տրվի առ այն, որ «հարկահանք մի նեղութիւնս տացեն քահանայից, զի քահանայքն ուր և իցեն՝ եկեսցեն արտաքս և թաղեսցեն զմեռեալսն»¹⁶⁶: Հավանաբար մտավախություն ունենալով, որ քաղաքում կսկսվի համաճարակ, իշխանությունը ընդառաջում է այդ խնդրանքին:

Իր երկում ներկայացնելով համատարած սարսափներով լի այդ մռայլ ու մութ ժամանակներում հայ «եղերական» ազգի վիճակը՝ Ստեփաննոս Երեցը այն գնահատում է մեկ բառով՝ «ողբալի»:

Նաղիի շահին ևս Սպահանում կարողացել էին համոզել, որ հայերը եղել են աֆղանների դաշնակիցը և իբր «հայերն են նրանց բերել Իրան»: Անկախ նրանից, թե բռնակալը հավատում էր դրան թե ոչ, այդ վարկածը լայնորեն օգտագործելով «քամում» էր հայ բնակչությանը:

Հայերի համար այդ արհավիրքին գումարվեց նորը: Լուրիստանի ռազմաշունչ ցեղերը ապստամբելով Նաղիիի դեմ՝ սկսեցին ասպատակել հայկական գյուղերը, կողոպտել ու կոտորել հայ բնակչությանը: «Իբրև հողմախառն հուր ընդ եղեգն ընթացեալ,- պատմում է Ստեփաննոս Երեցը,- Մեհդվար և Սալաք ցեղերի զինված ղոլամները թափվում էին Բուրվարի գավառի հայկական Չամըխրս, Գուլբնհար, Անավշ, Դեհնով, Փարիմշան, Ջանխոշ, Խմստուն, Չարբաղ, Բուրք, Շավրավա, Խոսրովաբաղ, Ավբարիք գյուղերի վրա, ամխնա կրակի մատնում նրանց խոտերի դեզերը, ցորենի ու գարու ամբարները և առհասարակ այն ամենը, ինչ կարող էր պիտանի լինել գյուղական ընտանիքի համար: Ինչպես միշտ թալանն ուղեկցվում էր մարդորսությամբ ու կոտորածներով...: «Ավարառուները,- շարունակում է պատմագիրը,- գնացին Մալիգար գյուղը, որի բնակիչները ազգու-

¹⁶⁵ Ստեփաննոս Երեց, էջ 248-269:

¹⁶⁶ Անդ, էջ 269-270:

թյամբ տաճիկ էին և բոլորին միահամուռ ձևով սրի քաշելով կոտորեցին և վերադարձան իրենց տեղը»¹⁶⁷:

Բնակչության տոտալ կոդաբուտի անխուսափելի հետևանքն էր դառնում համատարած սովը: «Բազումք սովամահ լեալ մեռնէին»¹⁶⁸:

Այդ բոլորին ավելանում էր նաև բռնի հավատափոխության պարտադրանքը:

Ներկայացնելով Նաղիր շահի անկշտում հարստանալու տենչը, Ստեփաննոս Երեցը գրում է, որ նա Քերմանի գավառում ժողովեց անթիվ ու անհամար ոսկյա և արծաթյա գանձեր, հրամայեց ձուլել ոսկին և արծաթը և դրանք տեղափոխել Քալաթի բերդը¹⁶⁹, որտեղ գտնվում էր բռնակալի գանձարանը: «Ամբողջ օրը,- նշում է պատմագիրը,- մրջյունի քարավանների նման կրում էին բեռնակիրները ձուլածոն և չէին կարողանում հաշվել այնտեղ ժողոված գանձերի քանակը»¹⁷⁰:

Ստեփաննոս Երեցը ուշագրավ տեղեկություն է հաղորդում այն մասին, որ Նաղիր շահը մշտապես երկյուղներ է ունեցել, որ Սեֆյան արքայատոհմի շառավիղները վաղ թե ուշ կարող են իրեն մեղադրանք ներկայացնել Սեֆյան դինաստիան տապալելու և պետական հեղաշրջման միջոցով իշխանությունը հափշտակելու համար: Ուստի նա որոշում է համաձայնության գալ Իրանում գտնվող աֆղանական զորամիավորումների հետ և «բնաջնջել իր բանակում գտնվող ղզլբաշներին»¹⁷¹:

Առհասարակ Նաղիր շահի ներքին քաղաքականության գլխավոր գիծը զանգվածային ահաբեկչությունն էր գործնականում բնակչության բոլոր խավերի, ներառյալ նաև ավատական ազնվականության նկատմամբ: Դա առաջ էր բերում քաղաքացիների, գյուղացիների և քոչվորների մշտական հուզումներ ինչպես բուն Իրանում, այնպես էլ նվաճված երկրներում: Որպես կանոն ապստամբների

¹⁶⁷ Ստեփաննոս Երեց, էջ 182:

¹⁶⁸ Անդ, էջ 182:

¹⁶⁹ Անդ, էջ 180:

¹⁷⁰ Անդ, էջ 180:

¹⁷¹ Անդ, էջ 180:

հետ Նաղիրի հաշվեհարդարները լինում էին անողոք ու դաժան: Մարդիկ մահապատժի վախից խոստովանում էին իրենց չգործած հանցանքները և գրկվում քիթ ու ականջից և աչքերից: Նաղիր շահի դաժան հետապնդումների գոհ էին դառնում ոչ միայն ժողովրդական զանգվածները, այլև ավատատեր խաները, շիա հոգևորականությունը և այլք, որոնք ավելի ու ավելի էին դրսևորում իրենց դժգոհությունը նրա ահաբեկչական վարչակարգի նկատմամբ: Այս ամենը հանգեցնում է նրան, 1747 թ. հունիսի 24-ին Խաբուշանի մոտ (Խորասան) գտնվող իր ռազմական ճամբարում Նաղիր շահը սպանվեց իր համհարզ սպաների և պահակազորի խաների կողմից կազմակերպված դավադրության հետևանքով: Նրա մարմինը կտոր-կտոր արեցին և ուղարկեցին երկրի տարբեր մասերը «որպես գազանների կերակուր»: Գլուխը անջատեցին մարմնից և ցցելով նիզակի ծայրին, բոլորին ի ցույց դրեցին: Ստեփաննոս Երեցը գրում է. «Այսպես բարձաւ և սատակեցաւ չարն ի միջոյ»¹⁷²: Ըստ պատմագրի՝ երբ Նաղիր շահը որոշում է գլխովին սրի քաշել ղզլբաշ ազնվականությանը, «թագավորի այս մտադրության մասին լսեց նրա կինը, որ ղզլբաշ Մամադալի խանի քույրն էր, և ծածուկ հայտնեց իր եղբորը. «Առավոտյան լուսանալուն պես այս տերության ներքո չի մնա ոչ մի կարմրագլուխ: Եթե կամենում եք փրկել ձեր կյանքը, դրա մասին հոգացե՛ք, որովհետև մա արդեն որոշել է ձեզ համար, ձեր օգուտը դուք իմացեք»¹⁷³:

Նաղիր շահի մահվանը հաջորդեց մի կատարյալ քաոս: Երկրում վերստին ծայր առան երկպառակություններն ու միջավատական կատաղի կռիվները: Այդ խառնակ ժամանակների անխուսափելի ուղեկիցն էր դառնում բնակչության սրածությունը, խռովությունները, սովը և այլ աղետներ: Նաղիր շահի պետությունը գահավեժ արագությամբ սկսեց քայքայվել: Այդ պետության տարածքային ամբողջականությանն առաջին լուրջ հարվածը հասցրին դարձյալ աֆղանները: Նաղիրի մոտ ծառայության մեջ գտնվող աֆղանները Ահմեդ խան Աբդալիի գլխավորությամբ, հենվելով արդալի կամ դուրրանի

¹⁷² Ստեփաննոս Երեց, էջ 47:

¹⁷³ Անդ, էջ 180:

ցեղի վրա միավորեցին ներհակ շահեր ունեցող և միմյանց հետ արյունախանձ կռիվների մեջ գտնվող մի շարք այլ աֆղանական ցեղերի ու նրանցից ստեղծեցին մարտունակ բանակ, որը սկսեց ռազմակալման ենթարկել Հերաթը, Սիսթանը, Փենջաբը, Քաշմիրը և այլն: 1747 թ. հուլիսի 6-ին Նադիր շահի դեմ դավադրություն կազմակերպած Խորասանի ղզլբաշական ցեղերի խաները Մեշհեդում շահ հռչակեցին նրա եղբորորդի Ալի-Ղուլի միրզային, որն ընդունեց Ադիլ շահ («արդարամիտ») անունը: Սակայն պարզվեց, որ «արդարամիտ»¹⁷⁴ շահը իր դաժանությամբ չի զիջում Նադիրին: Նա իր առաջին գործը համարեց սրի քաշել Խորասանում գտնվող Նադիրի մեծ գերդաստանի արական սեռի բոլոր շառավիղներին: Ադիլ շահը հրամայեց պատռել նաև հանգուցյալ շահի բոլոր կանանց, ինչպես նաև նրա որդիների կանանց որովայնները, որպեսզի նրանք չծնեն ժառանգորդներ, որոնք երբևիցե կարող էին հավակնել իշխանության:

Ստեփաննոս Երեցը պատմում է, որ շուտով Ադիլ շահի դեմ սկսվեցին ապստամբություններ ու խռովություններ: Նախ իրենց անհնազանդությունը հայտնեցին Խորասան նահանգի ռազմաշունչ քրդերը: Ադիլ շահի իշխանությունը հրաժարվեցին ճանաչել նաև բուն Իրանի և Անդրկովկասի բազմաթիվ մեծ ու փոքր կառավարիչներ: Շահի դեմ ապստամբեց Թավրիզի բնակչությունը: Ապստամբների դեմ շահն ուղարկեց ոմն Ամիր Ասլան խանի, որը հաղթելով սրի քաշեց մեծ թվով թավրիզցիների, սակայն չբավարարվելով իրեն շնորհված Ատրպատականի բեկլարբեկի պաշտոնով՝ Ասլան խանը այս անգամ իր գեներն ուղղեց շահի դեմ և պարտություն կրելով փախուստի դիմեց: Այնուհետև շահը ջախջախեց Մազանդարան նահանգի տիրակալ Ֆաթի Ալի խան Ղաջարին: Ստեփաննոս Երեցը գրում է, որ շահը Խորասանից կանչեց աֆղանական զորքը և այն դնելով իր եղբայր Իբրահիմ միրզայի տրամադրության տակ ուղարկեց Պարսկական Իրաք (Իրաք-ե աջամ) որպես բեկլարբեկ: Սակայն 1748 թ. Իբրահիմ միրզան ապստամբում է եղբոր դեմ: Վերջինս, ըստ պատ-

¹⁷⁴ Ստեփաննոս Երեց, էջ 184:

մագրի, «չգործեց ըստ սահմանված կարգի, այլ իր կանոններով էր առաջնորդվում, ինչպես վարվում են թագավորները»¹⁷⁵:

Աղիլ շահը ապստամբ եղբոր նստավայր՝ Սպահան է ուղարկում Ջոհրաթ խան անունով մահմեդականացած մի վրացու՝ նրան հրամայելով սպանել Իբրահիմ միրզային: Այդ ծառայության դիմաց շահը խոստացել էր Ջոհրաթ խանին Պարսկական Իրաքի բեկլարբեկի պաշտոնը: «Հրամանն առնելով Ջոհրաթ խանն իր գործով եկավ Սպահան,– գրում է Ստեփաննոս Երեցը,– և սպասում էր հարմար ժամի, որ սպանի Իբրահիմ միրզային: Անցավ տասնհինգ օր, բայց նա չգտավ պատշաճ պահ, որ սպանի նրան: Եվ մինչ դեգերելով զննում էր Ջոհրաթ խանը, լուր տվեցին Իբրահիմ միրզային, «Թե Ջոհրաթ խանը արքայի հրամանով եկել է, որ սպանի քեզ...: Մինչ Ջոհրաթ խանը բաղնիքում լողանում էր,– շարունակում է պատմագիրը,– Իբրահիմ միրզան հանկարծակի հարձակվեց և այնտեղ սպանեց նրան»¹⁷⁶:

Այնուհետև ապստամբը մեծ գորաշարժ է անում եղբոր դեմ: Երկու եղբայրների միջև գլխավոր ճակատամարտը տեղի է ունենում Սուլթանիեի և Ջենջանի միջև ընկած Սաման-արխում: Ճակատամատույն Աղիլ շահը պարտություն է կրում: Ստեփաննոս Երեցը նշում է. «Հաղթելով նրան՝ Իբրահիմ միրզան կալանավորեց, կուրացրեց և մի քանի օր հետո սպանեց նրան»¹⁷⁷:

Սակայն շուտով Իբրահիմ միրզայի աֆղանական գործը ապստամբում է իր դեմ, որի հետևանքով նա սպանվում է¹⁷⁸:

Ստեփաննոս Երեցը մեկ առ մեկ նկարագրում է մեկը մյուսին փոխարինող կարճաժամկետ տիրող բռնավորների չարագործությունները և հարստահարությունները, հատկապես գունդեղ կերպով ներկայացնելով իրանահայության ողբալի վիճակը:

Նշված ժամանակաշրջանի պատկերը ներկայացնում է նաև Հարություն Տեր-Հովհանյանը: Նա գրում է. «Ձայնու ժամանակա

¹⁷⁵ Ստեփաննոս Երեց, էջ 184:

¹⁷⁶ Ստեփաննոս Երեց, էջ 184-185:

¹⁷⁷ Անդ, էջ 185:

¹⁷⁸ Անդ, էջ 185:

քազաւորութիւնն Պարսից եղեալ էր որպէս առագաստ ուժգին մըրկէ ծուստեալ, և որպէս նաւ անդեկաւար տարութերեալ ի կոհակաց. զի մարգպանք իւրաքանչիւր քաղաքաց կրել ի գլուխ զթագն արքայական բաղձային. վասն որոյ իւրաքանչիւր ոք զօրաժողով լինէր և անդադար էր գոռմունք պատերազմաց ի սահմանս պարսից»¹⁷⁹:

Իշխանութեան համար բոլորը կռվում էին բոլորի դէմ: Սակայն հիմնական պայքարը ծավալվել էր երեք հզոր խմբավորումների միջև՝ Քերիմ խան Չենդի, Ազատ խան Գիլգայիի (աֆղան) և Մուհամմադ Հասան խան Ղաջարի միջև, որոնք իրենց հսկողությունն էին սահմանել Իրանի մեծ մասի վրա: Միջավատական այդ արյունախսանձ կռիվների ժամանակ հաջողությունն ուղեկցում էր մերթ մեկին, մերթ մյուսին: Այդ պայքարից հաղթանակով դուրս եկավ Քերիմ խան Չենդը, որին հաջողվեց 1760-1763 թթ. ընթացքում իրեն ենթարկել համարյա ողջ Իրանը, բացառությամբ Խորասանի: Նա մտադիր էր նաև անցնել Արաքսը և շարժվել դեպի Անդրկովկաս, սակայն ստեղծված բարդ իրադրության պատճառով որոշեց միառժամանակ հետաձգել իր այդ ծրագրի իրագործումը: Նրան հաջողվեց ոչ միայն Խազիստանը, այլ նաև Իրանի ողջ հարավը մտցնել իր ընդարձակ պետության կազմի մեջ:

Չնականորեն Քերիմ խանն իրեն շահ չհայտարարեց: Նա համեստորեն իրեն կոչեց «վաքիլ» («վաքիլ-օդ-դոուլե»), որը նշանակում էր լիազորված անձ իբր գոյություն չունեցող Սեֆյան դինաստիայի կողմից:

Քերիմ խանի տիրապետությունը նշանավորվում էր նրանով, որ Բուխների դինաստիայի անկումից հետո (1055 թ.)՝ 700 տարի անց, նա Իրանի առաջին տիրակալն էր, որն ուներ ոչ թե թյուրքական, մոնղոլական կամ աֆղանական, այլ իրանական ծագում:

Վաքիլի կառավարման տարիներին նրա պետության մեջ տիրեց հարաբերական հանգստություն: Սակայն այդ հանգստությունը մի խաղաղ դադար էր փոթորկից առաջ: Ֆրանսիացի Պիկոյի դիպուկ

¹⁷⁹ **Յ. Տէր-Յովհաննէանց**, նշվ. աշխ., հ. 1, էջ 282-283:

արտահայտությամբ այդ հանգստությունը ավելի շատ նման էր մահվան անդորրին:

Ալիմարդան անունով ահարկու բռնակալներից մեկի և Քերիմ խան Ջենդի միջև հաստատվում է կարճատև բարեկամություն: Ալիմարդանը գրավում է Նոր Ջուղան՝ այնտեղ գործելով բազում չարիքներ: Նա իր դաշնակից Քերիմ խանին է նվիրում Իրանի վաճառաշահ այդ կենտրոնը «իբրև պարզև թանկագին ի տրիտուր իւրոյ երախտեացն»: Սակայն շուտով նրանց «բարեկամությունը» փոխվում է անգիշում թշնամության: Քերիմ խանը որոշում է ավարի մատնել Ջուղան՝ քանի այն չի կորցրել: Սակայն Ստեփաննոս Երեցը միամիտ անկեղծությամբ պատմում է, որ իբր գիշերը երազ տեսնելով, Քերիմ խանը սոսկացել է իր այդ մտադրությունից և հաջորդ օրը նրա արտում ծագել է սեր և գութ հանդեպ ջուղայեցիները և այցելելով նրանց, Ջուղայում նշանակել է պահապաններ, պատվիրելով այն խնամքով պաշտպանել թշնամիներից¹⁸⁰:

Ամենայն հավանականությամբ ոչ թե երազն էր բեկում մտցրել գիշատիչ բնագղներով առաջնորդվող լեռնական այդ առաջնորդի վերաբերմունքի մեջ Ջուղայի հանդեպ, այլ գուցե ինչ որ մեկի հուշումով հասկացել էր, որ բազմիցս կողոպտված այդ հայաքաղաքը հերթական անգամ կողոպտելու դեպքում առանձնապես մեծ հասույթ չէր կարող բերել իր գանձարանին, մինչդեռ եթե հնարավորություն տրվեր միջազգային և ներքին առևտրով զբաղվող խոջաներին արդյունավետ կերպով շարունակելու իրենց առևտրական գործունեությունը, իր սպասելիք օգուտները կարող էին ավելի մեծ լինել:

Շուտով Ջուղայի շուրջը նախկին դաշնակիցների միջև ծագում է սուր վեճ, որը վեր է ածվում պատերազմի: Ստեփաննոս Երեցը պատմում է, որ Ալիմարդան խանը կողոպուտի և ավարի է ենթարկում Նոր Ջուղան և այնտեղ գործում է բազմաթիվ չարիքներ: Աբիբուրան կոչված դաշտում կողմերի միջև տեղի է ունենում արյունոտ ճակատա-

¹⁸⁰ Ստեփաննոս Երեց, էջ 187:

մարտ, որն ավարտվում է Ալիմարդան խանի պարտությամբ և փախուստով¹⁸¹:

Ստեփաննոս Երեցը իր երկում պատմում է Իրանի հարավային շրջաններում շահ Աբբաս Ա-ի կողմից Իրան գաղթեցված վրացի բնակչության կողմից Քերիմ խան Ջենդի վարչակարգի դեմ բարձրացված ապստամբության մասին, որը որքան մեզ հայտնի է, այդ իրադարձության վերաբերյալ տեղեկությունը բացակայում է այլ աղբյուրներում: Ըստ նրա՝ Ախորի գյուղի վրացիները կենտրոնացնում են լեռներում, որպեսզի հարձակումներ գործեն Քերիմ խանի զորքերի վրա: Ապստամբներին են միանում նաև շրջակա գյուղերի հայ գյուղացիները և շարժումը վեր է ածվում հայ-վրացական ապստամբության: Ստեփաննոս Երեցը պատմում է. «Այնտեղ էին (նկատի ունի լեռներում – Ջ. Բ.) նաև շատ քրիստոնյաներ (հայեր – Վ. Բ.) Սանգի-բարան, Խունդ, Շահբուլաղ, Սիլակերտ և Շուրիշկան գյուղերից»¹⁸²:

Սակայն հայ-վրացական այդ ընդվզումը ավարտվում է պարտությամբ: «Լսելով այդ ապստամբության մասին,- գրում է պատմագիրը,- Քերիմ խանը հրամայեց իր զորքերին շրջապատել լեռները և վրացիներին ու հայերին «մարդախողխող սրով սպանել...: «Լեռան ստորոտից մինչև գագաթը բոլորը խոտհարների նման կոտորվելով վայր թափվեցին, և լեռան ստորոտը ներկվեց վրացիների և հայերի արյամբ՝ ինչպես որդան կարմիրով: Այնքան սաստիկ էր հրամանն արքայի, որ անգամ ստնդյա մանուկներին էին խլում մայրերի գրկից և լեռն ի վար ձգում: Շատ կանայք, աղջիկներ ու տղաներ, տեսնելով, որ ընկնելու են զորքի ձեռքը և մատնվելու են գերության, գերադասեցին մահը, քան կարճաժամյա կյանքը: Դրա համար ծածկում էին իրենց երեսները գլխաշորով կամ ձորձով և լեռան անբավ բարձրություներից նետում էին իրենց ու մեռնում: Նրանցից շատերին գերեցին, իսկ նրանց ավագին՝ Օրուճղուլի բեկին, բռնեցին, կապեցին բնդանոթի բերանին ու հրդեհելով օդ ցնդեցրին նրան: Նրանց ունեցվածքը

¹⁸¹ Անդ, էջ 187:

¹⁸² Ստեփաննոս Երեց, էջ 187:

քալանեցին, հափշտակեցին և բաժանեցին իրենց զինվորներին»¹⁸³:

Շարունակելով այդ դեպքերի վերաբերյալ պատմությունը, քահանա-պատմիչը գրում է, որ Ջաքարիա վարդապետը և Նոր Ջուղայի քալանթար Սարգիսը աղերսագիր են ներկայացնում Քերիմ խանին, հավանաբար նաև մեծ փրկագին վճարելով, ազատում են գերված վրացիներին ու հայերին: Աղերսագրում նրանք նաև թախանձագին խնդրում էին, որ Քերիմ խանը հրամայի, որ Փերիայի հայերին և մնացած գյուղերի քրիստոնյաներին տանեն Նոր Ջուղա, որպեսզի նրանք կարողանան գեթ պահել իրենց ֆիզիկական գոյությունը: Հրամանը չի ուշանում, սակայն Ջուղա տեղափոխված Փերիայի հայերը, որոնք գյուղական կյանքին ու հողագործությանը հարմարված մարդիկ էին, չեն ցանկանում բնակվել քաղաքատիպ ավանում և վերադառնում են իրենց նախկին բնակավայրը, առաջ բերելով Քերիմ խանի սարսափելի զայրույթը: Պատմագիրը գրում է. «Այս հրամանի համաձայն մեր գյուղերը ամռան եղանակին գաղթեցին և բշեցին Սպահան քաղաք: Ճանապարհին շատերը մեռան տոթից, իսկ մնացածները աշնանը դարձան իրենց տեղերը: Քերիմ խանը, երբ լսեց ժողովրդի դարձի մասին, հրամայեց Թորաբ խանին գնալ Փերիայի գավառը՝ ժողովրդին սրի քաշելու, քանի որ իրեն չլսեցին ու դարձան»¹⁸⁴:

Թորաբ խանը սկսում է իր անլուր չարագործությունները: «Թորաբ խանը,- արձանագրում է պատմագիրը,- շատ չարիքներ գործեց. նախ՝ արքունական հարկը կրկնակի էր վերցնում, երկրորդ՝ գեղեցիկ կույսեր էր պահանջում, երրորդ՝ ոսկյա և արծաթյա զարդեր էր ուզում, չորրորդ՝ նրանց տղամարդկանց հավաքում ու թլպատում էր: Այսպես բոլոր գյուղերը, ուր հասնում էր նրա գործը, նրանց կամքին հակառակ թլպատում էին և շատ չարիքներ գործում: Ոչ մի տեղից չկար նրանց օգնություն, և ժողովուրդը, սուգ բարձրացնելով, ողբում էր իր կենսամաշ կյանքը... Շատ գյուղեր և եկեղեցիներ հրդեհելով

¹⁸³ Անդ, էջ 187-188:

¹⁸⁴ Անդ, էջ 188:

այրեցին, իսկ նրանց բնակիչները ցիրուցան եղան: Այնպես ավերվեց և քանդվեց մեր երկիրը»¹⁸⁵:

Թորաբ խանի գորքերը նույնպիսի չարիքներ են գործում մաս Բուրվարի գավառում: Պատմագիրը նշում է. «Ոչ մեկանն է բավական գրելու և ոչ բերանը՝ ճառելու այս երկու գավառների ավերածությունների մասին, որ արեց բելիարի արքանյակ և անխաթար կամակատար Թորաբ խանը»¹⁸⁶:

Թորաբ խանի պակասը լրացնում է Ջաֆար Ղուլի խան բռնավորը, որի հրամանով սաստիկ բրածեծի են ենթարկում Նոր Ջուղայի թեմակալ առաջնորդ Սկրտիչ վարդապետին, որպեսզի մա ասի ջուղայեցիների ունեցվածքի և եկեղեցիների սպասքի տեղը:

Շուտով Ալիմարդան խանի և աֆղան Ազատ խանի միջև ստեղծվում է դաշինք ընդդեմ Քերիմ խանի: Կողմերի միջև Փերի-Քամազան կոչված վայրում տեղի է ունենում արյունոտ ճակատամարտ, որի ընթացքում Քերիմ խանը պարտություն է կրում: «Թողնելով իր տունն ու մորը,– գրում է Ստեփաննոս Երեցը,– մա մեծ տազնապով և մազապուրծ փրկվելով նրանց սրից, աճապարեց Շիրազ»¹⁸⁷:

Ստեփաննոս Երեցը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում մաս վրաց Իրակլի թագավորի և աֆղանների առաջնորդ Ազատ խանի միջև առճակատման և ռազմական բախումների վերաբերյալ: Մասնավորապես մա նկարագրում է նրանց զինված ընդհարումներից մեկի ժամանակ վրացիների տարած հաղթանակը: «Այսպես եղավ նրանց հաղթությունը,– գրում է պատմագիրը,– որտեղ շատերին կոտորեցին, մյուսներին փախցրին, առան նրանց ունեցվածքը և վերադարձան՝ տանելով ավարն իրենց գավառը՝ Վրաց տուն»¹⁸⁸:

1779 թ. Քերիմ խան Ձենդը վախճանվեց: Նա երեք օր մնաց անթաղ: Հանգուցյալի դիակը դեռ հողին չհանձնած՝ նրա հինգ որդիների, ինչպես մաս իշխանության մարմաջով տարված ազգականների ու զորահրամանատարների միջև սկսվում է իշխանության համար

¹⁸⁵ Անդ, էջ 188:

¹⁸⁶ Անդ, էջ 188:

¹⁸⁷ **Ստեփաննոս Երեց**, էջ 189:

¹⁸⁸ Անդ, էջ 190:

անգիջում քաղաքական պատերազմ: Իշխանության հավակնորդները անողորմ դաժանությամբ ոչնչացնում էին միմյանց: Անմիջապես գլուխ են բարձրացնում մահ մանր բռնավորները, որոնք ավելի ազահ էին և ավելի դաժան: Իրենց անկանխատեսելի և կարճատև տիրապետությունից առավելագույնը քամելու միտումով, նրանք ոչ միայն անխնա ավարի էին մատնում այն վայրերը, որտեղից դեռ ինչ որ բան կարելի էր վերցնել, այլև անձնատուր էին լինում սանձարձակ գործողությունների: Լայն չափեր ընդունեց քրիստոնյաներից «աղջիկ քաշելու» ավանդույթը, որն ավելի ստորացուցիչ ու պժգալի էր, քան ցանկացած հարստահարություն: Գեղեցիկ աղջիկներ հայտնաբերելու պատրվակի տակ ներքինիները մտնում էին տնետուն: Սա ևս հարստացման մի անսպառ աղբյուր էր: Հաճախ աղջիկներին չէր փրկում նույնիսկ այն, որ ծնողները վաղ մանկության տարիներին նրանց հաշմում, այլանդակում, մարմնի վրա վերքեր էին առաջացնում իրենց սիրասուն զավակներին փրկելու համար: Նման դեպքերում պարզապես նրանց ազատելու կաշառքի չափը մեծ չէր լինում:

Ստեփաննոս Երեցը հանգամանորեն պատմում է Քերիմ խան Ջենդիի եղբայրների և որդիների միջև մղվող անգիջում պայքարի մասին: Նա գրում է. «Երկու կողմերից սկսեցին պատերազմել, որպեսզի սպանվի մի կողմը, իսկ մյուսը տիրի թագավորությանը»¹⁸⁹: Այդ պայքարն ուղեկցվում էր ահավոր դաժանություններով, «չխնայելով նույնիսկ կաթնակեր մանուկներին», «մեռելներին թողնելով անթաղ», «պղծելով գոհված հակառակորդի դիակները»¹⁹⁰: «Ձաքի խանը,– պատմում է Ստեփաննոս Երեցը,– հրամայել էր, որ գրաստների և ջորիների փալանները գցեն մեռածների վրա՝ որպես քամահրանքի ու նախատինքի նշան...: Սպանվածները այսպես գիշատվելով և գազանակուր դառնալով նեխել էին և գայրացրել ամբողջ քաղաքին, որովհետև յոթ օր անթաղ ընկած էին փողոցում...: Ապա սկսեցին կողոպտել նրանց (պարտվածների – Վ. Բ.) ունեցված-

¹⁸⁹ Ստեփաննոս Երեց, էջ 201:

¹⁹⁰ Անդ, էջ 201:

քը՝ մթերքը, ամբարները, գանձերը, զենքերը, ձիերի և ջորիների երամակները... Չկար թիվ ու հաշիվ նրանց ավարին»¹⁹¹:

Իշխանության համար մղվող պայքարից 1782 թ. հաղթող է դուրս գալիս Քերին խան Ջենդի եղբորորդի Ալի Մուրադ խանը, որը գրավելով Սպահանը՝ իրեն հռչակում է շահ (1782-1785):

Ստեփաննոս Երեցը ամենայն մանրամասնությամբ ցույց է տալիս, որ նրա իշխանության կարճատև երեք տարիները երկրին և ժողովրդին խաղաղություն չբերեցին: Ներդիմաստիական պայքարը ահավոր քեժությամբ շարունակվում էր: Պատմագիրը սրտի մորմոքով պատմում է, որ Ալի Մուրադ խանի կառավարման շրջանում անիշխանության և երկպառակությունների հորձանուտում հայտնված իրանահայությունը մատնվել էր նոր տառապանքների ու անորոշության՝ դառնալով պատեհապաշտ և ժամանակավոր ինքնակալների ազահության և ընչաքաղցության գոհը: Նա հաղորդում է, որ այդ աղետալի ժամանակաշրջանում առանձնապես ավերվեցին ու տուժեցին Ջուղան և Փերիայի ու Բուրվարի գավառները: Մշտապես խառնակ ժամանակների սպասող քոչվորական ցեղերը անմիջապես իջնում են ասպարեզ ավարառության իրենց կրքերին հագուրդ տալու համար: Կրկին մեջտեղ են գալիս Լորեստանի ռազմիկ ցեղերը: Ստեփաննոս Երեցը պատմում է, որ լորերի առաջնորդներից մեկը «Ժողովեաց գօրս բագումս և սկսաւ չարիս գործել և աւար հարկանել զմնացեալ գեղորայքն Բուրվարոյ և տանել կապուտն ի բանակն իւր: Եւ իբրև լուան գօրապետքն լօռից զայսպիսի աշխարհայկործան և սաստիկ լուրս, ելեալք իւրաքանչիւր գորաւար իւրով զնդան դիմեցին գաւառն Բուրվարոյ իբրև հողմախառն հուր ընդ եղեգն ընթացեալ, հապճեալ տաքնապաւ վաղվադակի ամենայն բնակիչքն Բուրվարոյ կորզեալք, իւրաքանչիւր բնակութեանցն արտասահման արարեալ ի բնակութեանցն, իբրև զջորիս բազմութեան հոտից և անդոց զառաջեալ արարեալ, բռնութեամբ վարեալ ածէին ի յովրակն իւրեաց»¹⁹²:

¹⁹¹ Անդ, էջ 201-202:

¹⁹² Ստեփաննոս Երեց, էջ 48:

Փոխադարձ արյունախանձ կռիվների ժամանակ բախտի նժարը թեքվում էր մերթ մեկի, մերթ մյուսի կողմը, սակայն անփոփոխ էր մնում իրանահայության վիճակը: Ստեփաննոս Երեցը պատմում է, որ ումն Ալի Նադի խան, անխնա կողոպուտի է մատնում Նոր Ջուղայի եկեղեցիները, միաժամանակ ջուղայեցիներից պահանջելով «կուսս գեղեցիկ»՝ սպառնալով, որ եթե իր պահանջը չկատարվի, ինքը հիմնահատակ կավերի Նոր Ջուղան: «Յորժամ այս տոսկալի հրամանս եղև ի պղծոյն,– գրում է Ստեփաննոս Երեցը,– եկին գործունեալքն չարին և ներքենեքն մորայ և ըմբռնեցին զառաջնորդն և կալան զղլոմս եղկելի և տառապալի քրիստոնէիցն: Եւ որք ունէին զաղջկունս չորից և հնկից ամաց, մոցանէ ևս առին կաշառս թողթ այնորիք, որք կատարեալ հասակաւ ունէին»¹⁹³: «Օ՛հ մեր ողորմելի ազգին,– բացականչում է Ստեփաննոս Երեցը,– օ՛հ, որքան աղքատացան կաշառքների պատճառով, օ՛հ, որքան ողբ ու կսկիծ կրեցին, ճիւղ մայրերի, կոծը հայրերի, ողբը եղբայրների, գոչումը քույրերի, հառաչանքը ծերերի, դողդոջելը պառավների և աղաղակը որդիների ու դուստրերի, ինչպես ջրի շառաշյուն և ամալի որոտ, երկինք էին ելնում»¹⁹⁴:

Ազատ խան աֆղանցին, որին հաջողվել էր ժամանակավորապես ձեռք գցել իշխանությունը, ծանր հարկ է դնում Նոր Ջուղայի վրա՝ սպառնալով, որ ժամկետին չմոծելու դեպքում, ավարի է մատնելու այն: «Ազատ խանը եկավ նստեց Սպահանի գահին և բազում չարիքներ գործեց: Կանչեց Ջուղայի տանուտեր Կոճիկենց Հարությունին և ասաց. «գնացեք բերեք ութ հազար թումանը, ապա թե ոչ՝ ավարի կառնեմ ձեր շեները»,– սպառնում է նա: Նրա հարկահանները,– վկայում է պատմագիրը,– «յետ ընդունելոյ զայսպիսի սաստիկ հրամանս ի պղծէն, ելեալք հարկահանացն դիմեցին ի վերայ ողորմելի և եղերական և անպատրաստ քրիստոնէիցն, իբրև հողմախառն հուր ընդ եղէք ընդացեալ, այնպէս լլկէին, գանէին, խարակտէին, հարկանէին, նեղէին, չարչարէին... Եւ կալեալ կապէին զայրս և զկա-

¹⁹³ Ստեփաննոս Երեց, էջ 77:

¹⁹⁴ Անդ, էջ 209:

նայս ի փողոցս և ի հրապարակս և խնդրէին գորամն և ոչ ուստք էր օգնութիւն նոցայ»¹⁹⁵:

Ազատ խան ավագակաբարո բռնակալը վերին աստիճանի դաժան վերաբերմունք է դրսևորել ոչ միայն Իրանի այլադավան բնակչության, այլև հենց մահմեդականների նկատմամբ: Քաղաքներ գրավելիս նա մասամբ կոտորում էր բնակչությանը, մասամբ քշում ստրկության: Եվրոպական միսիոներների վկայությամբ վաճառում էին տղամարդկանց, կանանց և երեխաներին, ինչպես եզների, ոչ-խարքների ու ձիերի:

Ազատ խանի անօրինություններին Փերիայի հայերը պատասխանում են ապստամբությամբ, հրաժարվելով վճարել իրենց վրա դրված հարկը: Ստիպված բռնակալը կրկին իր հայացքը դարձնում է դեպի Նոր Ջուղա: Ստեփաննոս Երեցը գրում է, որ իր մոտ կանչելով Ջուղայի տանուտերին՝ Ազատ խանը սպառնալից տոնով ասում է. «տուր արքունական հարկը»: Տանուտերը պատասխանում է, որ մեր «բոլոր տղամարդիկ տրորված ընկած են հարկահանների գանահարելուց» և ժողովուրդը ի վիճակի չէ կատարելու այդ պահանջը:

Հալածանքների և ուժից վեր հարկային լծի պատճառով Նոր Ջուղան «մատնեցաւ իսպառ տառապագին անշքության: Արք փախստեայ լեալ դեգերէին յօտար սահմանս, և թիւ բնակչաց Ջուղայոյ ըստ մեծի մասին բաղկանայր ի կանանց: Բազմաց տուն դատարկացեալ ի բնակչաց անկանէին ի ձեռս այլազգեաց... Աղքատութիւն՝ չքաւորութիւն և նուսստ վիճակ տիրեաց ի վերայ ամենեցուն», – արձանագրում է Ստեփաննոսը:

Տարիներ տևած արյունահեղ պատերազմների ու կռիվների ընթացքում Իրանի ավատական վերնախավի տարբեր խմբավորումները ոչնչացրին մեկը մյուսին՝ թյուրքալեզու դաջարների (կաջարների) համար ճանապարհ հարթելով դեպի իշխանություն և շահական գահը: Մինչ զենդերը պայքարում էին միմյանց դեմ, Իրանի հյուսիսում՝ Մազանդարանում ու Աստրաբադում, ամրապնդվում էր թյուրքալեզու դաջար ցեղը:

¹⁹⁵ Անդ, էջ 58:

XVIII դարի սկզբից դաջարները ներգրավվել էին քաղաքական պայքարի մեջ՝ փայփայելով իրենց իշխանությունը Իրանի վրա տարածելու փառասիրական ձգտումներ: Այդ պայքարում նրանց աջակցում էին նաև Իրանի հյուսիսի մի շարք թյուրքական ցեղեր:

1785 թ. զենդերի առաջնորդներից մեկի՝ Ջաֆար խանի նկատմամբ դաջարների առաջնորդ Աղա Մուհամմադ խանի (կամ ինչպես նրան անվանում էին Ախթա-խանի) տարած հաղթանակը ստիպեց Ատրպատականի, Քրդստանի և Պարսկական Իրաքի (Իրաք-ե աջ-մի) բազմաթիվ խաների անցնել դաջարների կողմը:

1791 թ. Աղա Մուհամմադի եղբորորդին՝ Բաբա խանը (Ֆաթի Ալի խան) ջախջախեց Քերմանում թաքնվող զենդերի վերջին տիրակալ Լոթֆի Ալի խանին: Ղաջարների և զենդերի միջև վերջին արյունահեղ բախումը տեղի ունեցավ Քերմանի մոտ 1794 թ.: Այդ քաղաքը հինգ ամիս շարունակ դիմադրում էր, սակայն ի վերջո գրոհով վերցվեց: 1794 թ. զենդերի դիմապատիվ դադարեց գոյություն ունենալուց: Այսպիսով հաղթանակներ տանելով իր բոլոր հակառակորդների նկատմամբ, Աղա Մուհամմադ խանին հաջողվեց իր գերիշխանությունը հաստատել համարյա Իրանի ողջ տարածքի վրա: 1785 թ. նա իր մայրաքաղաքը դարձրեց Թեհրանը: 1795 թ. դեպի Վրաստան ավերիչ արշավանք կազմակերպելուց հետո Աղա Մուհամմադ խանը պահել միանգամայն հարմար համարեց իրեն Իրանի շահ հռչակելու համար:

1796 թ. մայիսին Մուղանի տափաստանում գումարված դուռուլ-թայը նրան հռչակեց Իրանի շահ: Այսպիսով իրանական գահի վրա կրկին հաստատվեց թյուրքական դիմապատիվ, որը ցեղի անունով կոչվեց Ղաջարների արքայատոհմ:

Ստեփաննոս Երեցը պատմում է, որ մինչև իշխանության գալը դաջարները թեժ պայքարի մեջ էին մտել Քերիմ խան Ջենդի հետ: Այդ պայքարը գլխավորում էր Ղաջար ցեղի առաջնորդ Հասան խան Ղաջարը (Աղա Մուհամմադի հայրը – Վ. Բ.), որին մեր պատմագիրն անվանում է «աշխարհին ավերող և քրիստոնյաներին տանջող», «անողորմ և անիծյալ մարդադեմ գազան»: Գրավելով Սպահանը՝ նա ևս իր նախորդ կողոպտիչների նման ջուղայեցիներից պահանջում է խո-

շոր գումար: Վերջիններս պատասխանում են, որ Ազատ խանը մինչև վերջին թելը կողոպտել է իրենց և իրենք այլևս ոչինչ չունեն տալու: Ըստ Ստեփաննոս Երեցի բռնավորը պատասխանում է. «Ես գիտեմ, որ դուք ոչինչ չունեք, բայց ձեր վանքերում ու եկեղեցիներում կան բազմաթիվ ոսկյա և արծաթյա անոթներ: Առե՛ք դրանք և հարկի փոխարեն տվե՛ք ինձ»¹⁹⁶: Սկսվում է հայկական վանքերի, եկեղեցիների և այլ սրբատեղիների ահավոր թալանը: Պատմագիրը նշում է. «Որպես հուր հողմախաղ ընդ եղեգ ընդացեալ այնմ սարասի սկսան յապշտակել անօթք սրբութեան՝ զոսկի, զխաչ, զբուրվառ, ըզաջ, զքշոց, զաշտանակ, զտապանակ, զգարդ Ավետարանաց և ըզգեստս՝ նկարեալս ոսկոյ և արծաթոյ, և ականց պատուականաց: Ժողովէին և մատունք սրբոցն տային առ նոսայ և ըզգեստքն այրէին և առնէին զոսկի և արծաթ նոցայ և տանէին»¹⁹⁷: Այս ամենը լսելով, տեսնելով և գրի առնելով,- շարունակում է պատմագիրը,- սարսափահար տատանվում է մեր անձը, ճմլվում են մեր սրտերը, աղիքները գալարվում են մեր որովայնում, և մեր աչքերից արտասուքի վտակներ են թավվելով իջնում, այս մեծ թշվառության համար, որ եկել հասել է մեր սուրբ մայր եկեղեցուն»¹⁹⁸:

Բռնակալների կողմից բերված այդ աղետներին գումարվում են երաշտը, մորեխի կողմից բերքի ոչնչացումը, որի հետևանքով սկսվում է սաստիկ սով: Ստեփաննոս Երեցը նշում է. «Սովի պատճառով շատերը վաճառեցին իրենց ուստրերին ու դուստրերին, ոմանք միմյանց մորթում և ուտում էին, ոմանք էլ անսուրբ անասուններ ու գազաններ էին ուտում կամ բամբակի հունդեր... Մահացածներն այնքան շատ էին, որ չէին հասցնում թաղել, ուստի շատերն անթաղ էին մնում, դառնում գազանների կերակուր, ոմանց էլ հավաքելով որմերի անկյուններում փլեցնում էին պատը նրանց վրա»¹⁹⁹:

Անդրադառնալով սովի գործած ավերիչ հետևանքներին՝ պատմագիրը գրում է. «Եւ մնաց սովն մինչ ի ամիսս յոթն, և մեռան սովոյ

¹⁹⁶ Ստեփաննոս Երեց, էջ 194:

¹⁹⁷ Անդ, էջ 61:

¹⁹⁸ Անդ, էջ 194:

¹⁹⁹ Անդ, էջ 194-195:

հոգիք իբրև երկոյտասան հազար այրս և կանայս, ուստերս և դստերս ի քաղաքն յԱսպահան: Մեռան և ի Զուղայու հոգիք հինկ հարուր»²⁰⁰:

Ստեփաննոս Երեցը պատմում է, որ այդ նոր բռնավորի գորականները և գորապետները ձիրնթաց արշավելով հարձակվեցին Փերիայի վրա և «ինչպես հնոցի մրրիկ, շրջապատեցին հայոց և վրաց գյուղերը» և այնուհետև «աւար առին զամենայն անասուց նոցա ի փոքուէ մինչև ցըմեծամեծս, և գերեցին զամենայն ուստերս և զդստերս, ըզնու և զկին գեղեցիկ: Եւ եղև յաւուր այնմիկ կոծ սաստիկ և աղաղակ մեծ... Մայրքն լային գոստերս իւրեաց և հայրքն գորդիս իւրեաց, եղբայրք լային գեղբայրս իւրեաց և գբուրս, և այրքն լային զկինս իւրեանց, և գերեալքն լային զհայրս և զմայրս իւրեանց, զսիրելիս և զբարեկամս իւրեանց»²⁰¹:

«Ինչպես եռացած ջուր կամ արյունարբու գազան, – բացականչում է պատմագիրը, – դաջարների ազգը հարձակվեց մեզ վրա, տանջեցին մեզ և հափշտակեցին մեր որդիներին, ինչպես պատառոտող գայլեր՝ հարձակվեցին մեր անմեղ գառների վրա ու տարան»²⁰²: Պատմագիրն ասում է, որ «դեպքերն այնքան հապճեպ ու արագ եղան, որ շատերն իրենց ստնդյա մանուկներին թողնելով ճանապարհին փախան լեռները: Տկարները, հիվանդներն ու ծերերը չկարողացան գնալ, այլ մնացին գյուղերում և ճանապարհներին... Լեռներում եղողները չորս-հինգ օր ոչինչ չկերան, քաղցած ու ծարավ անցկացրին: Ովքեր կարողացան դիմացան, իսկ տկարներն ու մանուկները ծաղիկների պես թուլացել և թառամել էին»²⁰³:

Զորքերը քանդում ու ավերում էին հայերի տները, եկեղեցիները՝ շինանյութն օգտագործելով որպես բանակի համար վառելափայտ: Հրդեհի էին մատնում այն ամենը, ինչը մնացել էր գյուղերում: Հնձում էին արտերը, կողոպտում ամբարները: Ծերերին ու տկարներին, որ մնացել էին գյուղերում, բռնելով չարչարում էին և ասում, որ ցույց տան իրենց ունեցվածքի տեղը: Պատմագիրը նշում է. «Տղամարդ-

²⁰⁰ Անդ, էջ 61:

²⁰¹ Անդ, էջ 87:

²⁰² Անդ, էջ 220:

²⁰³ Անդ, էջ 220:

կանց և կանանց բրածեծ էին անում, չարչարում, լլկում, հրով այրում, վայտով ճմլում, իսկ սրանք էլ ուշաթափվելով ընկնում էին, ոմանք դիմանալով կենդանի էին մնում, ոմանք էլ մեռնում էին: Այսպես շատերին սպանեցին»²⁰⁴:

Ստեփաննոս Երեցը պատմում է, որ աղա Մուհամմադ խանի մանկլավիկներից մեկը՝ Քալբալի խան անունով, այն աստիճանի սանձարձակ ու լկտի էր պահում իրեն, որ իր գորքերով շրջապատում է հայոց գյուղերը, «որպես գարնան հեղեղ տապալում դրանք», իսկ ժողովրդին քշում Դուգանի կոչված բերդը՝ իր արարքը պատճառաբանելով նրանով, որ «Մուհամմադ խանը կամենում է գալ այս գավառը, դրա համար ժողովել ենք ձեզ, թե միգուցե նրա գորքը գերեվարի ձեզ»²⁰⁵:

Այս ամենի հետևանքները դառնում են աղետալի մաս այն պատճառով, որ հայերից շատերը իրենց գոյության գեթ փրկության համար դավանափոխ են լինում և ընդունում են իսլամը: Ստեփաննոս Երեցը, օրինակ, հաղորդում է, որ «Բուրվարի գավառի բոլոր հայերն ուրացան Քրիստոսին, բացի Փահրա գյուղից»²⁰⁶: Այս արհավիրքներին ավելանում է նաև մեկը: Թեհրանը դարձնելով իր պետության մայրաքաղաքը, որը գյուղատիպ, մոտ բնակչությամբ մի բնակավայր էր, Աղա Մուհամմադը հրամայում է Իրանի հարավային շրջանների հայ բնակչությանը բռնագաղթի ենթարկել դեպի իր մայրաքաղաքը: Պատմագիրը գրում է. «Եւ որժամ այս բօթալի հրամանս ել ի պլիծ ներքենի Մահմատ խանէն, ըսկսան տարաղէմ սուրգուն անել և քշել ըգտառապեալ զագգն հայոց»²⁰⁷:

Ստեփաննոս Երեցը դառնությամբ ասում է, որ մարդկային գազանությունները բավական չէին, բնությունը ևս գալիս էր ավելացնելու ժողովրդի տառապանքները: Երկրում, կրկին սկսվում է սարսափելի երաշտ, որին հետևում է կործանարար սովը: «Այս երաշտի և միմյանց դեմ կովող բռնավորների և աշխարհավերների պատճառ-

²⁰⁴ Անդ, էջ 222:

²⁰⁵ Անդ, էջ 230:

²⁰⁶ Անդ, էջ 230:

²⁰⁷ Անդ, էջ 98-99:

ռով, – պատմում է Ստեփաննոս Երեցը, – բազում վայրեր ավերվեցին, «մանավանդ մեր երկիրը՝ Սպահան քաղաքն ու նրա շրջակա գավառները»: Սովը սկսվում է 1788 թ. և սաստկանում հաջորդ՝ 1789 թ.՝ տարածվելով բոլոր գավառներում ու գյուղերում, քաղաքներում ու ավաններում:

Պատմագիրը «վշտացած սրտով, արտասովաթոր աչքերով և հառաչանքով» նկարագրում է այդ ահավոր սովի տեսարանները, շեշտելով, որ ինքը տեսել է սեփական աչքերով: Ըստ նրա սովն այն աստիճանի էր սաստկացել, որ «ոչ մնաց անասունս, որ ոչ կերան՝ գտորբն և զանտորբն, ոչ պահս պահեին և ոչ գարշելիս խտրեին, այլ որպէս գազանս յափշտակեին և գիշատեալ կլանեին: Ծերոցն և տկարացն ո՛չ ողորմեին և ո՛չ տալին նոցայ, գերեին և կողոպտեին զինչս նոցայ...»²⁰⁸:

«Երբ սովը մտավ մեր գավառները, – շարունակում է իր պատմությունը Ստեփաննոս Երեցը, – ովքեր չէին կարողանում դիմանալ, փախչում էին այլ վայրեր, որ ապրուստ գտնեն: Նրանց սպանում էին, իսկ նրանց որդիներին գերում: Ովքեր չէին հեռանում, սովամահ լինելով մեռնում էին...: Շատերը մոռացան իրենց սիրելիներին ու բարեկամներին, ամենքի սերն ու գութը միմյանց հանդեպ այնքան սպառվեց, որ ծնողները թողին իրենց զավակներին, իսկ որդիները մոռացան ծնողներին, տղամարդիկ թողեցին իրենց կանանց, իսկ կանայք չէին ճանաչում իրենց ամուսիններին, եղբայրները թողեցին քույրերին, իսկ քույրերը մոռացան եղբայրներին, սիրելիներն ու բարեկամները ուրացան միմյանց»²⁰⁹: Ստեփաննոս Երեցը նշում է, որ Սպահան քաղաքում այնքան շատ էին սովամահ եղածները, «որ տեսնողները պատմում էին, որ ինչպես աշնան ուժգին հողմից թափված ծառերի տերևները, այնպես էլ նրանք տապալվելով ընկնում էին փողոցներում, պողոտաներում, որմերի անկյուններում և ճանապարհներին՝ տրորված, գիշատված և գազանակուր»²¹⁰:

²⁰⁸ Ստեփաննոս Երեց, Պատմագիրք, էջ 120:

²⁰⁹ Անդ, էջ 252:

²¹⁰ Անդ, էջ 254:

Քիչ հավանական է թվում պատմագրի այն հաղորդումը, որ Նոր Ջուղայում ոչ մեկը չմեռավ: Ըստ նրա՝ Սուրբ Ամենավերկիչ վանքի առաջնորդ Հակոբ արքեպիսկոպոսը և ամբողջ հոգևոր դասը, որոնք «շատ քաղցրահայաց, ողորմած և գթած էին տնանկների, աղքատների, որբերի ու այրիների հանդեպ», ինչպես նաև «եկվորների, օտարների, պանդուխտների ու չքավորների» նկատմամբ, միաբանների հետ միասին խնդրում են «ունևորներին, հարուստներին և մեծատուններին կերակրելու աղքատներին և տնանկներին», եկվորներին, օտարներին ու պանդուխտներին, «քանի որ կրկնակի պատգամ էր սրբազան առաջնորդից ամենքի վրա, որ յուրաքանչյուր ոք հոգ տանի աղքատների կյանքի համար և չթողնի որ սովից մեռնի քրիստոնյաների համայնքն ու եկեղեցին»²¹¹:

Ստեփաննոս Երեցը պատմում է, որ մարդորսությունը, գերիներ ձեռք բերելով և ստրկավաճառանոցներում նրանց վաճառքի հանելու միջոցով եկամուտ ստանալու «արհեստը» այդ մութ և անապահով ժամանակներում դարձել էր բռնակալների ամենօրյա զբաղմունքը:

Ստեփաննոս Երեցը Աղա Մուհամմադի կառավարման շրջանի պատմությունը չի հասցնում մինչև այդ անագորրույն բռնակալի սպանությունը, երբ 1797 թ. մայիսին Ղարաբաղում՝ Շուշիի բերդի իր վրանում նա սպանվեց իր իսկ ծառաների կողմից:

²¹¹ Անդ, էջ 254-255:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՅՈՒՑԱԿ

1. Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Երևան, 1964:
2. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, մասն Ա, Գ, Գահիրե, 1941, 1955, 1961:
3. Աճառյան Հ., Հայոց պատմություն (հյուսված ընդհանուր պատմության հետ), Երևան, 2004:
4. Աճառյան Հ., Վավերագրեր հայ-պարսկական հարաբերությանց մասին, Երևան, 1927:
5. Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002:
6. Առաքելեան Հ., Պարսկաստանի հայերը, նրանց անցեալը, ներկան և ապագան, Վիեննա, 1911:
7. Ալիշան Դ., Հայապատում, Վենետիկ, Ս. Ղազար, 1901:
8. Առաքել Դարիժեցի, Գիրք պատմութեանց, Վաղարշապատ, 1896:
9. Աբրահամ Կաթողիկոսի Կրետացոյ Պատմագրութիւն անցիցն իւրոց և Նատր շահին պարսից, Վաղարշապատ, 1870:
10. Աբրահամ Երեսանցի, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թթ., Երևան, 1938:
11. Ավգուստինոս Բաջեցի, Ճանապարհորդութիւն յԵվրոպայ, գրչագիր ի Փարիզ («Նշխարք մատենագրութեան հայոց»), Ս. Պետերբուրգ, 1884:
12. Ալիշան Դ., Սիսական, Վենետիկ, 1893:
13. Ալիշան Դ., Այրարատ, Վենետիկ, 1890:
14. «Ալիք», 1949, թիվ 106 և 107:
15. Անասյան Հ., XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961:
16. Առաքելեան Հ., Ակնարկ Պարսկաստանի հայերի անցեալի վրայ, («Գեղունի», 1904, թիւ 1-10):

17. Ավդալբեկյան Թ., Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969:
18. Աճեմյան Հ., Պատմական Թավրիզի հին հայությունը, Դիվան Ատրպատականի հին հայոց պատմության, հ. I, Բեյրութ, 1980:
19. Ալիմեան Հ., Մովսես Գ. Տաթևացի կաթողիկոս, կյանքն եւ գործունեությունը, «Հանդես ամսօրեայ» հայագիտական ուսումնաթերթ, թիվ 11, 12, նոյեմբեր-դեկտեմբեր, Վիեննա:
20. Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005:
21. Բայբուրդյան Վ., Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը XVII դարում, Թեհրան, 1996:
22. Բայբուրդյան Վ., Նոր Ջուղա, Երևան, 2007:
23. Բայբուրդյան Վ., Նոր Ջուղայի հայկական գաղութը և կաթողիկ միսիոներների կազմակերպությունները (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1964, էջ 9):
24. Բայբուրդյան Ա., XVII դ. Արևելյան Հասաստանում կաթողիկ միսիոներների գործունեության պատմությունից, «Պատմաբանասիրական հանդես», թիվ 1 (124), Երևան, 1989:
25. Բայբուրդյան Ա., Կարմեյանների միաբանության միսիոներների գործունեությունն իրանահայության շրջանում (XVII դ.), «Լրաբեր» հասարակական գիտությունների, թիվ 11 (551), Երևան, 1988:
26. Գրիգոր Դարանաղցի (Կամախեցի), Ժամանակագրություն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցոյ, Երուսաղեմ, 1915:
27. Գալեմբարյան Գ., Հովակիմ Վ. Ջուղայեցի Արքեպիսկոպոս Էջմիածնի (1666-1720), «Հանդես ամսօրեայ», 1914:
28. Գորոյանց Ն. Հ., Պարսկաստանի հայերը, Թեհրան, 1968:
29. Գարեգին եպիսկոպոս, Իրանը և հայությունը, Թեհրան, 1971:
30. Դիւան Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի, մասն Ա., Էջմիածնի կաթողիկոսների կոնդակներ (1652-1705 թթ.), Անթիլիաս, 2003:

31. Դանեղյան Լ. Գ., Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1978:
32. «Եղիա Կարնեցու «Դիվանը», Նյութեր Մերձավոր Արևելքի և Անդկովկասի պատմության, առաջաբանը և ծանոթագրությունները՝ պրոֆ. Ա. Աբրահամյանի, Երևան, 1968:
33. Եղիգարյան Ա., Իրանի Չհարմիալ գավառը, Թեհրան, 1963:
34. Երեմյան Ա., Նոր Ջուղայի ԺԷ դարու որմնանկարչական հուշարձանը, Նյու Յորք, 1942:
35. Երեմյան Ա., Սպահանի Փերիա գավառը, Նոր Ջուղա, 1919:
36. Եսայի Հասան Ջալալեանց, Պատմութիւն կամ Յիշատակ ինչ ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից, Ա. տպագ. Շուշի, 1839, Բ. տպագ., Երուսաղեմ, 1868:
37. Ջուլալյան Մ., Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների XIII-XVIII դդ., Գիրք Ա, Քաղաքական պատմություն, Երևան, 1990:
38. Ջաքարիա Ագուլեցու Օրագրությունը, Երևան, 1938:
39. Ջաքարիա Քանաքեռցի, Ջաքարեայ Սարկաւազի Պատմագրութիւն, հտ. Ա-Գ, Վաղարշապատ, 1870:
40. Թաղիադեան Մ., Պատմութիւն Պարսից, հ. Ա, Կալկաթա, 1846:
41. Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցոյ, Երուսաղեմ, 1915:
42. Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանեցի («Կռունկ հայոց աշխարհի», 1803, թիվ Ա):
43. Լեո, Երկերի ժողովածու, Գիրք I, հ. III, Երևան, 1969, Երևան, 1966, հատ. 3, Երևան, 1969, հատ. 6, Երևան, 1987, հատ. 4, Երևան, 1984, հատ. 5, Երևան, 1986, հատ. 2, Երևան, 1967:
44. Լեո, Հայկական տպագրություն, հատ. Ա, Թիֆլիս, 1901:
45. Լեո, Խոջայական կապիտալ, Երևան, 1934:
46. Լևոնյան Գ., Հովհաննես վարդապետ Մրբուգ, «Էջմիածին», 1944, թիվ 1:
47. Խաչատուր Ջուղայեցի, Խաչատուր Աբեղայի Ջուղայեցոյ Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905:

48. Կարապետյան Մ. Մ., «Իմամ Ջաֆարի» օրենքը և արևելահայերը (17-18-րդ դդ.), Պատմաբանասիրական հանդես, 1988, թիվ 1:
49. Հակոբյան Վ., Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, Երևան, 1956:
50. ԺԷ դարի հիշատակարաններ, կազմ.՝ Վ. Հակոբյան և Ա. Հովհաննիսյան, հատ. Ա, (1601-1620), Երևան, 1974, հ. Բ (1621-1640 թթ.), Երևան, 1978, հ. Գ. (1641-1660 թթ.), Երևան, 1984:
51. Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք II, Երևան, 1959:
52. Հայոց նոր վկաները (1155-1843), աշխ. Յ. Մանանդեանի և Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903:
53. Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. I, Երևան, 1932:
54. Դուկասեան Վ., Ստեփաննոս կաթողիկոս Ջուղայեցի, «Հասկ» հայագիտական հանդես, Անթիլիաս, 1981-1982:
55. Ճանապարհորդություն յԵվրոպայ, գրչագիր ի Փարիզ («Նշխարք մատենագրության հայոց»), Ս. Պետերբուրգ, 1884:
56. Մարտոյան Թ., «Կարմեյանների տարեգրությունը» որպես Իրանի 17-18-րդ դարերի պատմագիտական աղբյուր, Երևան, 2011:
57. Մինասյան Լ., Պատմագիր Ստեփաննոս Երեց, սեղմ տողեր նրա կյանքի ու գրականության մասին, Թեհրան, 1956:
58. Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., կազմեց Վ. Ա. Հակոբյան, հ. 1-2, Երևան, 1951, 1956:
59. Մինասյան Լ., Գ., Իրանի հայկական եկեղեցիները (ընդհանուր ակնարկ), Նոր Ջուղա, 1983:
60. Մինասյան Լ. Գ., Դիվան Ն. Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի 1600-1900, Նոր Ջուղա, 1983:
61. Մինասյան Լ. Գ., Սպահանի հայոց թեմի առաջնորդները, Նոր Ջուղա, 1996:
62. Մինասյան Լ. Գ., Պատմություն Փերիայի հայերի, (1606-1956), Անթիլիաս, 1971:
63. Միրզոյան Հ. Դ., Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի, Երևան, 2001:

64. Միրզոյան Հ. Ղ., XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Երևան, 1983:
65. Միրզոյան Հ. Ղ., Սիմեոն Ջուղայեցի, Երևան, 1971:
66. Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 754:
67. Յովհաննէս Մրբուզ, Գիրք պատմութեան արարեալ ի Նորն Ջուղայու Սրբոյ Ամենափրկիչ գերահրաշ վանի միաբան Յովհաննէս ճգնագգեաց վարդապետին վիճաբանութիւն առ շահ Սլիման պարսից, Կալկաթա, 1797:
68. Յովհաննէս Ջուղայեցի, Գիրք համառոտ վասն իսկապէս ճշմարիտ հաւատոյ և դաւանութեան ուղղափառ կաթողիկէ ընդհանուր Հայաստանեաց եկեղեցոյ, Նոր Ջուղա, 1687:
69. Յովհաննէս Ջուղայեցի, Գիրք պատմութեան, Կալկաթա, 1797:
70. Յովհաննիսյան Աշ., Պետրոս դի Սարգիս Գիլանենց, Ս. Էջմիածին, 1916:
71. «Նշխարք մատենագրութեան հայոց», (ի լոյս էած Բ. Պ. Պատկանյան), Ս. Պետերբուրգ, 1884:
72. «Նավասարդ», Թեհրան, 1938, Ե գիրք:
73. Սարեան Ա., Պատմութիւն Չարմահալ գավառի, Թեհրան, 1980:
74. Չամչեանց Մ., Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն, հատ. Ա, Վենետիկ, 1784, հատ. Բ., Վենետիկ, 1785, հատ. Գ., Վենետիկ, 1786:
75. Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբո, գիրք որ կոչի յիշատակարան արձանացոյցին հայելի և պարունակող բնաւից որպիսւթյանց Սրբոյ Աթոռոյս և իւրոյ շրջակայից վանօրէիցն, համաժողովեցեալ և շարադրեցեալ ի Սիմեօն ցաւահար և վշտակոծ կաթողիկոսէ Երևանցոյ, Վաղարշապատ, 1873:
76. Ստեփաննոս Երեց, Պատմագիրք (Հանգիտագիրք), Թեհրան, 2018:
77. «Վերածնունդ», Թեհրան, 1940, թիվ 420:
78. Տէր-Յովհաննէանց Յ., Պատմութիւն Նոր Ջուղայու որ ՅԱսպահան, հ. Ա, Նոր Ջուղա, 1880, հատ. Բ, Նոր Ջուղա, 1881:
79. Տէր-Ավետիսյան Ս., Նաղիր շահի արշավանքները (ըստ Հակոբ Շամախեցոյ), Երևան, 1940:

80. Տիտանյան Ռ. Տ., Վարդան Օձնեցին պարսիկների 1785-1797 թթ. Անդրկովկաս կատարած արշավանքների մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, թիվ 3:
81. Յուցակ ձեռագրաց Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան վանաց քանդարանի, հտ. Բ., կազմեց Լ. Գ. Մինասեան, խմբագրութեամբ Օ. Ս. Եզանեանի, Վիեննա, 1972:
82. Յուցակ ձեռագրաց Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան վանաց քանդարանի, հտ. Ա., կազմ.՝ Ս. Տէր-Ավետիսեան, Վիեննա, 1970:
83. «Յուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց՝ Հ. Տաշյան, Վիեննա, 1895:
84. Փափազյան Հ. Դ., Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, «Բանբեր մատենադարանի», հատ. 3, Երևան, 1956:
85. Օրմանյան Մ., Ազգապատում, մասն Բ., Կ. Պոլիս, 1914:
86. Ашрафян К. З., Падение державы Сефевидов (1502-1722), Очерки по новой истории стран Среднего Востока, Москва, 1951.
87. Акоп Шамахеци, Походы Тамас-кули-хана (Надир шаха) и избрание его шахом, Тифлис, 1932.
88. Арунова М. Р. и Ашрафян К. З., Государство Надир-шаха Ашрафа, Москва, 1958.
89. Арабаджян А. З., Армяне Ирана, Москва, 2002.
90. Байбуртян В. А., Армянская колония Новой Джульфы в XVII веке (Роль Новой Джульфы в ирано-европейских политических и экономических связях, Ереван, 1969.
91. Бушев П. П., Посольство Артемия Волынского в Иран в 1715-1718 гг., Москва, 1978.
92. Дневник осады Испагани Афганами, веденный Петросом ди Саркис Гиланенц в 1722 и 1723 гг., Материалы для истории Персии, пер. и объяснения К. Патканова, СПб, 1870.
93. Дорошенко Е. А., Зороастрийцы в Иране (историко-этнографический очерк), Москва, 1982.

94. Иерусалимский С., Гонения на еврейскую одежду («Еврейская старина», 1912, вып. III).
95. История Ирана с древнейших времен до конца XVIII века (Пигулевская Н. В., Якубовский А. Ю. и др.), Ленинград, 1958.
96. Кучук-Иоаннесов Х. И., Армянская летопись о евреях в Персии XVII в. о мессии Саббатае-Цеви, «Еврейская старина», т. 8, Петроград, 1918.
97. Кишмишев, Походы Надир-шаха в Герат, Кандагар, Индию и события в Персии после его смерти, Тифлис, 1889.
98. Лысцов В. П., Персидский поход Петра I, 1722-1723 гг., Москва, 1951.
99. Монтескье, персидские Письма, Москва, 1956.
100. Мухаммед-Казим, Поход Надир-шаха в Индию, (Извлечение из «Тарих-и аламараи Надири), Пер. с. перс., предисл. и примеч. П. И. Петрова, Москва, 1961.
101. Семенова Л. А., Орден кармелитов как орудие проникновения европейцев в Иран, Ближний и Средний Восток, Сборник статей, Москва, 1962.
102. Тер-Аветисян С. В., Походы Тамас-Кули-хана (Надир-шаха) и избрание его шахом в описании Акопа Шамахеци, Тифлис, 1932.
103. Тер-Мкртчян Л. Х., Армения под властью Надир-шаха, Москва, 1963.
104. Шарашенидзе З. М., Иран во второй половине XVIII в., Тбилиси, 1970.
105. Эзов Г. А., Сношения Петра Великого с армянским народом (документы), СПб, 1898.
106. A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII-XVIII centuries, Vol. I-II, London, 1939.
107. Algar H., Religion and State in Iran 1785-1906. The Role of the Ulama in the Qajar Period, Berkeley-Los Angeles, 1969.
108. Baibourtian V., International Trade and the Armenian Merchants in the Seventeenth Century, New Delli, 2004.

109. Bedik P., *Cehil Sutun*, Viennae, 1678.
110. Blunt W., *Ispahan, Perle de la Perse*, Paris, 1967.
111. Bournoutian G., *The Armenian Community of Isfahan in the Seventeenth Century*, "The Armenian Review", Vol. XXIV, No 4 (Winter 1971), Vol. XXV, No 1 (spring 1972).
112. Bellan L. L., *Chah Abbas I, Sa vie, son histoire*, Paris, 1932.
113. Cosroe Chaqueri, *The Armenians of Iran*, Harvard university, 1999.
114. Gregorian V., *Minorites of Isfahan. The Armenian Community of Isfahan 1582-1722. (Studies on Isfahan, part II). "Iranian Studies"*, Vol. VII, No 3-4, (Summer-Autumn), 1974.
115. Greppin J. A. S., *The Armenians in Iran and India*, 1978, Ararat, summer, 1979.
116. Chougassian V., *The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the Seventeenth Century*, University of Pennsylvania, Atlanta, Georgia, 1998.
117. Dadoyan S. B., *The Armenians in the Medieval Islamic World*, Vol. 2, Transaction Publishers, New Brunswick, New Jersey, 2013.
118. Floor Willem, *Safavid Government institutions*, Costa Mesa, California, 2001.
119. Hasan Fasai, *History of Persia under Qajar Rulle*, London, 1972.
120. Karapetian K., *Isfahan, New Julfa. The Houses of the Armenians. Part I*, Rome, 1974.
121. Krusinski Tadeusz Juda, *The History of the Late Revolutions of Persia: Taken from the Memoirs of Father Krusinski Procurator of the Jesuits at Ispahan: who Lived Twenty Years in the Country...*, London, 1729.
122. Krusinski J. T., *The History of the Late Revolutions of Persia*, v. I-II, N. Y., 1973.
123. Lambton A., *Qajar Persia*, Austin: University of Texas Press, 1987.
124. Lockhart L., *The Fall of the Safavi Dynasty and the Afghan Occupation of Persia*, Cambridge, 1958.
125. Lockhart L., *Nadir Chah. A Critical Study Based Mainly on Contemporary Sources*, London, 1938.

126. Missionary Researches in Armenia, London, 1834.
127. Perry J. R., Karim Khan Zand. A History of Iran, 1747-1779, Chicago, 1979.
128. Savory R., Iran under the Safavids, Cambridge, 1980.
129. The Cambridge Medieval History, Vol. VI, Cambridge, 1936.
130. The Armenians of Iran. The Paradoxical Role of Minority in a Dominant Culture: Articles and Documents, ed. by Cosroe Chaqueri, Cambridge, Massachusetts, 1998.
131. Waterfield R. E., Christians in Persia, Assyrians, Armenians, Roman Catholics and Protestants, London, 1973.

Պարսկերենով

132. Ահմեդ քաջ Բախշ, Իրան դար զաման-ն Սեֆեվիյե, Թավրիզ, 1340:
133. Աբբաս Էդրալ, Թարիխն մոֆասսալ-ն Իրան ազ էսփիլա-ն մողուլ բա էնդերազ-ն դաջարի-ն, Թեհրան, 1320:
134. Հադի Հեդայաթի, Թարիխ-ն զանդի-ն, Թեհրան, 1958:
135. Մուհամմադ Փարանգ, Շահ Աբբաս-ն քարիթ, Թեհրան, 1952:
136. Մուհամմադ Ջաֆար Խուրմուզի, Թարիխ-ն դաջար, Թեհրան, 1344:
137. Մոդթաղեր Ղոլամ Հոսեյին, Նաբարդիա-ն բոգորգ-ն նաղեր շահ, Թեհրան, 1959:
138. Նասրոլլա Ֆալսաֆի, Ջենդեգանի-ն շահ Աբբաս-ն ավվալ, ջելդ-ն, 1-4, Թեհրան, 1952:
139. Նավայի Ս., Քարիմ խան-ն զանդ, Թեհրան, 1965:
140. Նաֆիսի Սայիդ, Ախերին յադիգար-ն Նադիր շահ: «Մաջալլեի շարդ», Թեհրան, 1300:
141. Շամիմ Ալի Ասդար, Իրան դար դովրե-ն սալթանաթ-ն Ղաջարի-հա, Թեհրան, 1342:
142. Ռաշիդ Յասեմի, Թարիխ-ն Իրան, Թեհրան, 1322:
143. Ռային Իսմայիլ, Իրանյան-ն արմանի, Թեհրան, 1970:
144. Ռաջարի Պ., Քարիմ խան վա զաման-ն ու, Թեհրան, 1976:
145. Սարդադուր Աբու Թորաթ, Թարիխ-ն նեզամի վա սիասի-ն շահ Աֆշար, Թեհրան, 1975:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ստեփաննոս Երեց Տերտերյանը (Հազարչրիբեցին) և նրա «Պատմագիրքը» («Հանգիտագիրքը»)	3
«Պատմագրքում» («Հանգիտագրքում») պարունակվող տեղեկությունները Իրանի և իրանահայ համայնքի վերաբերյալ	27
Օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ ցուցակ	113

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

**ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵՐԵՅ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ
(ՀԱԶԱՐՁՐԻԲԵՑՈՒ)**

«ՊԱՏՄԱԳԻՐՔԸ» («ՀԱՆԳԻՏԱԳԻՐՔԸ»)

**ՈՐՊԵՍ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ
XVII-XVIII ԴԱՐԵՐԻ ԻՐԱՆԻ ԵՎ
ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Տպագրված է «ՎԱՌՄ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Տիգրան Մեծի 48, բն. 43

Ստորագրված է տպագրության՝ 10.08.2020:

Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 7.75:

Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն

Ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

www.publishing.am



ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2020
publishing.ysu.am